

ՆԵՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Ձեռնարկ մանկավարժների համար

ՆԵՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ
մանկավարժների համար



Հանրապետական մանկավարժաինոգերանական կենտրոն
ԵՐԵՎԱՆ 2022

Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խաղեր և վարժություններ, Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2022, 215 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ԿԳՄՍ նախարարի կողմից՝ որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Ա.Հ.Սվաջյան

Գրախոսներ՝ մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Ա.Մարության

մ.գ.թ., դոցենտ Ս.Ս.Մուրադյան

Հեղինակներ՝

Սվաջյան Ա.Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ադամյան Հ.Ա.

Օհանյան Հ.Վ.

Թադևոսյան Է.Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու

Բաբայան Լ.Ա., մանկավարժական գիտությունների թեկնածու

Ազարյան Ռ.Ն., մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուրադյան Ս.Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ազատյան Թ.Յու., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հարությունյան Մ.Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու,

դոցենտ

Մանուկյան Ա.Տ., հոգեբանական գիտությունների թեկնածու

Խմբագիր՝ Պապյան Մ.Ռ.

Համակարգչային նկարագրողում՝ Ստեփանյան Ա.Ռ.

Համակարգչային ձևավորում՝ Դավթյան Հ.Լ., Սողոմոնյան Մ.Հ.

Սույն ձեռնարկի նպատակը նախադպրոցական ուսումնական

հաստատությունների մանկավարժներին ներառական կրթության

իրականացման գործընթացում մեթոդական և գործնական աջակցության

տրամադրումն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսուցում և ներառում խաղի միջոցով	5
Խոսքի զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ	30
Լսողական ընկալման զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ	70
Տեսողական ընկալման, շոշափելիքի, տարածական կողմնորոշման զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ	103
Մտավոր զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ.....	133
Շարժունակության զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ	153
Հուզական զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ.....	179

Հարգելի՛ մանկավարժ,

սույն ձեռնարկը նախատեսված է ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար: Այն նախորդ՝ «Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» մեթոդական ուղեցույց ձեռնարկի տրամաբանական շարունակությունն է, որն այս անգամ ներկայացված է գործնական աշխատանքների՝ խաղերի և վարժությունների համակարգված ամբողջությամբ:

Ձեռնարկում ներառված են սոցիալ-մշակութային տարբեր խմբերի, խոսքի, լսողության, տեսողության, մտավոր զարգացման, շարժունակության, վարքային և հուզական խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան խաղերի և վարժությունների նկարագրեր՝ հստակ սահմանված նպատակներով, անհրաժեշտ նյութերով, ինչպես նաև՝ մեթոդական ցուցումներով: Յուրաքանչյուր ենթաբաժնին կից կա գրականության ցանկ, որի միջոցով կարող եք հավելյալ տեղեկատվություն ստանալ և խաղերի ու վարժությունների միջոցով համալրել Ձեր կողմից իրականացվող գործնական աշխատանքները:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՆԵՐԱՌՈՒՄ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

*«... խաղը մի հեշտ ու հաճելի միջոց է, որ նպաստում է մարդու
թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր և թե՛ հոգևոր-բարոյական
զարգացմանը»:
Հովհ. Թումանյան*

Ինչու է կարևոր սովորել և զարգանալ նախադպրոցական տարիներին

Բազմաթիվ գիտական հետազոտություններ ապացուցել են, որ մարդու զարգացման ամենակարևոր ժամանակահատվածներից մեկը ծննդից մինչև 5 տարեկան ժամանակահատվածն է, երբ գլխուղեղի 85%-ը զարգացած է լինում (Courchesne et al., 2000; Lenroot and Giedd, 2006): Չնայած այն հանգամանքին, որ մարդը սովորում է ողջ կյանքի ընթացքում, այնուամենայնիվ, ա՛յն արագությամբ և արդյունավետությամբ, ինչպես սովորում է վաղ մանկության տարիներին՝ ուրիշ ոչ մի տարիքում տեղի չի ունենում:

Նախադպրոցական կրթությունն իրականացվում է վաղ մանկության ժամանակաշրջանում, երբ նախադրյալներ են ստեղծվում հետագա ամբողջ կյանքի և, մասնավորապես, դպրոցական կրթության բարեհաջող ընթացքի համար: Չնայած որ խաղը առաջատար գործունեություն է համարվում նախադպրոցական տարիքում, որպես արդյունավետ ուսուցման մեթոդ խորհուրդ է տրվում այն կիրառել երեխայի ուսումնառության ողջ ընթացքում:

Նախադպրոցական տարիքը բաժանվում է մի քանի տարիքային շրջափուլերի, որոնցից յուրաքանչյուրի ժամանակ խաղն ունենում է այդ տարիքին բնորոշ դրսևորումներ: Օրինակ, վաղ մանկության ժամանակաշրջանում՝ մինչև երեք տարեկանը երեխան ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերում խաղալիքների և խաղի հանդեպ, սակայն այս տարիքում դեռևս խաղային գործունեությունը շատ

պարզունակ է և առավելապես կրում է պարզ և կրկնվող գործողությունների բնույթ (Goncu, A., Gaskins, S. 2007): Բուն նախադպրոցական տարիքում՝ 3-5 տարեկանում խաղային գործունեությունն ակտիվ զարգանում է, ինչի արդյունքում ոչ միայն փոխվում են երեխաների խաղալիքների հետ կատարվող գործողությունները, դրանց կիրառման ձևերը, այլև, խաղը որպես գործընթաց, փոխվում է որակապես, ավելանում են սյուժե, դերեր, կանոններ, երևակայական իրավիճակներ, խաղալիք-փոխարինողներ և այլն (Casey, T. 2010):

Այս տարիքային փուլում երեխաները սովորում են կյանքի կարևոր դասեր և ձևավորում են բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են հանդուրժողականությունը, համբերությունը,



համառությունը, կարեկցանքը, բարությունը և հարգանքը: Այս շրջանը նաև երեխաների խոսքի և լեզվի, սոցիալ-հուզական ու ճանաչողական հմտությունների, կարողությունների ինտենսիվ

զարգացման փուլ է: Այս ժամանակահատվածում երեխան սովորում և զարգանում է ոչ միայն բուն նախադպրոցական կրթության շրջանակներում կազմակերպված միջոցառումների և պարապմունքների, այլև՝ խաղի, երգելու, հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցվելու միջոցով: Նախադպրոցական կրթության շրջանակներում թե՛ այս տարիքի երեխաների զարգացումը, թե՛ դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը մշտապես գտնվում են մանկավարժների և հոգեբանների ուշադրության կենտրոնում, ովքեր, փորձելով գտնել նոր մեթոդներ ու հնարներ, ձգտում են դրանց միջոցով առավելագույնս օգտագործել այս տարիքի փոքրիկներին բնորոշ հսկայական ներուժը (Goncu, A., Gaskins 2012):

■ ■ ■ Խաղը որպես ուսուցման կարևոր մեթոդ



Խաղը ամենակարևոր միջոցներից մեկն է, որով երեխաներն ստանում են շրջապատող աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Այդ իսկ

պատճառով, նախադպրոցական կրթության ծրագրերի հիմքում ընկած է խաղը՝ դրա համար անհրաժեշտ միջոցներով և պայմաններով: Անվտանգ և սիրով լի միջավայրում կազմակերպված խաղը զարգացնում է երեխայի գլխուղեղի աշխատանքը՝ ամուր հիմք ստեղծելով ողջ կյանքի համար: Խաղը նաև երեխայի իրավունքն է. այն էական նշանակություն ունի երեխայի մտավոր, ֆիզիկական, սոցիալական և հուզական զարգացման համար: Խաղի վրա հիմնված կրթությունը երեխաների մոտ ձևավորում է համագործակցային կարողություններ, ստեղծագործ միտք ու անսպառ հետաքրքրասիրություն:

Խաղը նախադպրոցական տարիքում երեխաներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել և ճանաչել շրջապատող աշխարհը, ինչպես նաև՝ զարգացնել երևակայությունն ու ստեղծագործական ունակությունները: Խաղի միջոցով փոքրիկները սովորում են շփվել, համագործակցել, ընկերներ ձեռք բերել, տարբեր տեսակետներ ունենալ և արտահայտել դրանք, հետևել սոցիալական միջավայրում ընդունված վարքի կանոններին և այլն (Fromberg, D. P., & Bergen, D. 2006):

Խաղի կարևոր առանձնահատկություններից մեկը երեխաների ազատ գործելու և ինքնուրույն փորձ ձեռք բերելու հնարավորությունն է, ինչի միջոցով զարգանում է նրանց նախաձեռնողականությունը, որոշումներ կայացնելու և ինքնուրույն ընտրություն կատարելու կարողությունները: Փոքր երեխաների համար խաղն իմաստավոր,

ակտիվ, հաճելի և ներքին դրդապատճառ ունեցող փորձ և սովորելու միջոց է (Casey, T. 2005):

Խաղը սովորելու և սովորեցնելու համար ունի մեծ հնարավորություններ, որոնք ամբողջությամբ կիրառելի են ներառականության համատեքստում: Ակտիվ խաղը հնարավորություն է ստեղծում ցանկացած, այդ թվում՝ զարգացման այս կամ այն առանձնահատկություններ ունեցող երեխայի զարգացման, առողջության, հուզական բարեկեցության և սոցիալական փոխհարաբերությունների զարգացման համար: Ցավոք, երբեմն ակտիվ ու անկախ խաղի հնարավորությունները ոչ միշտ են հասանելի բոլոր երեխաներին: Հաճախ խաղային միջավայրում առկա խոչընդոտները պատճառ են հանդիսանում որոշ երեխաների ոչ լիարժեք խաղի և խաղային գործունեության ընթացքում անբավարար մասնակցության համար:

Երեխաները խաղահրապարակ չեն բերում իրենց հաշմանդամությունը կամ դժվարությունները, դրանք ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ նրանք բախվում են իրենց մասնակցության խոչընդոտներին: Երեխայի խաղալու իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա ակտիվ և մասնակցային խաղալու հնարավորություն՝ անկախ զարգացման առանձնահատկություններից: Խաղալու խոչընդոտները կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ սոցիալական միջավայրերի հետ կապված:

Ներառական կրթությունը ենթադրում է մանկավարժների և, առհասարակ, մեծահասակների կողմից առավելագույն աջակցություն, ծնողական համայնքի հետ համագործակցության ավելի բարձր մակարդակ, արդյունավետ թիմային աշխատանք, որոնք միտված կլինեն երեխայի շահերի և կրթության իրավունքի պաշտպանությանը:

Ի հակադրություն խոչընդոտներով լի միջավայրի, ներառական միջավայրում իրականացվող խաղը հնարավորություններ է բացում բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց

առանձնահատկություններից: Ներառական խաղ չի նշանակում, թե յուրաքանչյուր բաղադրիչ կամ գործողություն մատչելի է յուրաքանչյուր երեխայի համար, այլ նշանակում է, որ ընդհանուր խաղին հավասարապես մասնակցելու և սեփական ներդրում ունենալու հնարավորություն ունի յուրաքանչյուր երեխա:

■ ■ ■ **Խաղը հնարավորություններ է բացում բոլոր երեխաների համար՝ անկախ զարգացման առանձնահատկությունների կամ դժվարությունների առկայությունից:**

Նախադպրոցական տարիքից ներառման գործընթացի մեկնարկը նպաստում է իրական, կայուն ընկերական հարաբերությունների զարգացմանը, որը կառուցվում է փոխադարձ հետաքրքրության, հանդուրժողականության, բազմազանության ընդունման և համատեղ գործունեություն ծավալելու ընդհանուր փորձի հիման վրա: Յուրաքանչյուր երեխա ունի որոշակի կարողություններ, հնարավորություններ և հետաքրքրություններ, որոնք մեծահասակի ճիշտ ուղղորդմամբ և աջակցությամբ կարող են զարգանալ կրթական համայնքում՝ ապահովելով յուրաքանչյուրի ուրույն տեղն ու դերը:

Ներառական կրթության իրականացման գործընթացում հնարավորություն է ստեղծվում տարբեր ազգությունների, լեզուների, մշակութային տարբեր արժեքների և ազգային սովորույթների, հաշմանդամության կամ զարգացման դժվարությունների առկայության դեպքում՝ ապահովել բոլոր երեխաների սոցիալականացումը:



Քանի որ նախադպրոցական տարիքում երեխաների ուսուցան և զարգացման համար հիմնական միջոցը խաղային գործունեությունն է, մանկապարտեզներում բազմազանությունների ընդունման և դրական փոխհարաբերությունների կառուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ևս մեծ դեր ունեն խաղ-վարժությունները: Ներառական խաղը չի ենթադրում, որ տվյալ միջավայրում ամեն ինչ հասանելի է յուրաքանչյուրին, սակայն, այդ խաղում յուրաքանչյուրն ունի իր դերը և մասնակցության իր չափաբաժինը, և բոլորը միասին հետևում ու ձգտում են միևնույն նպատակին: Այս համատեքստում երեխաներն իրենց զգում են առավել ազատ ու ակտիվ թե՛ ֆիզիկապես և թե՛ հաղորդակցման ու միջանձնային փոխհարաբերությունների կառուցման գործընթացում:

Ներառումը կարևոր է, քանի որ այն նպաստում է բոլոր երեխաների համար հավասար հնարավորությունների ձևավորմանը: Ներառական միջավայրը աջակցում է բոլոր երեխաներին զարգացնելու կարևոր սոցիալական և հուզական հմտություններ, գնահատելու մարդկային բազմազանությունը (Odom, S. L., & Diamond, K. E. 1998):

Այսպիսով, ներառման համար հիմնարար գործոն են երեխաների խաղալու և խաղի միջոցով սովորելու հնարավորությունները (Casey, T. 2005):

Խաղում ենք միասին

Երբ խոսում ենք դերային խաղերի մասին, սովորաբար պատկերացնում ենք երեխաների, որոնք հանդես են գալիս օդաչուի, բժշկի, շինարարի, խոհարարի, հաճախորդի կամ այլ դերերով: Ցանկացած խաղի կազմակերպման դեպքում մանկավարժը կարող է ազատ և ստեղծագործաբար վերակառուցել խաղի ընթացքը: Կարևոր է հաշվի առնել, թե ինչն է առավել խթանում երեխաների հետաքրքրությունն ու ուշադրությունը: Ձեռնարկի այս բաժնում

ներկայացվող խաղ-վարժություններն առավել միտված են սոցիալ-մշակութային, տարբեր ազգությունների երեխաների հետ շփման, հաղորդակցման և համագործակցության խթանմանը:

Հարկ է նշել, որ ներկայացված խաղերը միշտ չէ, որ մրցակցային են: Բնականաբար, առավել շատ միավոր հավաքած կամ հրահանգները ճիշտ կատարած կողմն է համարվում



հաղթող, սակայն հաղթող կամ պարտվող ճանաչելու մոտեցումը թողնվում է մանկավարժին: Կան խաղեր, որոնք ավելի շատ զվարճանքի բնույթ են կրում, և այս դեպքում կարիք չի լինում մեկ որոշակի երեխայի առանձնացնելը մյուսներից:



Կինոթատրոնում

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, ճանաչել և արժևորել ազգային և օտարազգի ստեղծագործությունները, դաստիարակել միմյանց լսելու և ուրիշի խոսքը հարգելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. աթոռակներ, պրոյեկտոր, համակարգիչ, պատերին փակցված հայտնի մուլտֆիլմերի հերոսների նկարներ, առանձին դրված փոքրիկ սեղան և աթոռ: (Պրոյեկտորի բացակայության դեպքում կարելի է օգտագործել համակարգիչ):

Ընթացք

Մասնակիցներին բաժանել 2 խմբի և աթոռակները դասավորել այնպես, որ ստացվի 2 շարք: Առանձին սեղանի մոտ աթոռակին նստում է երեխաներից մեկը՝ որպես տոմսվաճառ: Երեխաները մոտենում են վերջինիս, վերցնում տոմսը, որի վրա պայմանական նկարված է, օրինակ՝ նապաստակ կամ արջուկ, և նստում համապատասխան շարքում: Սկսվում է մուլտֆիլմերի հատվածային դիտումը նախապես հավաքագրված հայտնի հայկական, ռուսական, եվրոպական, ամերիկյան կամ այլ երկրների մուլտֆիլմերից (կարելի է ընտրել, օրինակ՝ «Նաղաշն ու լավաշը», «Պույ-պույ մկնիկը», «Գտնված

երագ», «Պինգվինաշեն», «Փոքրիկը և Կառլսոնը», «Դե սպասիր», «Թումը և Ջերրին» և այլն): Երեխաները դիտում են և անվանում մուլտֆիլմը: Խմբում քննարկելուց հետո կարող են պատմել այուժեն, նշել հերոսներին, միասին երգել մուլտֆիլմում հնչող երգը, անվանել իրենց սիրած հերոսին: Հաղթում է այն թիմը, որն առաջինը կամ ավելի շատ տեղեկատվություն է ներկայացնում տվյալ մուլտֆիլմից՝ նշելով նաև, թե որ երկրում է ստեղծվել կամ ինչ լեզվով է այն:



Շրջայց պատկերասրահում

Նպատակ. խթանել ստեղծագործական մտածողությունը, զարգացնել խմբում աշխատելու կարողությունը, ինքնաճանաչումը, բանավոր խոսքը:

Անհրաժեշտ նյութեր. նկարչական թղթեր, գունավոր մատիտներ, ջրաներկեր, ամրակներ:

Ընթացք

Խաղը կարող է լինել նախորդի շարունակությունը: Այս անգամ երեխաները բաժանվում են երեք հոգուց բաղկացած խմբերի:

Յուրաքանչյուր խումբ նստում է առանձին սեղանի շուրջ և մանկավարժի ուղղորդմամբ



ընտրում որևէ մուլտֆիլմ ու նկարում ամենաշատ դուր եկած հատվածը: Կարևոր է, որ մասնակցեն բոլորը. ընտրեն գույները, նկարեն և այլն: Աշխատանքներն ավարտելուց հետո խմբերը մանկավարժի օգնությամբ փակցնում են նկարները պատին, և յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը՝ նշելով, թե որ երկրում է տվյալ մուլտֆիլմն ստեղծվել, որ ազգը կամ ազգերն են ապրում այդ երկրում և ինչ լեզվով են խոսում այնտեղ: Վերջում երեխաներն ազատ շրջում են «պատկերասրահում», դիտում ընկերների աշխատանքները և, իհարկե, միասին լուսանկարվում:



Ծանոթություն

Նպատակ. զարգացնել խոսքը, ուշադրությունը, միջանձնային փոխհարաբերություններն ու հաղորդակցման հմտությունները:

Ընթացք

Երեխաները շրջան են կազմում: Յուրաքանչյուր երեխա ուշադիր լսում է իրենից աջ կանգնած խաղընկերոջը, որը մի քանի նախադասությամբ պատմում է իր մասին: Այնուհետև սկսվում է խաղի բուն ընթացքը: Առաջին մասնակիցը նախ ասում է իր անունը, այնուհետև՝ ներկայացնում արդեն իսկ ծանոթ ընկերոջը: Մեկ շրջանն ավարտելուց հետո խաղը շարունակվում է՝ այս անգամ արդեն յուրաքանչյուր երեխա մեկ դրական նկարագրությամբ ներկայացնում է ձախ կողմի խաղընկերոջը:



Իմ անունն է

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, խթանել համագործակցելու հմտությունները, վանկային վերլուծություն կատարելու կարողությունը:

Ընթացք

Երեխաները շրջան են կազմում: Առաջին մասնակիցն ասում է իր անունը, իսկ խումբը կրկնում է՝ յուրաքանչյուր վանկի համար մեկ ծափ տալով, օրինակ՝ Վար-դան (2 ծափ), Ա-րե-վիկ (3 ծափ) և այլն: Կարևոր է նաև, որ երեխաները հավասար ծափ տան՝ կրկնելով վանկատված անվանումները: Այն սանը, ով ետ կմնա կամ արագ կասի անվանումը, պետք է նաև ասի իր քաղաքի/երկրի/ազգության անվանումը:

Ծափ տալու փոխարեն մանկավարժը կարող է առաջարկել այլ գործողություններ, օրինակ՝ ոտքով գետնին հարվածել, գլուխը շարժել և այլն:

Իմ սիրելի...

Նպատակ. զարգացնել լսելու և հաղորդակցվելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. կարճ նախադասություններ պարունակող քարտեր:

Ընթացք

Մանկավարժը զամբյուղում դնում է քարտեր: Դրանց վրա գրված են, օրինակ, հետևյալ նախադասությունները՝ «Իմ սիրած միրգը», «Իմ սիրած երգը», «Իմ սիրած երաժիշտը», «Իմ սիրած մուլտֆիլմը», «Իմ սիրած տարվա եղանակը», «Իմ սիրած զբաղմունքը», «Իմ սիրած հեքիաթը», «Ես դառնալու եմ...», «Իմ գնացած ամենազվարճալի վայրը», «Կցանկանալի ճանապարհորդել և տեսնել ... երկիրը կամ քաղաքը» և այլն: Մանկավարժը հերթով մոտեցնում է քարտերով զամբյուղը յուրաքանչյուր երեխայի: Հանելով քարտը՝ մանկավարժը կարդում է նախադասությունը: Երեխան ավարտում է նախադասությունը, իսկ հաջորդ մասնակիցն այդ նախադասությանը վերաբերող հարց է տալիս, օրինակ՝ «Իսկ ինչու՞ ես դու սիրում այդ երաժշտին: Խաղը կարելի է կրկնել այնքան ժամանակ, մինչև խմբի բոլոր երեխաները կազմեն բոլոր նախադասությունները և պատասխանեն հարցերին:

Մեր ընդհանրությունները

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, խթանել միմյանց ճանաչելու, ընդհանրություններ գտնելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. միևնույն գույնի թղթից պատրաստված շերտիկներ:

Ընթացք

Մանկավարժը և երեխաները նստում են շրջանաձև: Մանկավարժն սկսում է թվարկել այնպիսի նախասիրություններ կամ իրողություններ, որոնք ունեն բոլոր երեխաները, օրինակ՝ «Ես սիրում եմ խաղալ», «Ես ունեմ ընկեր», «Ես հաճախում եմ մանկապարտեզ», «Իմ պարապմունքներն ու խաղերը հետաքրքիր են» և այլն:

Յուրաքանչյուր հնչած նախադասությունից հետո այն երեխաները, որոնք ունեն նույն նախասիրությունը, բարձրացնում են գունավոր թղթերը, իսկ նրանք, որոնք չունեն տվյալ նախասիրությունը՝ չեն բարձրացնում: Այս կերպ՝ երեխաներին պարզ է դառնում, որ իրենք շատ ընդհանրություններ ունեն: Շարժողական կամ այլ դժվարություններ ունեցող երեխաներին գործողություններ կատարելու համար կարող է օգնել կա՛մ մանկավարժը կա՛մ խաղընկերը:



Ես ունեմ իմ տեսակետը

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, ձևավորել միմյանց ճանաչելու, ուրիշի կարծիքն ըմբռնելու և արժևորելու կարողությունը:

Ընթացք

Մանկավարժն սկսում է պատմել որևէ պատմվածք կամ հեքիաթ, այնուհետև առաջադրում, որ յուրաքանչյուր երեխա մտածի և ներկայացնի այդ պատմության ավարտը: Երեխաներն ուշադիր լսում են միմյանց, իսկ մանկավարժը վերջում ամփոփում է նրանց պատմությունների տարբերություններն ու նմանությունները՝ արժևորելով յուրաքանչյուրի տեսակետն ու ստեղծագործական միտքը: Նա կարող է ամփոփել խաղը հետևյալ կերպ. «Չնայած մենք ունենք շատ ընդհանրություններ, սակայն միևնույն հարցին կարող ենք տալ տարբեր պատասխաններ»:

Նույն խաղի ընթացքը կարելի է կազմակերպել՝ որևէ պատմվածքի կամ հեքիաթի սկիզբը ներկայացնելով. երեխաները միմյանց հերթագայելով շարունակում են պատմությունը և միասին կառուցում ավարտը:



Ո՞վ է պատկերված նկարում

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, ճանաչել հայտնի մարդկանց, ձևավորել և արժևորել մշակութային արժեքներ:

Անհրաժեշտ նյութեր. հայտնի հայազգի և արտասահմանյան գրողների, երգահանների, նկարիչների, դերասանների նկարներ

(օրինակ՝ Հ. Այվազովսկու, Ա. Խաչատրյանի, Կոմիտասի, Շ. Ազնավուրի, Ա. Պուշկինի, Դ. Ռեդկլիֆի, Ջ. Չանի, Մոցարտի նկարները): Որևէ գիրք, ալբոմ կամ այլ հետաքրքիր իր՝ մրցանակի համար:

Ընթացք

Մանկավարժը նախապես մի քանի պարապմունքների ընթացքում երեխաներին պատմում է աշխարհահռչակ մարդկանց մասին՝ ցույց տալով նաև նրանց նկարները:

Խումբը բաժանվում է երկու թիմի: Մանկավարժը ցույց է տալիս նկարը և հարցնում, թե ով է պատկերված այնտեղ, որ երկրից է և ինչով է հայտնի: Այն թիմը, որն առաջինն է տալիս ամբողջական ճիշտ պատասխանը, ստանում է միավոր: Առավելագույն միավորներ վաստակած թիմը հաղթող է ճանաչվում, որին մանկավարժը տալիս է մրցանակ:

16



Գուշակի՝ր, թե ով եմ ես

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, ճանաչել և անվանել գույները, ճանաչել ընկերոջը:

Ընթացք

Խումբը բաժանվում է երկու թիմի: Առաջին թիմը նստում է աթոռակներին, որոնք շարված են դեմքով դեպի պատը: Երկրորդ թիմի մասնակիցները հերթով գալիս են խաղասենյակ կողքի սենյակից, կանգնում և նկարագրում են իրենց, օրինակ՝ «Ես ունեմ երկար, բաց գույնի մազեր, կապույտ աչքեր, հագել եմ կարմիր կոշիկներ, սպիտակ զգեստ և այլն»: Թիմի անդամները պետք է գուշակեն, թե իրենց որ ընկերն է՝ լսելով նրա ձայնը և նկարագրությունը: Հաղթում է այն թիմը, որն ավելի շատ է տալիս ճիշտ պատասխաններ:





Ծանոթացի՛ր, սա իմ մոլորակն է

Նպատակ. զարգացնել հաղորդակցական հմտությունները և սոցիալական կանոններին հետևելու կարողությունը:

Ընթացք

Խումբը բաժանվում է երկու թիմի: Առաջին թիմի մասնակիցները հանդես են գալիս որպես Երկիր մոլորակի բնակիչներ, իսկ երկրորդ թիմը՝ որպես Լուսնից եկած հյուրեր: Բնականաբար, վերջիններս ոչինչ չգիտեն մեր մոլորակի մասին: Նրանք չգիտեն, թե ինչպես են ուտում ապուրը, ինչ պետք է ասել միմյանց հանդիպելիս կամ հրաժեշտ տալիս, ինչի համար է ակնոցը, ինչպես բացել դուռը և այլն: Այս և նմանատիպ հարցերին խոսքով, ժեստերով, դիմախաղով կամ այլ տարատեսակ գործողություններով պատասխանում են առաջին թիմի մասնակիցները:



Եվ գալիս է գնացքը

Նպատակ. զարգացնել խոսքը, պատկերավոր մտածողությունը:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք գնացք, հայերեն տառեր:

Ընթացք

Երեխաները նստում են շրջանաձև դասավորված աթոռներին: Խաղավարը վարում է խաղալիք գնացքը և ասում՝ «Գալիս է գնացքը՝ բեռնված Ա տառով սկսվող բառերով»: Գնացքը կանգ է առնում, և խաղավարը ցույց է տալիս Ա տառը: Այնուհետև երեխաներն Ա տառով սկսվող բառեր են ասում: Եթե խմբում կա օտարերկացի, կարող է այդ տառով սկսվող բառեր ասել իր մայրենի լեզվով և թարգմանել դրանք հայերեն:

Օրացույց

Նպատակ. զարգացնել հաշվելու կարողությունները, ուշադրությունը, շփման հմտությունները:

Ընթացք

Առաջին երեխան ասում է իր ծննդյան ամսաթիվը և գալիս առաջ, այնուհետև մյուս երեխաները հերթով ասում են իրենց ծննդյան ամսաթիվը և, ըստ թվերի աճողական հերթականության, շարվում կողք-կողքի: Այսպիսով՝ ծննդյան թվերի փոքրից մեծ հաջորդականությամբ, երեխաները շարք են կազմում: Վերջում երեխաները շրջան են կազմում և ձեռք-ձեռքի տված երգում իրենց ծանոթ որևէ երգ:

Նույնը կարելի է իրականացնել՝ ըստ ծննդյան ամիսների:

Խաղում կարևորվում են մանկավարժի անմիջական ուղղորդումները:

Խաղը նպատակահարմար է կազմակերպել ավագ խմբերում:

18

Հոդ, ջուր, օդ

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, արագ կողմնորոշումը, շփման հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. թեթև գնդակ:

Ընթացք

Երեխաները կանգնում են շրջան կազմած: Առաջին մասնակիցը գնդակը նետում է որևէ խաղընկերոջ՝ արտասանելով հոդ, ջուր, օդ բառերից որևէ մեկը: Նա, ով բռնում է գնդակը, պետք է անվանի որևէ կենդանի, որն ապրում է տվյալ միջավայրում, օրինակ՝ եթե հնչում է «ջուր» բառը, գնդակը բռնողն ասում է «ձուկ», և այդպես շարունակ: Յուրաքանչյուր կենդանու անունը հնչելուց հետո երեխաները միասին ցույց են տալիս տվյալ կենդանուն բնորոշ որևէ շարժում կամ ասում որևէ բնութագրող բառ: Մանկավարժը պետք է հետևի, որ բոլոր երեխաներին գնդակը հասնի և նրանցից յուրաքանչյուրը խաղին մասնակցի թե՛ անհատապես, թե՛ խմբում:

Ցուցումներ

Եթե խմբում կան շարժունակության կամ այլ դժվարություններ ունեցող երեխաներ՝ նրանց օգնում են խաղընկերները:

Տարեդարձ

Նպատակ. զարգացնել խոսքը, հիշողությունը, շարժունակությունը, շփման հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք խոհանոցային պարագաներ, փոքրիկ տորթ, մումեր:

Ընթացք

Սովորաբար երեխաներից որևէ մեկի ծննդյան տարեդարձին ընկերները երգում են «Տարեդարձ է այսօր» և շնորհավորում հոբելյարին: Առաջարկվող այս շնորհավորանքն առավել շարժողական գործընթաց է: Երեխաները խաղալիքներով ցույց են տալիս, թե ինչպես են միասին տորթ պատրաստում և շնորհավորում իրենց ընկերոջը՝ արտասանելով նախապես սովորած ոտանավորը (ներկայացված է ներքևում): Բոլոր երեխաները պետք է ներառված լինեն խաղում և միասին արտասանեն:

*Քո ծննդյան մեծ տոնին,
(հոբելյարի անունը), քեզ ենք նվիրում
Մեր պատրաստած շատ համեղ,
Համեղ տորթը վառվռուն:*

Պատմվածք

Նպատակ. զարգացնել խոսքը, տրամաբանությունը, ստեղծագործական և պատկերավոր միտքը, հաղորդակցման հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. տրամաբանորեն միմյանց հետ կապված նկար-քարտերի 4 կամ 5 հավաքածու:

Ընթացք

Խումբը բաժանել 4 կամ 5 թիմի՝ ապահովելով ուժերի

համամասնություն: Յուրաքանչյուր թիմին մանկավարժը տալիս է խառը դասավորված նկար-քարտեր և առաջադրում, որ նկարները դասավորեն հերթականությամբ, պատմվածք կամ հեքիաթ հորինեն և վերնագրեն այն: Առաջադրանքի համար մանկավարժը սահմանում է 10 րոպե և հետևում, որպեսզի թիմերում բացառապես բոլոր երեխաներն ակտիվ մասնակցություն ունենան: Վերջում, պատմվածքը ներկայացնելիս, թիմակիցները կարող են լրացնել ընկերոջ միտքը:



Բառ-պատկեր

Նպատակ. զարգացնել խոսքը, տրամաբանությունը, ստեղծագործական և պատկերավոր միտքը, հաղորդակցական հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. նկար-քարտեր, որոնց վրա պատկերված է մեկ առարկա, նկարչական թուղթ, մատիտներ:

Ընթացք

Խումբը բաժանել 4 հոգուց բաղկացած թիմերի: Յուրաքանչյուր թիմին մանկավարժը բաժանում է քարտ, որի վրա պատկերված է մեկ առարկա կամ անձ: Թիմը պետք է տվյալ պատկերի շուրջ կատարի նկարագարումներ, առարկան ներկայացնի համապատասխան միջավայրում և պատմություն հորինի: Մանկավարժն ընթացքում հետևում է, որ մասնակցեն բոլոր երեխաները: Յուրաքանչյուր թիմի պատմության ներկայացման ժամանակ, որտեղ արդեն իսկ տարբեր նկարներ կան, նշվում է, թե ո՛ր աշխատանքը ում կողմից է կատարվել:



Ի՞նչ է սա

Նպատակ. զարգացնել խոսքը, արագ կողմնորոշվելու հատկությունները, հաղորդակցական հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. նկար-քարտեր, որոնց վրա պատկերված է մեկ առարկա, թեթև գնդակ:

Ընթացք

Խումբը բաժանել 2 թիմի: Յուրաքանչյուր թիմ նստում է իրար ետևից

շարած աթոռակների վրա: Մանկավարժը յուրաքանչյուր երեխայի բաժանում է մեկ քարտ: Խաղն սկսվում է, երբ թիմերի ավագները հարցնում են իրենց առաջին մասնակցին՝ «Ի՞նչ է սա»: Եթե մասնակիցը ճիշտ է պատասխանում հարցին, նրան է փոխանցվում գնդակը: Նույն գործողությունը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև վերջին շարքում նստած մասնակիցը կպատասխանի հարցին և գնդակը արագ կփոխանցի առջևում կանգնած թիմի ավագին: Հաղթում է խաղն առաջինն ավարտած թիմը:

Ցուցումներ

Խաղին պետք է մասնակցեն բոլոր երեխաները: Անհրաժեշտության դեպքում՝ խաղի կանոնները պետք է հարմարեցվեն երեխաների կարիքներին և առանձնահատկություններին:



Ասա՛ անունդ

Նպատակ. զարգացնել հաղորդակցման հմտությունները, իմանալ այլ երկրների ժեստերի նշանակությունը:

Ընթացք

Մանկավարժը հերթով մոտենում է յուրաքանչյուր աշակերտի և հարցնում, օրինակ՝ «Քո անունը Մարի՞ է»: Եթե անունը ճիշտ է ասվում, երեխան ասում է «այո» և գլխով վերևից ներքև շարժումով հաստատում հարցը, իսկ եթե սխալ է ասվում, ինչը մանկավարժն ի դեպ միտումնավոր է անում, պատասխանում է «ոչ» և գլխով ձախից աջ շարժում կատարում: Վարժությունն ավելի զվարճալի է այն դեպքում, երբ խմբում կան ազգությամբ բուլղարացի, հնդիկ կամ հույն երեխաներ: Նշված երկրներում գլխի շարժումները հակառակ նշանակությունն ունեն: «Այո»-ի դեպքում գլուխը տարուբերում են, իսկ «ոչ»-ի դեպքում՝ շարժում վերևից ներքև:

Ցուցումներ

Եթե վերոնշյալ երկրներից երեխաներ չկան խմբում, ապա մանկավարժը կարող է պատմել այդ մասին և պատմությունը խաղի վերածել:



Միրգ, բանջարեղեն, ըմպելիք

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, արագ կողմնորոշվելու հատկությունները, հաղորդակցական հմտությունները, սովորել սննդի հետ կապված նոր բառեր:

Անհրաժեշտ նյութեր. թեթև գնդակ:

Ընթացք

Երեխաները կանգնում են շրջան կազմած: Կենտրոնում խաղավարն է (սկզբում կարող է լինել մանկավարժը): Խաղավարը, գնդակը նետելով որևէ մասնակցի, ասում է՝ «միրգ», գնդակը



բռնողը պետք է ասի որևէ մրգի անուն: Եթե սխալ է ասում, ինքն է դառնում խաղավարը, մինչև հաջորդ մասնակցի սխալվելը:

Եթե խմբում կա(կան) օտարազգի կամ այլ երկրներից երեխաներ, կարող են անվանել անծանոթ մրգերի, բանջարեղենի կամ ըմպելիքի անուններ: Այստեղ մանկավարժը մտապահում կամ զրի է առնում այդ անվանումները և խաղից հետո երեխաներին սովորեցնում:

Ցուցումներ

Եթե խմբում կան երեխաներ, որոնք խոսելու կամ շարժողական դժվարություններ ունեն, ապա խաղը կարելի է հարմարեցնել: Օրինակ՝ խոսք չունեցող երեխային կարելի է տալ թեմայի շրջանակներում նկար-քարտեր, որոնց օգնությամբ նա կկարողանա մասնակցել խաղին, իսկ, օրինակ, առարկա բռնել չկարողացող երեխայի համար կարելի է գնդակը օգնությամբ պահել նրա մոտ և այնուհետև, դարձյալ օգնությամբ, փոխանցել խաղընկերոջը:



Գտի՛ր գույգո

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, արագ կողմնորոշվելու հմտությունները, շարժունակությունը, ամրապնդել գույների իմացությունը:

Անհրաժեշտ նյութեր. գունավոր փոքրիկ դրոշակներ, յուրաքանչյուրից՝ 4 հատ:

Ընթացք

Խաղն իրականացնելու համար անհրաժեշտ է համեմատաբար մեծ տարածք: Խումբը բաժանվում է երկու թիմի: Յուրաքանչյուր թիմ երկարությամբ շարք է կազմում՝ դեմ դիմաց կանգնելով: Այսպիսով, ձևավորվում է երկու շարք: Մասնակիցներին բաժանվում են գունավոր դրոշակներ, յուրաքանչյուր շարքում նույն գույնից 2 հատ: Մանկավարժը կանգնում է «սյուների» դիմաց 1-2 մետր հեռավորությամբ: Նա ասում է որևէ գույն, օրինակ՝ «կարմիր» և երկու թիմերում կարմիրները գտնում են իրենց գույգին, արագ գնում են շարքի վերջ և գույգ կազմած գալիս մանկավարժի մոտ: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև հնչում են բոլոր գույները: Հաղթող է ճանաչվում առաջինը մանկավարժի մոտ հասած թիմի վերջին գույգը:

Ցուցումներ

Եթե խմբում կան լսողության դժվարություններ ունեցող երեխաներ, ապա մանկավարժը կարող է հրահանգը նաև ցույց տալ՝ բարձրացնելով համապատասխան գույնի քարտը: Խոսքի դժվարություններ ունեցող երեխայի մասնակցության դեպքում, որը չի ճանաչում գույները, կարելի է նույն մոտեցմամբ ներկայացնել խաղի հրահանգը՝ ցույց տալով քարտը և, անհրաժեշտության դեպքում, ուղղորդել նրան: Շարժողական դժվարություններ ունեցող երեխայի մասնակցության դեպքում կարելի է փոխել թիմի հաղթող դառնալու չափանիշը, օրինակ՝ հաղթող է ճանաչվում այն թիմը, որը խաղի ավարտին առավել գեղեցիկ կկատարի իրենց սովորած երգերից որևէ մեկը կամ կարտասանի որևէ ոտանավոր:



Տարվա եղանակներ

Նպատակ. զարգացնել ստեղծագործական մտածողությունը, խոսքը, համագործակցային կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. գունավոր մատիտներ, նկարչական թղթեր, գունավոր թղթեր, սոսինձ:

Ընթացք

Խումբը բաժանվում է 4 թիմի: Մանկավարժը նախապես պատրաստում է չորս քարտեր, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է տարվա մեկ եղանակ: Թիմերի ավագները մոտենում են մանկավարժին և պատահականության սկզբունքով հանում մեկ քարտ: Երեխաներն սկսում են թիմերով աշխատել: Յուրաքանչյուր թիմ պատկերում է տվյալ տարվա եղանակը՝ նկարելով, գունավոր թղթերից պատկերներ ստանալով, սոսնձելով: Մկրատով աշխատանքները կատարելու ժամանակ երեխաներին կարող է օգնել մանկավարժը: Կարևոր է, որ մասնակցեն բոլոր երեխաները՝ յուրաքանչյուրն իր կարողություններով ու հմտություններով: Թիմում կարող են ստեղծվել մեկից ավելի աշխատանքներ: Վերջում թիմի բոլոր մասնակիցները, միմյանց լրացնելով, ներկայացնում են աշխատանքները:



Ի՞նչ է սա

Նպատակ. զարգացնել պատկերավոր մտածողությունը, հիշողությունը, մանր շարժունակությունը:

Անհրաժեշտ նյութեր. մատիտ, գրիչ, գիրք, տետր, նկարչական ալբոմ, ձեռքի ժամացույց, գրչակալ և այլ անձնական պարագաներ*:

Ընթացք

Մանկավարժի հրահանգով երեխաներից 6-ը սեղանին է դնում որևէ անձնական իր կամ գրենական պիտույք (կարող են լինել վերը նշված անհրաժեշտ նյութերը կամ այլ անձնական պարագաներ): Խմբի երեխաներից մեկը, ըստ ցանկության, մոտենում է սեղանին, արագ նայում առարկաներին, այնուհետև մանկավարժը կապում է աչքերը: Խմբից հնչում է՝ «Գտի՛ր իմ գիրքը»: Երեխան շոշափելով գտնում է

գիրքը: Առաջադրանքը ճիշտ կատարելու դեպքում՝ նա շարունակում է խաղը, սխալի դեպքում՝ բացում է աչքերը և տեղը զիջում այլ մասնակցի:

Սեղանի վրայի բոլոր պարագաները գտնելուց հետո՝ դրանք հավաքվում են և փոխարինվում այլ առարկաներով:

Խաղը կարելի է բարդացնել՝ առաջադրելով մասնակցին գտնել առարկան և ասել, թե ում է այն պատկանում:



Խառնաշփոթ

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, հաղորդակցական հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր կենդանիներ պատկերող նկար-քարտեր:

Ընթացք

Մանկավարժը խմբին ցույց է տալիս որևէ կենդանու նկար և հարցնում, թե ինչ գործողություն է նա կարողանում կատարել: Կարող է նաև հարցնել այն գործողությունները, որոնք չի կարող կատարել տվյալ կենդանին: Երեխաները պատասխանում են՝ գլխի համապատասխան շարժումով: Օրինակ՝ «Նայեք շներին: Նրանք գիրք են կարդում»: Երեխաները գլխով բացասական պատասխան են տալիս:

Այնուհետև խումբը բաժանվում է երկու թիմի: Առաջին թիմի երեխաները հերթով ցույց են տալիս նկար-քարտը և ասում համապատասխան կամ ոչ համապատասխան գործողությունը: Երկրորդ թիմից հնչում է պատասխանը: Օրինակ՝ «Մա կոկորդիլոս է: Նա կարողանում է թռչել երկնքում», կամ «Մա առյուծ է: Նա միս է ուտում» և այլն: Հաղթում է ավելի շատ ճիշտ պատասխան տված թիմը:



Նա ինչ է ուտում

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, համագործակցային կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր կենդանիներ և սննդի տեսակներ պատկերող նկար-քարտեր:

Ընթացք

Մանկավարժը խումբը բաժանում է 4 հոգուց բաղկացած թիմերի, որոնք նստում են սեղանների շուրջ: Յուրաքանչյուր թիմ ստանում է կենդանիների և սննդի տեսակներ պատկերող նկարներ: Թիմերը պետք է համապատասխանաբար հավաքեն պատկերները և կազմեն բանավոր նախադասություններ, օրինակ՝ «Առյուծը, վագրը, շունը ուտում են միս»:

Խաղի անհրաժեշտ նյութերը կարելի է նաև համալրել խաղալիք-կենդանիներով և սննդի մուլյաժներով: Երեխաները խմբային աշխատանքի միջոցով կարող են խաղալ խաղալիքներով և միմյանց հետ համագործակցելով կերակրել կենդանիներին:



Թեյի շուրջ

Նպատակ. զարգացնել խոսքը, ուրիշներին լսելու և նրանց մշակույթը հարգելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք բաժակներ, ափսեներ:

Ընթացք

Մանկավարժը խումբը բաժանում է 4 հոգուց բաղկացած թիմերի, որոնք նստում են սեղանների շուրջ: Յուրաքանչյուր թիմ դերային խաղով ներկայացնում է թեյախմության արարողություն, որի ընթացքում «հյուրերը և տանտերը» զրուցում են, կատակում, պատմում հետաքրքիր դեպքեր, ներկայացնում ընտանեկան կամ ազգային սովորույթներ: Մանկավարժի դերն է՝ ուշադիր լսել յուրաքանչյուրի խոսքը և հետևել, որ բոլոր երեխաները մասնակցեն, ինչպես նաև՝ լսեն ընկերներին:

Ցուցումներ

Խաղը կարելի է իրականացնել ավագ խմբում: Մանկավարժի դերն է՝ խթանել զրույցը յուրաքանչյուր խմբում, անհրաժեշտության դեպքում՝ հարցեր առաջադրել, ուղղորդել, որ երեխաները պատմեն, ներկայացնեն, լսեն ընկերոջ խոսքը և հարցեր ուղղեն:



Հեռուստաստղ

Նպատակ. զարգացնել խոսելու, լսելու, ինչպես նաև՝ իմացական ոլորտի կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. հաստ ստվարաթղթից պատրաստված հեռուստացույց, որի էկրանի հատվածը բաց է:

Ընթացք

Աթոռները դասավորվում են շարքերով: Երեխաները զբաղեցնում են իրենց տեղերը, հերթով մոտենում են «հեռուստացույցին», կանգնում «էկրանի» ետևում և ներկայացնում որևէ «համար»: Այն կարող է լինել որևէ երգ, պար, ակրոբատիկական շարժում, ոտանավոր, շուտասելուկ, հանելուկ, հեքիաթ և այլն: «Համարը» կարող է հնչել նաև տարբեր լեզուներով: «Հանդիսատեսը» ուշադիր լսում և ավարտին ծափահարում է «դերասանին»:



Իմ երագած դպրոցի շենքը

Նպատակ. զարգացնել հաղորդակցական հմտությունները, երևակայությունը, համագործակցային կարողությունները, մանր շարժունակությունը:

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թղթերի վրա ուրվագծված տարբեր երկրաչափական պատկերներ, մանկական մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ, մեծ թղթեր:

Ընթացք

Խումբը բաժանել 4 երեխայից բաղկացած թիմերի: Յուրաքանչյուր թիմ նստում է մեկ սեղանի շուրջ: Բոլոր թիմերին մանկավարժը բաժանում է անհրաժեշտ նյութերը և հանձնարարում կառուցել իրենց երագած դպրոցը, որը շուտով հաճախելու են: Թիմերն սկսում են աշխատել. կտրում են երկրաչափական մարմիններ, սոսնձում մեծ թղթին, կարող են նաև նկարել այդտեղ գունավոր մատիտներով: Մանկավարժը հետևում է, որ բոլոր երեխաներն ակտիվ մասնակցեն և իրականացնեն համաձայնեցված, համակարգված աշխատանք:

Բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո թիմերը հերթով ներկայացնում են իրենց «կառուցած դպրոցը» և նշում, թե ո՛ր հատվածն ինչի համար է նախատեսված:

Ցուցումներ

Խաղը նախատեսված է իրականացնել ավագ խմբում: Լսողական, տեսողական կամ այլ դժվարություններ ունեցող երեխաների ներկայության դեպքում անհրաժեշտ է առավել խթանել նրանց մասնակցությունը: Մանկավարժը պետք է առաջադրանքները հստակ ներկայացնի և ուղղորդումն այնպես իրականացնի, որ խաղի ողջ ընթացքում երեխաները միմյանց օգնեն ու աջակցեն:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպե՞ս խաղալ երեխաների հետ. մի քանի կարևոր սկզբունքներ ծնողների համար | UNICEF Հայաստան. <https://rb.gy/du5lcj>
2. Casey, T. (2005). Inclusive play: Practical strategies for working with children aged 3 to 8. Sage
3. Eric Courchesne, Heather J. Chisum, Jeanne Townsend, Angilene Cowles, James Covington, Brian Egaas, Mark Harwood, Stuart Hinds, Gary A. Press. Normal brain development and aging: quantitative analysis at in vivo MR imaging in healthy volunteers. Radiology. 2000 Sep; 216(3):672-82.
4. Fromberg, D. P., Bergen, D. Play from Birth to Twelve: Contexts, Perspectives, and Meanings. Education. 2006. 455 pages
5. Goncu, A., Gaskins, S. Play and Development: Evolutionary, Sociocultural, and Functional Perspectives. Family & Relationships. 2012. 328 pages
6. Goncu, A., & Gaskins, S. (2007). An Integrative Perspective on Play and Development, Psychology Press, Pages 15
7. Rhoshel K.Lenroot, Jay N.Giedd. Brain development in children and adolescents: Insights from anatomical magnetic resonance imaging. Neuroscience & Biobehavioral Reviews. volume 30, Issue 6, 2006, Pages 718-729
8. Samuel L. Odum, Karen E. Diamond. Early Childhood Research Quarterly. Volume 13, Issue 1, 1998. Pages 3-25

ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաղը նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեությունն է, որը նպաստում է նրանց հոգեֆիզիկական զարգացմանը: Խաղի մեջ դրսևորվում են երեխաների մտածողության, երևակայության, հուզականային ոլորտի, ակտիվության և շփման պահանջմունքի առանձնահատկությունները: Խաղի ընթացքում բնական կերպով ձևավորվում է երեխաների վարքը, զարգանում են խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացները:

Խոսքի և խաղի միջև գոյություն ունի երկկողմանի կապ: Մի կողմից խոսքը զարգանում և ակտիվանում է խաղի մեջ, իսկ մյուս կողմից՝ խաղը զարգանում է խոսքի կատարելագործման շնորհիվ: Երեխան խոսքով նշում է իր գործողությունները՝ իմաստավորելով դրանք, բառերով արտահայտում է իր մտքերը և զգացմունքները (Сохин, 2015):

Խոսքի տարբեր խանգարումներ ունեցող երեխաների, ինչպես և բնականոն զարգացած խոսք ունեցողների համար, խաղն ունի կարևոր նշանակություն անձի և հոգեկանի բազմակողմանի զարգացման համար: Հնչյունների սխալ արտաբերումը, աղքատ բառապաշարը, խոսքի քերականական կառույցի, ինչպես նաև խոսքի տեմպի, ռիթմի, սահունության խանգարումներն ազդում են երեխաների խաղային գործունեության վրա՝ ձևավորելով յուրահատուկ խաղային վարքագիծ:

Խոսքի բարդ խանգարումով երեխաների խաղային գործունեությունը զարգանում է մեծահասակների անմիջական ուղղորդող ազդեցության դեպքում: Սկզբնական փուլերում խաղային գործողություններն իրականանում են խիստ սահմանափակ խոսքային շփման



պայմաններում, որի պատճառով կրճատվում է խաղերի ծավալը և սյուժեն: Առանց հատուկ կազմակերպված ուսուցման՝ խոսքի բարդ խանգարումով երեխաների մոտ չի ձևավորվի խաղային գործունեություն՝ ուղղված նրանց բառապաշարի և կենսափորձի ընդլայնմանը: Իրենց հիմնական գիտելիքները և տպավորություններն այս երեխաները ձեռք են բերում նպատակատուղոված խաղային գործունեության ընթացքում: Խաղի առավելությունը գործունեության մյուս տեսակների համեմատությամբ այն է, որ երեխաներն ինքնակամ ենթարկվում են որոշակի կանոնների, ընդ որում՝ դրանց կատարումն էլ հենց հաճույք է պատճառում նրանց: Այս հանգամանքն էլ դարձնում է երեխաների վարքը գիտակցված և իմաստավորված: Ուստի, խաղն այն եզակի ոլորտն է, որում խոսքի խանգարումով երեխաները կարողանում են դրսևորել նախաձեռնողականություն և ստեղծագործական ակտիվություն: Հենց խաղի ընթացքում են ակտիվորեն զարգանում երեխաների մտածողությունը, հույզերը, հաղորդակցման հմտությունները, երևակայությունը և այլն (Ветчинкина, 2009):

●●● Մեթոդական ցուցումներ մանկավարժներին՝ խոսքի խանգարումով երեխաների խաղային գործունեության կազմակերպման վերաբերյալ

Խոսքի խանգարումով երեխաների խաղային գործունեության զարգացումն անհրաժեշտ նախապայման է նրանց ոչ միայն խոսքի, այլև հոգեկան մյուս գործընթացների և անձի զարգացման համար: Այս երեխաների խաղային գործունեության ձևավորումն ու զարգացումը մեծահասակներից (մանկավարժներ, ծնողներ) պահանջում է որոշակի մեթոդական պահանջների ապահովում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- Խոսքի խանգարումով երեխաների խաղն իրականանում է մեծահասակների (մանկավարժներ, ծնողներ) անմիջական ղեկավարման ներքո:
- Սկզբնական շրջանում խոսքային շփման հնարավորությունների սահմանափակման պատճառով խաղերի ընթացքը և սյուժեն պետք է լինեն շատ պարզ:
- Որպեսզի հնարավոր լինի խոսքի ծանր խանգարումով երեխաներին դրդել որոշակի գործողություններ կատարել խաղալիքներով, անհրաժեշտ է պահպանել հետևյալ նախապայմանները. խոսքային հրահանգը պետք է պարունակի միայն այնպիսի բառեր, որոնք երեխային հասկանալի են և առաջարկվող կոնկրետ գործողությունները պետք է կապված լինեն գործնական փորձի հետ:
- Սյուժետադերային խաղերի ուսուցումը պետք է սկսել դիդակտիկական խաղալիքներով խաղերից, որոնց ընթացքում մեծահասակը երեխային ցույց է տալիս այս կամ այն գործողությունը (Տիկնիկին քնեցնենք: Տիկնիկը ջուր է խմում): Յուրացնելով դրանք՝ երեխան ի վիճակի է լինում խաղալ ինքնուրույն:
- Խաղային գործունեության զարգացման համար խիստ կարևոր է խաղալիքների և խաղային նյութերի ճիշտ ընտրությունը, որը պետք է համապատասխանի երեխայի ոչ միայն տարիքային թեմատիկային, այլև անհատական կարողություններին:
- Սկզբնական շրջանում խոսքի խանգարումով երեխաները պետք է ունենան իրենց անհատական խաղալիքները, քանի որ խաղալիքների խմբային կիրառումը նրանց դեպքում դեռևս հնարավոր չէ:
- Խոսքի խանգարումով երեխաները խոսքի բնականոն զարգացում ունեցող հասակակիցների համեմատությամբ ավելի շատ են պահանջում մեծահասակների մասնակցություն խաղին: Նրանք հաճախ չեն կարողանում պայմանավորվել,

զիջել, ուստի՝ խմբային խաղերի ժամանակ առաջանում են կոնֆլիկտներ: Բացի այդ, խաղի հանդեպ հետաքրքրությունն անկայուն է:

- Անհրաժեշտ է նրանց դրդել, որ շփվեն միմյանց հետ, մեկնաբանեն սեփական գործողությունները, ինչը նպաստում է բառապաշարի հարստացմանը, խոսքի քերականական կառույցի ձևավորմանը, հաղորդակցման կարողությունների զարգացմանը:
- Թեև մեծահասակն է դեկավարում խաղի ընթացքը, սակայն նա պետք է հանդես գա որպես խաղընկեր՝ պահպանելով խաղի բնականությունը:
- Կարևոր է սովորեցնել երեխաներին խաղը հասցնել ավարտին, քանի որ նրանք հաճախ են շեղվում: Դա ձևավորում է երեխայի մեջ նպատակասլացություն:
- Առարկաների և դրանց հետ կատարվող գործողությունների անվանումները յուրացնելու համար շատ կարևոր է, որ երեխան դրանցով ակտիվ մանիպուլյացիաներ անի: Խաղալով առարկայով և միաժամանակ լսելով մեծահասակին՝ երեխան ավելի արագ է մտապահում անվանումները: Խաղի ընթացքում մեծահասակը պետք է ոչ միայն անվանի իր, այլև երեխաների կատարած գործողությունները: Օրինակ՝ «Ես օրորում եմ տիկնիկին: Անին օրորում է տիկնիկին: Սոնան օրորում է տիկնիկին»:
- Խոսքի զարգացման վրա բարենպաստ են ազդում սյուժետադերային խաղերը: Խաղալիս երեխաները խոսում են և՛ իրենց, և՛ խաղալիքների փոխարեն. կենդանիների, գնացքի ձայներ են արձակում: Այս խաղերի ընթացքում երեխաները մարմնավորում են նաև մեծահասակների դերերը, կատարում և անվանում են նրանց կատարած գործողությունները (Հայրիկը մեքենա է վարում: Մայրիկը սանրվում է:) Ուստի

մեծահասակները պետք է խրախուսեն երեխաներին խաղալ սյուժետադերային խաղեր:

- Խաղի ժամանակ մեծահասակները պետք է ոչ միայն սեփական գործողություններն ուղեկցեն խոսքով, այլ նաև հարցեր տան երեխաներին, խնդրեն ցույց տալ խաղի պարագաները և այլն:
- Եթե խաղն առաջին անգամ է անցկացվում, ապա անհրաժեշտ է երեխաների ներկայությամբ խաղարկել խաղի ողջ սյուժեն:
- Խաղի ընթացքում ցանկալի չէ շեղվել խաղից, օրինակ՝ դիտողություններ անել, ընդհատել խաղը և այլն, քանի որ այդ դեպքում կորչում է խաղի ամբողջականությունը և երեխայի համար այն դառնում է անհետաքրքիր:
- Խոսքի խանգարումներ ունեցող երեխաները հաճախ դժվարությամբ են կիրառում փոխարինող առարկաները: Ուստի կարևոր է սյուժետադերային խաղերի ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ մատիտը կարելի է գործածել ջերմաչափի, խորանարդիկը՝ օձառի փոխարեն և այլն:
- Անհրաժեշտ է խոսքի խանգարումով երեխաներին ընդգրկել այնպիսի խաղերի մեջ, որոնց մասնակցում է ամբողջ խումբը՝ հանձնարարելով նրանց անհատական կարողություններին համապատասխան դերեր: Օրինակ՝ «Խաղալիքների խանութ», որտեղ կան վաճառողներ, գնորդներ, «Գնացք», որի ուղևորները ճանապարհորդում և ուսումնասիրում են շրջապատը, «Տիկնիկի ծննդյան օրը» և այլն: Այդ խաղերը ստեղծում են դրական հուզական մթնոլորտ և նպաստում շփման կարողությունների զարգացմանը (Филичева, Чиркина, 2007):

● ● ● Լսողական ընկալումը զարգացնող խաղեր



Կռահի՛ր, թե ինչ ձայն է լսվում

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. թերթ, բաժակով ջուր, փայտյա և մետաղյա գդալներ, պոլիէթիլենային պարկ և այլ կենցաղային պարագաներ:

Ընթացք

Երեխայի հետ միասին լսել թափվող ջրի ձայնը, թերթի, պոլիէթիլենային պարկի խշխշոցը, գդալների զրնգոցը հարվածելիս և այլն: Այնուհետև առաջարկել երեխային փակել աչքերը կամ շրջվել և կռահել, թե ինչի ձայնն է լսվում:



Հնչող տուփեր կամ պարկեր

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. փոքրիկ միանման տուփեր կամ պարկեր՝ լցված բրնձով, ոլոռով, ոսպով, ուլունքներով, կոճակներով և այլ նմանատիպ նյութերով:

Ընթացք

Առաջին տարբերակ:

Երեխայի հետ միասին լսել յուրաքանչյուր տուփի (պարկի) ձայնը և ասել, թե ինչով է այն լցված: Այնուհետև խառնել տուփերը (պարկերը) և առաջարկել երեխային ըստ ձայնի կռահել, թե ինչով է այն լցված:

Երկրորդ տարբերակ:

Յուրաքանչյուր տուփից (պարկից) պատրաստել 2-ական տարբերակ: Առաջարկել երեխային ըստ ձայնի գտնել յուրաքանչյուր տուփի (պարկի) գույգը:



Աչքակապուկ

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. փոքրիկ զանգ և երեխայի աչքերը կապելու համար նախատեսված կտոր:

Ընթացք

Երեխայի աչքերը կապել և առաջարկել գնալ դեպի հնչող զանգի կողմը:

Ցուցումներ

Խաղի համար նախատեսված տարածքը պետք է լինի ազատ, որպեսզի անվտանգ լինի երեխայի տեղաշարժը: Ջանգի փոխարեն կարելի է օգտագործել նաև հնչող խաղալիքներ կամ նվագարաններ (թմբուկ, դափ, քսիլոֆոն և այլն):



Ծափեր

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը և ռիթմի զգացողությունը:

Ընթացք

Մեծահասակը ծափերով որոշակի ռիթմ է ներկայացնում: Երեխան պետք է այն կրկնի: Օրինակ՝ 2 ծափ, դադար, 1 ծափ: Ռիթմերը գնալով պետք է բարդացնել՝ ավելացնելով ինչպես ծափերի, այնպես էլ դադարների քանակը:

Որպես խաղի ավելի բարդ տարբերակ՝ երեխային կարելի է առաջարկել վերարտադրել ռիթմերը փակ աչքերով:



Կռահի՛ր խաղալիքը

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. ձայնարձակող խաղալիքներ կամ մանկական նվագարաններ:

Ընթացք

Երեխայի հետ միասին լսել խաղալիքների ձայները, ապա տեղադրելով դրանք երեխայի համար անտեսանելի վայրում՝ հերթով հնչեցնել, որպեսզի նա կռահի, թե որ խաղալիքը կամ նվագարանն է հնչում:

Ցուցումներ

Սկզբում կարելի է առաջարկել 2 խաղալիք կամ նվագարան, այնուհետև՝ դրանց թիվն աստիճանաբար ավելացնել: Կարևոր մեթոդական նախապայման է նաև սկզբում իրարից խիստ տարբերվող ձայներ ունեցող խաղալիքներով խաղալը, ապա՝ նման հնչողությամբ խաղալիքներ կամ նվագարաններ առաջարկելը:

Որպես խաղի մեկ այլ տարբերակ՝ կարելի է ունենալ խաղալիքների կամ նվագարանների նկարներ. կռահելուց հետո երեխան պետք է ցույց տա համապատասխան նկարը:



Գտի՛ր թաքցրած խաղալիքը

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. փոքրիկ խաղալիք կամ առարկա:

Ընթացք

Մեծահասակը սենյակի որևէ հատվածում թաքցնում է խաղալիքը: Երեխան պետք է այն գտնի՝ հիմնվելով թմբուկի (դափի, ծափերի և այլն) ձայնի բարձրության վրա. եթե ձայնը բարձր է, ուրեմն խաղալիքը մոտակայքում է թաքցրած, իսկ եթե ցածր է՝ ուրեմն հեռու է:



Տաք է, սառն է

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. փոքրիկ խաղալիքներ կամ առարկաներ:

Ընթացք

Նման է նախորդ խաղին, սակայն այս դեպքում, երբ երեխան մոտենում է թաքցրած խաղալիքին, մեծահասակն ասում է՝ «Տաք է», իսկ եթե հեռու է լինում խաղալիքից՝ «Սառն է»:

Ցուցումներ

Խաղը կարելի է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային տարբերակով: Վերջինիս դեպքում երեխաներից մեկը դուրս է գալիս սենյակից, խումբը թաքցնում է խաղալիքը: Այնուհետև երեխան

ներս է մտնում և սկսում է փնտրել թաքցրած խաղալիքը, իսկ խումբը հուշում է նրան:



Ո՞րն էր առաջինը: Իսկ վերջինը՝

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը, ձայների հաջորդականությունը մտապահելու և վերարտադրելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. մանկական նվագարաններ:

Ընթացք

Անհրաժեշտ է երեխային ցույց տալ մանկական նվագարանները, նվագել կամ հնչեցնել դրանք և սովորեցնել անվանումները: Այնուհետև դրանք տեղադրելով երեխայի համար անտեսանելի վայրում՝ հերթով հնչեցնել: Երեխան պետք է ասի, թե որ նվագարանն է հնչել առաջինը, ապա՝ վերջինը:

Ցուցումներ

Սկզբում կարելի է առաջարկել 2 նվագարան, այնուհետև՝ դրանց թիվն աստիճանաբար ավելացնել:

Որպես խաղի ավելի բարդ տարբերակ՝ կարելի է առաջարկել ասել հնչած նվագարանների հաջորդականությունը կամ դասավորել նվագարանների նկարներն այն հաջորդականությամբ, որով դրանք հնչել են:



Հեռու-մոտիկ

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. երկու նկար, որոնցից մեկի վրա պատկերված նավը հեռու է, իսկ մյուսի վրա՝ մոտիկ:

Ընթացք

Երեխային ասվում է, որ երբ նավը մոտիկ է՝ ձայնը բարձր է հնչում, իսկ երբ հեռու է՝ ցածր: Այնուհետև մեծահասակը բարձր կամ ցածր



արտաբերում է՝ «Ու՛-ու՛-ու՛»: Երեխան, ուշադիր լսելով, պետք է ցույց տա համապատասխան նկարը:



Կռահի՛ր, թե ով է

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. պարկ, կենդանիների նկարներ (կատու, շուն, խոզ, կով, ոչխար, ձի, այծ, աքաղաղ, գորտ, գայլ, օձ, ծիտիկ, բզեզ):

Ընթացք

Նկարները լցվում են պարկի մեջ: Երեխաները հերթով մոտենում և պարկից հանում են մեկ նկար՝ արտաբերելով նկարի վրա պատկերված կենդանու ձայնը: Մյուս երեխաները պետք է կռահեն, թե որ կենդանին է պատկերված նկարում (Арушанова, Рычагова, 2008):



Հնչության ընկալումը զարգացնող խաղեր



Կռահի՛ր, թե ում ձայնն է

Նպատակ. զարգացնել հնչության ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. երեխայի, գայլի և թռչնի նկարներ:

Ընթացք

Երեխային ցույց են տալիս նկարները և բացատրում, որ գայլը ոռնում է՝ «Ու՛-ու՛-ու՛», երեխան լացում է՝ «Ա՛-ա՛-ա՛», իսկ ծիտիկը երգում է՝ «Ի՛-ի՛-ի՛»: Այնուհետև նկարները տալիս են երեխային և հանձնարարում՝ լսել ձայնն ու ցուցադրել համապատասխան նկարը:



Բռնի՛ր հնչյունը

Նպատակ. զարգացնել հնչության ընկալումը:

Ընթացք

Երեխային տրվում է հրահանգ՝ ծափահարել, եթե լսում է հանձնարարված (օրինակ՝ ա, ու, ի, ս, շ, լ ...) հնչյունը: Այնուհետև մեծահասակը խառը հաջորդականությամբ արտասանում է

հնչյուններ: Որպես խաղի բարդացում՝ առաջարկվում է նույնը կատարել վանկերով (կա, կո, տա, տու...):

Ցուցումներ

Սկզբնական շրջանում հնչյունները պետք է արտասանել դանդաղ՝ շեշտելով հանձնարարված հնչյունը: Սկզբում խաղն անցկացվում է ձայնավորներով, այնուհետև՝ բաղաձայններով:



Ո՞ր հնչյունը կա բոլոր բառերում

Նպատակ. զարգացնել հնչութային ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. բառաշարքեր, որոնք ունեն ընդհանուր հնչյուն. օրինակ՝ շուն-կոշիկ-շոկոլադ-շիշ, սար-աստղ-սանր-սունկ և այլն:

Ընթացք

Մեծահասակը ցույց է տալիս նկարները և հերթով անվանում՝ շեշտելով ընդհանուր հնչյունը: Որպես խաղի ավելի բարդ տարբերակ՝ կարելի է ներկայացնել բառաշարքն առանց նկարների:



Ո՞րն է ավելորդ

Նպատակ. զարգացնել հնչութային ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. վանկաշարքեր, որոնցում 3 վանկերը նույնն են, իսկ մեկը՝ տարբերվում է բաղաձայն հնչյունով: Օրինակ՝ «պա-պա-բա-պա», «կա-կա-գա-կա» և այլն:

Ընթացք

Մեծահասակն ասում է վանկաշարը՝ մի փոքր շեշտելով տարբերվող վանկը: Երեխան պետք է ծափահարի, հենց որ լսում է ավելորդ (տարբերվող) վանկը: Դժվարանալու դեպքում՝ վանկաշարը կարելի է կրկնել:

Ցուցումներ

Որպես խաղի ավելի հեշտ տարբերակ՝ կարելի է խաղալ նաև 3 վանկից բաղկացած վանկաշարով: Մեկ այլ տարբերակ է, երբ երեխային ասում են, որ կրկնվելու է օրինակ՝ կա վանկը, և երբ նա լսի այլ վանկ՝ ծափ տա:

Եվս մեկ տարբերակ է՝ ներկայացնել ոչ թե բաղաձայնով, այլ ձայնավորով փոխվող վանկ: Օրինակ՝ «կա-կա-կե-կա», «կո-կո-կո-կու»:



Նույնն են, թե՞ տարբեր

Նպատակ. զարգացնել հնչութային ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. վանկաշարեր:

Ընթացք

Մեծահասակն ասում է որևէ վանկ, ապա կա՛մ կրկնում է նույն վանկը, կա՛մ էլ ասում հակառակ վանկը: Օրինակ՝ «տա-տա» կամ «տա-ատ»: Երեխան պետք է ասի՝ նույնն ասվե՞ց, թե՞ տարբեր:

Ցուցումներ

Նպատակահարմար է խաղն իրականացնել 5 և ավելի բարձր տարիքի երեխաների դեպքում:



Ճիշտ է, թե՞ սխալ

Նպատակ. զարգացնել հնչութային ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. առարկայական նկարներ, օրինակ՝ շուն, գնդակ, կատու, ճուտիկ և այլն:

Ընթացք

Մեծահասակը երեխային ցույց է տալիս նկարը և անվանում ճիշտ կամ սխալ տարբերակով: Օրինակ՝ ցույց տալով շան նկարը, մի քանի անգամ անվանում է՝ «շուն» կամ «սուն»: Ամեն անգամ երեխան պետք է նշի՝ ճիշտ է, թե՞ սխալ:

Ցուցումներ

Նկարների և խոսքային նյութի ընտրության ժամանակ պետք է բացառվեն բոլոր այն հնչյունները, որոնք երեխան սխալ է արտաբերում:



Ծափահարի՛ր, եթե լսես

Նպատակ. զարգացնել հնչության ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. բառեր:

Ընթացք

Մեծահասակը երեխային ասում է բառեր: Երեխան պետք է ծափահարի (ոտքով դռփի, հարվածի թմբուկին կամ դափին), եթե որևէ բառում լսի հանձնարարված հնչյունը: Օրինակ՝ լ հնչյունի համար որպես բառանյութ կարող են լինել հետևյալ բառերը՝ լուսին, լամպ, քար, բանալի, ռոբոտ, դուռ, դույլ, բալ, խաղալիք, լուլիկ և այլն:

Ցուցումներ

Նպատակահարմար է խաղն իրականացնել հինգ և ավելի բարձր տարիքի երեխաների դեպքում:



Լսի՛ր և ընտրի՛ր

Նպատակ. զարգացնել հնչության ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որոնց անվանումները տարբերվում են մեկ հնչյունով. օրինակ՝ «ձի-ձու», «տուն-շուն», «մուկ-ձուկ», «բու-ձու» և այլն:

Ընթացք

Նկարները շարքով դասավորվում են երեխայի առջև: Մեծահասակն ասում է բառը, և երեխան պետք է ցուցադրի համապատասխան նկարը:



Մտածի՛ր, մի՛ շտապիր

Նպատակ. զարգացնել հնչության ընկալումը:

Ընթացք

Երեխային առաջարկում են մտածել և ասել.

- բառ(եր), որն սկսվում է օրինակ՝ «ա» (օ, ու, է, ս, շ, լ, մ, ն և այլն) հնչյունով
- բառ(եր), որն ավարտվում է օրինակ՝ «ր» (ն, լ, վ, կ, ս և այլն) հնչյունով

- բառ(եր), որում լինի «տ» հնչյունը
- բառ(եր), որն սկսվում է այն հնչյունով, որով ավարտվում է «բալ» բառը
- թռչուն, որի անվանման մեջ կա «դուռ» բառի վերջին հնչյունը
- կենդանի, որն սկսվի «կ» և ավարտվի «ու» հնչյունով
- միրգ, որն սկսվի «խ» և ավարտվի «ղ» հնչյունով
- բանջարեղեն, որն սկսվի «կ» և ավարտվի «լ» հնչյունով և այլն:

Ցուցումներ

Ներկայացված 4-7-րդ առաջադրանքները նպատակահարմար է իրականացնել՝ սկսած հինգ տարեկանից: Առաջին երեք առաջադրանքները կարելի է իրականացնել՝ սկսած չորս տարեկանից:



Ուշադի՛ր եղիր, որ բռնես

Նպատակ. զարգացնել հնչույթային ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. բառեր:

Ընթացք

Մեծահասակն ասում է բառեր: Երեխան պետք է ծափահարի (հարվածի թմբուկին, դափին, ոտքերով դոփի, բարձրացնի դրոշակը, քարտը և այլն), երբ լսում է հանձնարարված հնչյունով սկսվող (ավելի բարդ տարբերակի դեպքում՝ ավարտվող) բառերը:




Հնչյունային քանոն


Նպատակ. զարգացնել հնչույթային ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. հնչյունային քանոնի սխեմաներ:


Ընթացք



բառասկիզբ




բառամեջ



բառավերջ

Մեծահասակը թվարկում է բառեր, որոնցում հանձնարարված հնչյունը բառասկզբում է, բառամիջում կամ բառավերջում, և երեխան պետք է ցույց տա համապատասխան սխեման:

Մեկ այլ տարբերակ է, երբ սխեման և շրջանակը երեխային տրվում են առանձին-առանձին, և երեխան ինքնուրույն պետք է որոշի, թե սխեմայի որ հատվածում տեղադրի շրջանակը.



Ցուցումներ

Խաղը կարելի է անցկացնել ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբով:



Ճիշտասելուկներ

Նպատակ. զարգացնել հնչութային ընկալումը և հանգի զգացողությունը:

Անհրաժեշտ նյութեր. Ճիշտասելուկներ:

Ընթացք

Մեծահասակն ասում է ճիշտասելուկը՝ բաց թողնելով վերջին բառի վերջին վանկը, որը պետք է ավելացնի երեխան.

Սա-սա-սա՝ համեղ հարի... (սա):

Ցա-ցա-ցա՝ գրել, կարդալ իմա... (ցա):

Չա-չա-չա՝ փոքրիկ շնիկ մի՛ հա... (չա):

Ռա-ռա-ռա՝ ազնիվ ծա... (ռա):

Որպես ավելի բարդ տարբերակ՝ կարելի է ոչ թե կրկնել վանկերը, այլ փոփոխել.

Կո-կա-կո՝ զով երե... (կո):

Ջե-զի-զե՝ քաջ բա... (զե):

Ճու-ճի-ճու՝ ուրախ ճի... (ճու):

Բի-բու-բի՝ շուտով կգա Նոր տա... (բի):

(Պայլոզյան Ժ.Հ., Թադևոսյան Է.Ռ., 2009, Ткаченко Т.А., 2014)

● ● ● Լսողական ուշադրությունը զարգացնող խաղեր



Կռահի՛ր, թե ով է

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. կտոր՝ աչքերը կապելու համար:

Ընթացք

Երեխաները կանգնում են շրջանաձև: Երեխաներից մեկը կանգնում է կենտրոնում: Նրա աչքերը կապում են, և նա շարժվում է որևէ ուղղությամբ: Երբ որ գտնում է երեխաներից մեկին, այդ երեխան պետք է նախապես պայմանավորված ձայնն արձակի: Օրինակ՝ «Ծուրրուդու՛», «Հա՛ֆ-հա՛ֆ», «Մյաու՛-մյաու՛» և այլն: Փակ աչքերով երեխան պետք է ուշադիր լսի և կռահի, թե որ երեխան էր ձայն տալիս: Եթե կռահում է, ապա կանգնում է շրջանի մեջ, իսկ այն երեխան, ում ձայնը ճանաչել էր, կանգնում է կենտրոնում:

Խաղի մեկ այլ տարբերակ է, երբ կապած աչքերով երեխան կանգնում է շրջանի կենտրոնում, իսկ մեծահասակը լուռ ցույց է տալիս շրջանում կանգնած որևէ երեխայի: Վերջինս ասում է վարողի անունը: Եթե վարողը ճանաչում է նրա ձայնը, ապա նրանք տեղերով փոխվում են:



Ուտելիք-չուտելիք

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Երեխաները նստում կամ կանգնում են կիսաշրջանաձև: Մանկավարժը

(խաղավարը) հերթով գնդակը նետում է երեխաներին՝ ասելով ուտելիքների և առարկաների անուններ: Եթե երեխան լսում է ուտելիքի անվանում, պետք է բռնի գնդակը, մնացած դեպքերում՝ չպետք է



բռնի: Եթե երեխան սխալվում է, դուրս է գալիս խաղից: Հաղթում է այն երեխան, ով մնում է վերջում:

Ցուցումներ

Վարողը պետք է նախ ասի բառը, ապա՝ արագ նետի գնդակը, այլապես՝ երեխաները չեն հասցնի կողմնորոշվել:



Տաք կարտոֆիլ-սառը կարտոֆիլ

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Երեխաները նստում կամ կանգնում են շրջանաձև և հերթով մեկը մյուսին գլորում գնդակը՝ ասելով «Տաք կարտոֆիլ» կամ «Սառը կարտոֆիլ»: Եթե ասվում է «Սառը կարտոֆիլ», երեխան, ում ուղղությամբ գլորվել է գնդակը, պետք է այն բռնի, իսկ եթե՝ «Տաք կարտոֆիլ», չպետք է բռնի: Սխալվողը դուրս է գալիս խաղից: Հաղթում է այն երեխան, ով մնում է վերջում:

46



Ո՞վ է թռչում

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը:

Ընթացք

Երեխաները կանգնում են կիսաշրջանաձև: Մանկավարժը (խաղավարը) կանգնում է նրանց առջևում և խառը հաջորդականությամբ թվարկում է թռչուններ, օդային փոխադրամիջոցներ, ցամաքային կենդանիներ և կենցաղային իրեր: Եթե երեխաները լսում են թռչնի կամ օդային փոխադրամիջոցի անվանում, պետք է ցույց տան թռչելու շարժումներ, իսկ մնացած դեպքերում՝ պետք է կանգնեն անշարժ: Սխալվող երեխան դուրս է գալիս խաղից: Հաղթում է այն երեխան, ով մնում է վերջում:

Որպես խաղի բարդ տարբերակ՝ խաղավարը կարող է ինքն էլ երեխաների հետ միասին կատարել թռչելու շարժումներ՝ շփոթեցնելով նրանց:



Հանելուկներով լոգո-լոտո

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը, խոսքի ընկալումը և բառապաշարը:

Անհրաժեշտ նյութեր. հանելուկներով հնչյունային կամ թեմատիկ լոտո:

Ընթացք

Մեծ քարտը տրվում է երեխային, իսկ փոքրիկ (կտրտված) քարտերը մնում են խաղավարի մոտ: Անհրաժեշտ է, որ երեխան չտեսնի փոքրիկ քարտերի նկարները: Խաղավարն ընթերցում է հանելուկը: Եթե երեխան, իր քարտի նկարներին նայելով, կռահում է պատասխանը և ճիշտ է արտաբերում բառը, խաղավարը փոքրիկ քարտը տալիս է նրան, որպեսզի այն տեղադրի իր քարտի համապատասխան նկարի վրա: Եթե երեխան չի կռահում պատասխանը, հանելուկը կրկին ընթերցվում է մի քանի այլ նկարների վերաբերյալ հանելուկներից հետո, քանի որ այդ դեպքում որոշ նկարներ փակվում են, և հեշտանում է ընտրությունը:

Որպես խաղի ավելի հեշտ տարբերակ՝ կարելի է խաղալ առանց հանելուկների՝ մրցութային կարգով, որը հատկապես նպատակահարմար է երեք-չորս տարեկան երեխաների դեպքում: Փոքր քարտերը լցնում են պարկի մեջ, հերթով հանում, անվանում և տեղադրում համապատասխան տեղում: Հաղթում է նա, ում քարտն առաջինն է լրանում:

Ցուցումներ

Ցուրաքանչյուր խաղից առաջ երեխայի հետ միասին պետք է ասել տվյալ քարտի բոլոր պատկերների անվանումները:

Խաղը կարելի է խաղալ ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբով:



Մտապահի՛ր բառերը

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը և բառային հիշողությունը:

Ընթացք

Մանկավարժը հերթով երեխաներին ասում է 2-6 բառ և առաջարկում կրկնել: Եթե երեխան որևէ բառ բաց է թողնում, սխալ է ասում կամ խառնում է բառերի հերթականությունը՝ պարտվում է և դուրս գալիս խաղից: Հաղթում է նա, ով մնում է վերջում:

Ցուցումներ

Բառերի քանակը, ինչպես նաև իմաստային ու հնչյունավանկային կառույցի բարդությունը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին և անհատական կարողություններին:



Ընտրի՛ր ճիշտ բառը

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը, խոսքի ընկալումը և հանգի զգացողությունը:


Անհրաժեշտ նյութեր. քարտեր, որոնց վրա գրված հանելուկների կամ փոքրիկ ոտանավորների վերջին բառը բաց է թողնված, ինչպես նաև քարտեր՝ բաց թողնված բառերի պատկերներով:

Ընթացք

Մանկավարժը կարդում է հանելուկը կամ ոտանավորը, իսկ երեխան, նայելով նկարներին, պետք է լրացնի բաց թողնված վերջին բառը՝ ոչ միայն ըստ իմաստի, այլև ըստ հանգավորման:

Օրինակ՝

Անմահական միրգ է,
Իսկական բարիք է,
Կարմիր է, կլոր



Անուշ միրգ եմ,
Աշնան մի գանձ,
Ասեք՝ ի՞նչ են կոչում ինձ՝ ...

Կոչվում է՝ ...



Եղի՛ր ուշադիր, որ չխաբեն

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը և խոսքի ընկալումը:
Ընթացք

Մանկավարժը նստում է երեխայի դիմաց և նրա հետ կատարում է հետևյալ գործողությունները.

- ձեռքերը դնել սեղանի վրա,
- ձեռքերը թաքցնել սեղանի տակ,
- ձեռքերով թեթևակի հարվածել սեղանին:

Այնուհետև երեխային ասում է, որ սկսելու է շփոթեցնել նրան՝ ցույց տալով այլ գործողություն: Երեխան պետք է ուշադիր լինի, որ չշփոթվի:

Ցուցումներ

Խաղը կարելի է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբով: Վերջին դեպքում՝ սխալվողը դուրս է գալիս, և հաղթում է այն խաղացողը, ով մնում է վերջում (Ткаченко, 2014; Дурова, 2002):



Ռիթմի զգացողությունը զարգացնող խաղեր



Արա՛ ինչպես ես

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը և ռիթմի զգացողությունը:

Անհրաժեշտ նյութեր. թմբուկ:

Ընթացք

Մանկավարժը թմբուկի մի փայտիկը վերցնում է , իսկ մյուսը տալիս է երեխային՝ ասելով. «Կատարի՛ր նույնը, ինչ որ ես»: Այնուհետև, թմբուկին հարվածելով, ներկայացնում է որևէ ռիթմ, և երեխան պետք է նույնը վերադարձնի:

Ցուցումներ

Խաղը կարելի է կատարել նաև ծափերով, դափով կամ փայտե գդալներն իրար հարվածելով: Սկզբում ներկայացվում են պարզ ռիթմեր (2-4 զարկով և 1-2 դադարով), այնուհետև՝ բարդ ռիթմեր:



Ո՞վ է թակում դուռը

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը և ռիթմի զգացողությունը:

Անհրաժեշտ նյութեր. երեք խոզուկները հեքիաթի վերաբերյալ նկարներ:

Ընթացք

Մանկավարժն ասում է, որ Նաֆ-Նաֆ խոզուկին պետք է հյուր գան նրա եղբայրները: Նիֆ-Նիֆը պետք է դուռը թակի այսպես՝ «I-I-I», իսկ Նուֆ-Նուֆը՝ այսպես՝ «I-II»: Նաֆ-Նաֆը պետք է ուշադիր լինի, որ հանկարծ չգա գայլը, որը դուռը թակում է այսպես՝ «II-I»: Պետք է օգնել Նաֆ-Նաֆին և ասել, թե ով է թակում դուռը: Այնուհետև մեծահասակը սկսում է տարբեր ռիթմերով թակել դուռը, և երեխաները պետք է կռահեն, թե ով է թակողը:



50

Ցուցումներ


Ռիթմերի գրառման ժամանակ «I» նշանը նշանակում է՝ **ծափ** կամ **զարկ**, իսկ «-» նշանը՝ **դադար**:



Կաթիլներ

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը և ռիթմի զգացողությունը:

Անհրաժեշտ նյութեր. ռիթմերի վերաբերյալ նկարներ՝ կաթիլների տեսքով, որտեղ կաթիլը նշանակում է ծափ, իսկ գծիկը՝ դադար:



Ընթացք

Մանկավարժն ասում է, որ կաթիլներն իրենց երգերն են երգում՝ ըստ այս նկարների: Այնուհետև նա ցույց է տալիս, թե ինչպես պետք է ծափահարել և խնդրում է, որ երեխաները նույնպես ծափահարեն՝ սկզբում իր հետ, ապա՝ ինքնուրույն: (Гербова, 2014; Жыкова, 2005)

● ● ● Բառապաշարը զարգացնող խաղեր



Գտի՛ր, թե ում ինչ է հարկավոր

Նպատակ. հարստացնել երեխայի գոյականական բառապաշարը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որտեղ պատկերված են տարբեր մասնագետներ և նրանց անհրաժեշտ պարագաներ:

Ընթացք

Երեխային առաջարկվում է նայել նկարներին և ասել, թե ում ինչ է հարկավոր: Օրինակ՝ նկարիչին հարկավոր է վրձին, այգեպանին՝ բահ, բժշկին՝ ջերմաչափ, ուսուցչին՝ գիրք, վարսավիրին՝ սանր, խոհարարին՝ շերեփ, դերձակին՝ ասեղ և այլն:



Ես ասեմ, դու շարունակի՛ր

Նպատակ. հարստացնել երեխայի բառապաշարը հականիշներով:

Ընթացք

Խաղավարն սկսում է նախադասությունը, երեխան պետք է ավարտի:

Օրինակ՝

Խնձորը քաղցր է, իսկ կիտրոնը՝ ...:

Նարինջը կլոր է, իսկ բանանը՝ ...:

Փիղը մեծ է, իսկ մկնիկը՝ ...:

Կարտոֆիլը պինդ է, իսկ լոլիկը՝ ...:

Ձմռանը ցուրտ է, իսկ ամռանը՝ ...:

Թելը բարակ է, իսկ պարանը՝ ...:



Ասա՛ հակառակը

Նպատակ. հարստացնել երեխայի բառապաշարը հականիշներով:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Մանկավարժը երեխային է նետում գնդակը և բառ ասում: Երեխան պետք է վերադարձնի գնդակը՝ ասելով դրա հակառակ իմաստով բառը: Օրինակ՝ գեղեցիկ - տգեղ (գիշեր, բարի, ցածր, ընկեր, հիշել, կորցնել,

կառուցել, բարձր, թարմ, քաղցր, գալ, ազնիվ, թափել, մաքրել, պարտվել, նիհար, կարճ, թաց, փափուկ, չար, մոտենալ, հիվանդ):



Ասա՛ մեկ բառով

Նպատակ. հարստացնել երեխայի բառապաշարն ընդհանրական նշանակություն ունեցող բառերով:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Մանկավարժը գնդակը նետում է երեխային և ասում միևնույն հասկացությանը (թեմատիկ խմբին) վերաբերող երեք բառ: Երեխան պետք է վերադարձնի գնդակը՝ ասելով համապատասխան ընդհանրական նշանակությամբ բառը: Օրինակ՝ լուլիկ-վարունգ-կարտոֆիլ՝ **բանջարեղեն**, տանձ-խնձոր-ծիրան՝ **միրգ** (տետր-գիրք-կարկին, գդալ-կաթսա-ափսե, վերարկու-կոշիկ-գուլպա, պահարան-բազմոց-սեղան, ավտոբուս-գնացք-ինքնաթիռ և այլն):



Ասա՛ երեք բառ

Նպատակ. ակտիվացնել բառապաշարը, սովորեցնել խոսքում ճիշտ իմաստով կիրառել գոյականները:

Ընթացք

Երեխաները շարք են կանգնում: Յուրաքանչյուր մասնակցին մեծահասակը հարց է տալիս: Պատասխանելիս երեխաները պետք է երեք քայլ անեն՝ ամեն քայլի հետ ասելով մեկ բառ-պատասխան՝ չդանդաղեցնելով քայլերը:

Օրինակ՝

Ի՞նչ կարելի է գնել (զգեստ, կոշիկ, պայուսակ):

Ի՞նչ կարելի է եփել:

Ի՞նչ կարելի է կարդալ:

Ի՞նչ կարելի է նկարել:

Ի՞նչ կարելի է ուտել:



Ո՞վ ինչ է սիրում

Նպատակ. հարստացնել երեխայի բառապաշարը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ՝ կենդանիների (արջ, շուն, ձի, կապիկ, կատու, մուկ) և դրանց սիրելի ուտելիքների պատկերներով (մեղր, ոսկոր, վարսակ, բանան, ձուկ, պանիր):

Ընթացք

Երեխաներին առաջարկում են յուրաքանչյուր կենդանու նկարի մոտ տեղադրել նրա սիրելի ուտելիքի նկարը:



Բռնի՛ր, նետի՛ր, գույներն անվանի՛ր

Նպատակ. հարստացնել երեխայի գոյականական և ածականական բառապաշարը, զարգացնել երևակայությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Մանկավարժը երեխային է նետում գնդակը և ասում որևէ գույն: Երեխան վերադարձնում է գնդակը՝ ասելով գոյականներ, որոնք ունեն կամ կարող են լինել տվյալ գույնի:

Օրինակ՝

կարմիր՝ վարդ, լուիկ, դրոշակ
նարնջագույն՝ նարինջ, գազար, փուչիկ
դեղին՝ արև, ճուտիկ, վերնաշապիկ
կանաչ՝ վարունգ, գորտ, խոտ
երկնագույն՝ երկինք, պայուսակ, ծաղիկ
սև՝ կոշիկ, տաբատ, մազակալ:



Կենդանիներ-ձագուկներ

Նպատակ. հարստացնել երեխայի գոյականական բառապաշարը:

Անհրաժեշտ նյութեր. կենդանիների և նրանց ձագերի պատկերներով նկարներ (կով-հորթ, այծ-ուլ, ոչխար-գառ, խոզ-գոճի, հավ-ճուտիկ, առյուծ-կորյուն, արջ-քոթոթ):

Ընթացք

Երեխաներին առաջարկում են յուրաքանչյուր կենդանու նկարի մոտ տեղադրել նրա ձագի նկարը:

Ցուցումներ

Խաղը կարելի է իրականացնել առանց նկարների՝ գնդակով:



Ով ինչ է անում

Նպատակ. հարստացնել երեխայի բայական բառապաշարը:

Անհրաժեշտ նյութեր. կենդանիների նկարներ (շուն, կատու, ծիտիկ, աքլոր, կով, ձուկ, օձ, գորտ):

Ընթացք

Ցուրաքանչյուր երեխայի տրվում է մեկ կենդանու նկար: Մանկավարժը հերթով անվանում է գործողություններ (հաչում է, մլավում, ծլվում, թռչում, ծուղրուղու կանչում, բառաչում, լողում, սողում, ցատկոտում), որոնք վերաբերում են կենդանիներից մեկին: Այն երեխան, ում ձեռքին այդ կենդանու նկարն է, պետք է կանգնի կամ ցույց տա տեղից:



Ո՞վ կարող է կատարել այդ գործողությունը

Նպատակ. հարստացնել երեխայի բայական բառապաշարը, զարգացնել երևակայությունը, հիշողությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Երեխաները շարք են կանգնում: Մանկավարժը հերթով երեխաներին է նետում գնդակը՝ ասելով որևէ գործողություն: Երեխաները պետք է վերադարձնեն գնդակը՝ նշելով, թե ով կամ ինչը կարող է կատարել տվյալ գործողությունը: Օրինակ՝ **Գնում է՝** երեխան, մարդը, կենդանին, ավտոբուսը, գնացքը և այլն: **Թռչում է՝** ինքնաթիռը, ուղղաթիռը, տիեզերանավը, թռչունը, ճանճը և այլն: **Լողում է՝** մարդը, ձուկը, կետը, դելֆինը, նավը և այլն:



Ի՞նչն է լինում այդպիսին

Նպատակ. հարստացնել երեխայի գոյականական և ածականական բառապաշարը, զարգացնել երևակայությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Երեխաները կանգնում են շարքով: Մանկավարժը հերթով երեխաներին է նետում գնդակը՝ հարցնելով՝ «Ի՞նչն է լինում...»: Երեխաները պետք է վերադարձնեն գնդակը՝ նշելով, թե ով կամ ինչը կարող է լինել այդպիսին: Օրինակ՝ **Ի՞նչն է լինում կլոր՝** գնդակը, խնձորը, լուլիկը, փուչիկը, անիվը, արևը և այլն: **Ի՞նչն է լինում երկար՝** թելը, պարանը, ճանապարհը, մագերը, գետը և այլն: **Ի՞նչն է լինում բարձր՝** շենքը, ծառը, պահարանը, սարը, առաստաղը և այլն: **Ի՞նչն է լինում սառը՝** ջուրը, սառույցը, պաղպաղակը, եղանակը և այլն:



Կռահի՛ր խաղալիքը

Նպատակ. հարստացնել երեխայի ածականական բառապաշարը:

Անհրաժեշտ նյութեր. 3-4 խաղալիք (օրինակ՝ նապաստակ, մկնիկ, աղվես, բադիկ):

Ընթացք

Մանկավարժը երեխաներին ցույց է տալիս խաղալիքները, անվանում դրանք և սկսում նկարագրել յուրաքանչյուր խաղալիքի արտաքին հատկանիշները: Օրինակ՝ «Մա փափուկ խաղալիք է: Այն մոխրագույն է: Պոչը կարճ է, ականջները երկար են, սիրում է գազար: Կարողանում է ճարպկորեն ցատկել»: Երեխաները, լսելով նկարագրությունը, պետք է կռահեն, թե ուր խաղալիքն է:



Օգնենք տիկնիկներին՝ դասավորել նկարները

Նպատակ. հարստացնել երեխայի բառապաշարը ընդհանրական նշանակություն ունեցող բառերով:

Անհրաժեշտ նյութեր. տիկնիկներ և տարբեր թեմաների առարկայական նկարներ (հագուստ, կահույք, սպասք, խաղալիքներ, միրգ, բանջարեղեն):

Ընթացք

Խաղավարը բաժանում է նկարները երեխաներին: Նա ասում է, որ տիկնիկները հարցնում են, թե ում մոտ ինչ նկար կա: Երեխաները անվանում են պատկերները: Այնուհետև՝ տիկնիկները խնդրում են, որ կենտրոն գան այն երեխաները, որոնց մոտ կա հագուստի նկար: Երեխաները մոտենում են, մյուսները ստուգում են՝ արդյոք ճիշտ են դուրս եկել հագուստի նկար ունեցողները: Նմանատիպ աշխատանք կատարվում է նաև մյուս թեմաների համար: Վերջում տիկնիկները շնորհակալություն են հայտնում երեխաներին:



Ասա՛ այլ կերպ

Նպատակ. ակտիվացնել հոմանիշների կիրառումը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Մանկավարժը հերթով երեխաներին է նետում գնդակը և ասում մի բառ: Գնդակը բռնող երեխան պետք է մտածի այդ բառին «ընկեր» բառ, ասի և գնդակը վերադարձնի մանկավարժին: Եթե հոմանիշը ճիշտ է, ապա երեխան մեկ քայլ առաջ է գալիս: Հաղթում է այն երեխան, ով առաջինն է հասնում սահմանված վերջնագծին: Օրինակ՝ խոշոր-մեծ, աշխատանք-գործ, գեղեցիկ-սիրուն և այլն (Ավագյան և այլք, 2017; Бабаева, 2011):

● ● ● Խոսքի քերականական կառույցի յուրացման խաղեր



Ով ինչ է ուզում դառնալ

Նպատակ. զարգացնել ըստ նկարի նախադասություն կազմելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որոնց վրա պատկերված են աշխատանքային գործողություններ:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին հարցեր է տալիս նկարի վերաբերյալ, և երեխաները պատասխանում են: Օրինակ՝ «Ի՞նչ են անում նկարում պատկերված տղաները» (Տղաներն ինքնաթիռ են պատրաստում): Ի՞նչ են նրանք ուզում դառնալ (Նրանք ուզում են օդաչու դառնալ):



Մեկ-շատ

Նպատակ. զարգացնել խոսքում գոյականի եզակի և հոգնակի թիվը ճիշտ կիրառելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Մանկավարժը հերթով երեխաներին է նետում գնդակը և եզակի թվով բառեր ասում: Երեխաները պետք է վերադարձնեն գնդակը՝ ասելով դրանց հոգնակի թիվը: Օրինակ՝ շուն-շներ, կատու-կատուներ, խնձոր-խնձորներ և այլն:



Կռահի՛ր, թե ինչից են պատրաստված

Նպատակ. նպաստել բառերը բացառական հոլովով ճիշտ գործածելուն:

Անհրաժեշտ նյութեր. առարկայական նկարներ՝ հաց, աթոռ, կարագ, դույլ, երշիկ, մուշտակ, կոշիկ և նյութերի նկարներ՝ ալյուրի, փայտի, կաթի, թիթեղի, մսի, մորթու, կաշվի և այլն:

Ընթացք

Խաղավարը առարկայական նկարները բաժանում է երեխաներին, իսկ

նյութերի նկարները դասավորում է բոլորի առջև: Այնուհետև առաջարկում է երեխաներին իրենց ձեռքի առարկայական նկարը տեղադրել համապատասխան նյութի քարտի վրա (հաց-ալյուր, աթոռ-փայտ, կարագ-կաթ, դուլ-թիթեղ, երշիկ-միս, մուշտակ-մորթի, կոշիկ-կաշի) և պատասխանել խաղավարի հարցին:

Օրինակ՝

Խաղավար. «Ինչի՞ց է պատրաստված հացը»:

Երեխա. «Հացը պատրաստված է ալյուրից»:

Խաղավար. «Ինչի՞ց է պատրաստված աթոռը»:

Երեխա. «Աթոռը պատրաստված է փայտից»:

Որպես խաղի երկրորդ տարբերակ կարելի է երեխաներին ցույց տալ նյութի նկարը, իսկ երեխան, ում մոտ համապատասխան առարկայի նկարն է, տեղադրի քարտի վրա:



Բառերը միանում են

58

Նպատակ. նպաստել բառակազմական կարողությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. բառանյութ՝ բարդ բառեր կազմելու համար:

Ընթացք

Մանկավարժը հերթով ասում է երկու բառ, որոնք երեխան պետք է միավորի և կազմի նոր բառ: Ճիշտ կատարողը խրախուսվում է կաշուն աստղիկներով: Հաղթում է նա, ով հավաքում է ամենից շատ աստղիկներ:

Օրինակ՝

մաքրություն, սիրել-մաքրասեր

աշխատանք սիրել-աշխատասեր

գրքեր, պահարան-գրապահարան

մարզվել, սրահ-մարզասրահ

մեծ, հասակ-մեծահասակ և այլն:



Ես քեզ պատմեմ, իսկ դու՝ ինձ

Նպատակ. նպաստել խոսքում գոյականի թվի ճիշտ գործածմանը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որոնց վրա պատկերված է մեկ առարկա և նկարներ, որոնց վրա նույն առարկաներից շատ է պատկերված:

Ընթացք

Մանկավարժը եզակի թվով առարկաների նկարները (օրինակ՝ գնդակ, ծաղիկ, ծառ, աթոռ, պահարան, գիրք, տանձ, ձեռք) պահում է իր մոտ, իսկ հոգնակի թվով առարկաների նկարները բաժանում է երեխաներին: Այնուհետև ցույց է տալիս մեկ նկար՝ ասելով. «Ես ունեմ գնդակի նկար, իսկ ո՞վ ունի գնդակների նկար»: Երեխան, ով ունի գնդակների նկար, պետք է բարձրացնի այն և ասի. «Գնդակների նկարն ինձ մոտ է»: Եվ այդպես շարունակ:



Ուշադի՛ր լսիր և շարունակի՛ր

Նպատակ. հասկանալ խոսքում բայի թվի ճիշտ գործածումը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որոնց վրա պատկերված է գործողություն:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին հերթով ցույց է տալիս նկար և ասում նախադասություն, որի վերջին բառը պետք է լրացնի երեխան՝ ըստ նկարի:

Օրինակ՝ Դաշտում տղաները ... (վազում են): Աղջիկները սենյակում ... (պարում են): Երեխաները բակում ... (խաղում են): Ճիշտ կատարողը խրախուսվում է միավորներով: Հաղթում է նա, ով հավաքում է ամենից շատ միավորներ:



Շարունակի՛ր միտքը

Նպատակ. նպաստել խոսքում գոյականի հոլովման վերջավորությունները ճիշտ գործածելուն:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որոնց վրա պատկերված է գործողություն:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին հերթով ցույց է տալիս նկարներ և ասում նախադասություններ, որոնց վերջին բառը պետք է լրացնի երեխան՝ ըստ նկարի: Օրինակ՝ Մայրիկը հագուստը դասավորեց ... (պահարանում): Աղջիկը նկարում է ... (մատիտով): Մայրիկը գրկել է ... (փոքրիկին): Մայրիկը հարդարում է իր ... (անկողինը): Տղան վերցրել է ... (տատիկի) ակնոցը: Ճիշտ կատարողը խրախուսվում է կպչուն նկարներով: Հաղթում է նա, ով հավաքում է ամենից շատ կպչուն նկարներ:



Ճիշտ դասավորի՛ր բառերը

Նպատակ. սովորեցնել ճիշտ հաջորդականությամբ դասավորել բառերը նախադասության մեջ:

Անհրաժեշտ նյութեր. բառաշարքեր նախադասությունների համար:

Ընթացք

Մանկավարժն ասում է, որ բառերը խառնվել են: Անհրաժեշտ է դրանք դասավորել այնպես, որպեսզի միտք (նախադասություն) ստացվի: Օրինակ՝

- մեղր, արջ, սիրում է,
- ծուխ, խողովակ, բարձրանում է,
- կա, ծաղկաման, ծաղիկ:



Ուղղի՛ր սխալները

Նպատակ. սովորեցնել գտնել նախադասության սխալները, նպաստել կապերի յուրացմանը:

Անհրաժեշտ նյութեր. նախադասություններ, որոնցում կան սխալներ:

Ընթացք

Մանկավարժն ասում է, որ երեխան ուշադիր լսի և ասի՝, թե ինչն է սխալ: Օրինակ՝

Մայրիկը ծաղկամանը դրեց սեղանի մեջ:
Հատակի մեջ գեղեցիկ գորգ կա:
Տատիկն ու պապիկն ապրում են տան վրա:
Խնձորենիները ծաղկում են ձմռանը:
Տղան *ապակիով* կոտրեց *գնդակը*:
Մնկից հետո անձրև կաճի:



Ի՞նչ են անում այս գործիքով

Նպատակ. զարգացնել բառերը գործիական հոլովով գործածելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. գործիքների նկարներ՝ մկրատ, դանակ, բահ, գդալ, վրձին, սղոց, կացին, արդուկ, սանր, ավել և այլն:

Ընթացք

Նկարները շարվում են սեղանի վրա՝ հակառակ երեսով: Երեխաները հերթով մոտենում են, վերցնում նկարները և ասում, թե ինչ կարելի է անել տվյալ գործիքով:

Խաղը կարելի է անցկացնել նաև լոտոյի տարբերակով: Այդ դեպքում մեծահասակն է նշում, թե ինչ կարելի է կատարել այդ գործիքով՝ առանց նշելու անվանումը: Երեխաները, նայելով նկարներին, պետք է կռահեն, թե որ գործիքն է:



Թզուկների աշխարհում

Նպատակ. զարգացնել -իկ, -ակ վերջածանցներով բառեր կազմելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. առարկայական նկարներ՝ տուն, աթոռ, շուն, տորթ, դուռ:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին հեքիաթ է պատմում այն մասին, որ մի օր երեխաներից մեկը հեքիաթից կախարդական բառեր էր հիշել, արտասանել էր, և բոլորը հայտնվել էին թզուկների աշխարհում, որտեղ ամեն ինչ այնքան փոքր էր, որ դժվար էր դրանք տեսնել: Երեխաները

որոշեցին զբոսնել թզուկների աշխարհում: Հանկարծ նրանք տեսան մի տուն, որն այնքան փոքր էր, որ ճիշտ կլիներ անվանել՝ ... *(երեխաները պատասխանում են՝ «Տնակ»)*, իսկ տան դուռն այնքան փոքր էր, որ ճիշտ կլիներ անվանել՝ ... *(դռնակ)*: Բացեցին դռնակը և տեսան, որ այդ փոքրիկ տնակում կան շատ աթոռներ, որոնք այնքան փոքր էին, որ ճիշտ կլիներ անվանել՝ ... *(աթոռակներ)*: Նրանք նստեցին աթոռակների վրա և, քանի որ քաղցած էին, կերան քիչ այն կողմ դրված տորթը, որն այնքան փոքր էր, որ ճիշտ կլիներ անվանել՝ ... *(տորթիկ)*: Հանկարծ լսեցին բակում հաչացող շան ձայնը և դուրս եկան ու տեսան, որ շունն այնքան փոքր է, որ ճիշտ կլինի անվանել՝ ... *(շնիկ)*:



Կեսը՝ ես, կեսը՝ դու

Նպատակ. զարգացնել բարդ բառեր կազմելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Մանկավարժը հերթով երեխաներին է նետում գնդակը և ասում որևէ բարդ բառի առաջին արմատը (որոշ դեպքերում՝ նաև հոդակապը): Գնդակը բռնող երեխան պետք է ասի երկրորդ արմատը: Օրինակ՝ ինքնա-թիռ, ուղղա-թիռ, այգե-գործ, ծառա-տունկ, մագա-կալ, հեռա-խոս, հեռուստա-ցույց, գրա-պահարան, գրա-դարան, ջութակա-հար, քաղցրա-կեր և այլն:

Որպես խաղի ավելի հեշտ տարբերակ՝ կարելի է խաղալ ոչ թե բարդ, այլ պարզ բառերով՝ վանկատելով: Օրինակ՝ դա-սա-րան, սե-դան, ա-տամ, ա-թոռ, ծի-րան, մա-տիտ, ծի-տիկ և այլն: Հուշելու նպատակով կարելի է երեխաների առջև դնել համապատասխան նկարները:



Ու՞մ պոչն է

Նպատակ. զարգացնել բառերը սեռական հոլովով գործածելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որոնց վրա պատկերված են առանց պոչի կենդանիներ և նկարներ, որոնց վրա պատկերված են պոչերը:

Ընթացք

Մանկավարժը կենդանիների նկարները բաժանում է երեխաներին: Այնուհետև ցույց է տալիս որևէ կենդանու պոչ և հարցնում, թե ում պոչն է: Այն երեխան, ում մոտ գտնվում է տվյալ կենդանու նկարը, պետք է կանգնի և պատասխանի, օրինակ՝ աքլորի, նապաստակի, աղվեսի, վագրի, ձիու և այլն (Козырева О.А., 2004, Ավագյան Ա. և այլք, 2017):

● ● ● Կապակցված խոսքը զարգացնող խաղեր



Անգետիկը խանութում

Նպատակ. զարգացնել երկխոսությունը և առարկան նկարագրելու կարողությունը:

Ընթացք

Անգետիկը մտնում է խանութ և ասում, որ մոռացել է այն իրի անվանումը, որը պետք է գներ: Խաղը շարադրված է վաճառողի և Անգետիկի երկխոսության ձևով:

Վաճառող.

- Դու ցանկանում էիր գնել միրգ, թե՞ բանջարեղեն:

Անգետիկ.

- Ես ուզում էի գնել միրգ:

Վաճառող.

- Ի՞նչ գույն ունի այդ միրգը:

Անգետիկ.

- Այն դեղին է:

Վաճառող.

- Իսկ ի՞նչ ձև ունի:

Անգետիկ.

- Այդ միրգը ձվաձև է:

Վաճառող.

- Ի՞նչ համ ունի այն:

Անգետիկ.

- Այն թթու է:

Վաճառող.

- Դու երևի ցանկանում էիր գնել կիտրոն, այնպես չէ՞:

Անգետիկ.

- Ճիշտ է, կիտրոն: Այն դեղին, ձվաձև, թթու միրգ է:

Ցուցումներ

Սկզբում ցանկալի է, որ վաճառողը լինի մանկավարժը, այնուհետև՝ մանկավարժը և երեխան դերերով փոխվեն: Խաղում հմտանալուց հետո և՛ վաճառողի, և՛ Անգետիկի դերերը պետք է կատարեն երեխաները:



Կռահի՛ր, թե ինչ ունեմ

Նպատակ. զարգացնել նկարագրական խոսք կառուցելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. առարկայական նկարներ և զգայական քարտեր:

աչք	ձեռք	բերան	ականջ	քիթ

Ընթացք

Մինչ խաղն սկսելը, մանկավարժը երեխաների հետ փորձում է նկարագրել առարկաներն ըստ զգայական քարտի՝ նշելով.

- ✓ Ի՞նչ գույն և ձև ունի (աչք)
- ✓ ինչպիսի՞ն է շոշափելիս, ծա՞նր է, թե՞ թեթև, ի՞նչ կարելի է դրանով անել (ձեռք)
- ✓ ի՞նչ համ ունի՝ քաղցր, թթու, դառը, աղի (բերան)
- ✓ ի՞նչ ձայն է արձակում (ականջ)
- ✓ ի՞նչ հոտ ունի (քիթ):

Այնուհետև սկսում են խաղալ: Խաղը կարելի է անցկացնել մրցույթի ձևով՝ երեխաներին բաժանելով երկու թիմի: Առարկայական նկարները դրվում են սեղանին՝ հակառակ կողմով: Յուրաքանչյուր խմբի երեխաները հերթով վերցնում են մեկական նկար և սկսում առանց անվանելու նկարագրել առարկան՝ ըստ զգայական քարտի, որպեսզի խմբի մյուս երեխաները կռահեն այն: Յուրաքանչյուր թիմի տրվում է պատասխանի երեք տարբերակի հնարավորություն: Կռահելու դեպքում՝ թիմը ստանում է մեկ միավոր, իսկ չկռահելու դեպքում՝ միավոր չի ստանում: Հաջորդը նկար է վերցնում երկրորդ թիմի առաջին մասնակիցը, և այդպես շարունակ: Խաղը շարունակվում է մինչև նկարների վերջանալը: Հաղթում է այն թիմը, որն ավելի շատ միավոր է հավաքում:



Դիմանկար

Նպատակ. զարգացնել երկխոսությունը և նկարագրական խոսք կառուցելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. նկար, որի վրա պատկերված է Անգետիկը կամ խաղալիք Անգետիկ, որի փոխարեն խոսում է մեծահասակը (կամ որևէ երեխա) և նկար, որի վրա պատկերված է Անգետիկի ընկերը, որը խաղի սկզբում երեխաներին ցույց չի տրվում:

Ընթացք

Մանկավարժն ասում է, որ այսօր երեխաներին հյուր է եկել Անգետիկը և խնդրում է նկարել իր ընկերոջ դիմանկարը: Դրա համար երեխաները պետք է հարցնեն, թե ինչպիսին է Անգետիկի ընկերը: Երեխաները հարցնում են, Անգետիկը պատասխանում է, որ նա շատ լավն է: Բայց դա բավական չէ դիմանկար նկարելու համար: Ուստի, մանկավարժն ասում է, որ երեխաները հարցեր տան Անգետիկի ընկերոջ աչքերի, մազերի գույնի, հասակի, հագուստի մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչ է նա սիրում, ինչ կարող է անել և ինչպիսի բնավորություն ունի: Երեխաների հարցերից հետո բոլորը սկսում են նկարել Անգետիկի ընկերոջ դիմանկարը: Ավարտելուց հետո մանկավարժը ցույց է տալիս

Անգետիկի ընկերոջ նկարը, և բոլորը համեմատում են իրենց դիմանկարները Անգետիկի ընկերոջ նկարի հետ:


Խաղալիքների խանութ

Նպատակ. զարգացնել երկխոսություն և նկարագրական պատմություն կազմելու կարողությունը:


Անհրաժեշտ նյութեր. խաղալիքներ՝ գնդակ, ավտոմեքենա, բուրգ, ճուտիկ, աքլոր, Գնդիկ-բոքոնիկ, փուչիկ, տնակ, գորտ և խաղալիքի նկարագրման սխեմա (Տ. Ա. Տկաչենկո):

Ընթացք


Խաղալիքները դասավորվում են այնպես, ինչպես խանութում: Մանկավարժն ասում է, որ երեխաներն այսօր գնալու են խաղալիքների խանութ՝ խաղալիքներ գնելու: Դրա համար պետք է նկարագրել խաղալիքը, որպեսզի վաճառողը հասկանա, թե ինչպիսի խաղալիք է պետք: Այնուհետև մանկավարժն ասում է, որ կան տարբեր գույնի խաղալիքներ: Օրինակ՝ գնդակն ու ավտոմեքենան կարմիր են, ճուտիկն ու Գնդիկ-բոքոնիկը՝ դեղին, փուչիկն ու տնակը՝ կապույտ, բուրգը՝ կանաչ: Գույնի յուրացումից հետո անցնում են չափին և ձևին:




գույն




ձև



չափ



նյութ



մասեր



ինչ կարելի է անել

Մանկավարժն ասում է.

- Որոշ խաղալիքներ մեծ են, մյուսները՝ փոքր: Կան կլոր խաղալիքներ՝ գնդակը, փուչիկը, Գնդիկ-բոքոնիկը: Խորանարդիկն ուղղանկյունաձև է: Բացի այդ, խաղալիքները պատրաստված են տարբեր նյութերից: Կան փայտե, երկաթե, ռետինե և այլ նյութերից պատրաստված խաղալիքներ:
Խաղալիքներով կարելի է տարբեր կերպ խաղալ:

Այս աշխատանքներից հետո անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել նկարագրել խաղալիքն ըստ սխեմայի:

- Խաղալիքը նկարագրելու համար անհրաժեշտ է նշել դրա գույնը, ձևը, չափը, նյութը, որից պատրաստված է, ինչպես նաև այն, թե ինչպես կարելի է դրանով խաղալ: Իսկ այժմ կռահեք, թե ինչ խաղալիք եմ ուզում գնել: Այն կանաչ է, փոքրիկ, կլորավուն, կարողանում է ցատկել և կռկռալ (կվա-կվա):

Այնուհետև երեխաները բաժանվում են վաճառողների ու գնորդների և սկսում են խաղալ (Виноградова, Позднякова, 2011; Ткаченко, 2003):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Թադևոսյան Է., Կարապետյան Ս., Կիրակոսյան Ա., Հովյան Գ., Չարչյան Ա., Պալյոզյան Ժ. (2017). Լոգոպեդիան գործնականում: Եր.: Ասողիկ, 2017.- 76 էջ:
2. Պալյոզյան Ժ.Հ., Թադևոսյան Է.Ռ. (2009). Խոսքային նյութեր ճիշտ հնչարտաբերման ամրապնդման համար: Եր., Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան, կրթականավիր ՓԲԸ, 78 էջ:
3. Арушанова Л.Г., Рычагова Е.С. (2008). Игры со звучащим словом, Дошкольное образование. №9. С. 4-5.
4. Бабаева Т. И. (2011). Примерная основная программа дошкольного образования «Детство». и др.– СПб.: «Детство-пресс», 321 с.
5. Ветчинкина Т. (2009). Игровая деятельность как средство коррекции речевых нарушений у дошкольника // Учитель. №3. С.14-15.
6. Виноградова Н.А., Позднякова Н.В. (2011). Сюжетно-ролевые игры для старших дошкольников: практ. пособие /3-е изд. – М.: Айрис-пресс. 125 с.
7. Гербова В.В. (2014). Занятия по развитию речи с детьми 4-6 лет (старшая разновозрастная группа). М.: Просвещение. 207с.
8. Дурова Н.В. (2002). Фонематика. Как научить детей слышать и правильно произносить звуки. Методическое пособие. М.: Мозаика-Синтез. 112 с.
9. Жукова Р.А. (2005). Дидактические игры как средство подготовки детей к школе. 1 часть.- Волгоград: Учитель – Аст. 80 с.
10. Филичева Т.Б., Чиркина Г.В. (2007). Устранение общего недоразвития речи у детей дошкольного возраста: М., Айрис-пресс.
11. Козырева О.А. (2004). Лексико-грамматические игры // Логопед. №6.- С. 89-93.
12. Сохин, Ф.А. (2015). Психолого-педагогические основы развития речи дошкольников 2-е изд.-М.: Издательство Московского психолого-социального института; Воронеж: Издательство НПО «МОДЭК». 224 с.

13. Ткаченко Т.А. (2003). Формирование лексико-грамматических представлений: Сборник упражнений и методических рекомендаций для индивидуальных занятий с дошкольниками, М.: Гном и Д.
14. Ткаченко Т.А. (2014). Коррекция фонетических нарушений у детей: Подготовительный этап. М., изд. ВЛАДОС. 112 с.

ԼՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՌԻՂԴՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադպրոցական տարիքը մարդու սրընթաց զարգացման շրջանն է, երբ ձևավորվում են նրա ֆիզիկական և հոգեկան որակները, անհատական առանձնահատկությունները: Այս տարիքում երեխան նախապատրաստվում է հետագա ուսումնական գործունեության և ողջ կյանքի ընթացքում գիտելիքներ և կարողություններ կուտակելու, դրանք գործնականում կիրառելու գործընթացին: Նախադպրոցական տարիքը նաև անձի ձևավորման և կայացման առաջին փուլն է, երբ ձևավորվում են արժեհամակարգի նախադրյալները: Այս որակների ձևավորումը պայմանավորված է շրջակա միջավայրում կողմնորոշվելու, բարոյական և էթիկական արժեքները ճանաչելու գործընթացով (Головин, 2010):

Երեխայի հոգեկանի ձևավորման գործում վճռական է նրա՝ գործունեություն ծավալելու կարողության զարգացումը: Շրջապատող իրականության մեջ հանգամանքներին համապատասխան ակտիվ գործունեության ընթացքում զարգանում են մարդու հոգեկան գործընթացները, հարստանում և բարդանում են իմացության ձևերը, յուրացվում է սոցիալական փորձը: Հոգեբանության մեջ առանձնացվում են մարդու զարգացման տվյալ փուլում հոգեբանական գործընթացների ծագմանը, վերակառուցմանը, դրանց միջև նոր կապերի ձևավորմանը նպաստող առաջատար գործունեություններ (Богданова, 2002): Օնտոգենեզի սկզբնական փուլերում առանձնացվում են առաջատար գործունեության հետևյալ տեսակները.

- անմիջական – հուզական շփում (մանկիկություն)
- առարկայամանիպուլիացիոն (վաղ մանկություն)
- սյուժետադերային խաղ (նախադպրոցական հասակ)
- ուսումնական (կրտսեր դպրոցական հասակ):

 Խաղը նախադպրոցական տարիքի երեխայի գործունեության առաջատար ձևն է:

Այն առաջատար է ոչ այն պատճառով, որ զարգացման այս փուլում երեխայի միակ զբաղմունքն է (երեխան օրվա ընթացքում խաղում է մոտ երեք ժամ), այլ այն պատճառով, որ տեղի են ունենում միջֆունկցիոնալ կապերի վերակառուցումներ, ձևավորվում են գործընթացներ, որոնք նախապատրաստում են երեխային իր զարգացման նոր, առավել բարձր աստիճանին անցնելու համար: Ուստի սա պայմանավորված է ոչ թե քանակական ցուցիչով, այլ որակական փոփոխություններով. խաղի միջոցով տեղի են ունենում երեխայի հոգեկանի զարգացումը, ուսուցումն ու դաստիարակությունը: Խաղի մեջ դրսևորվում են ինչպես երեխայի վերաբերմունքը շրջապատող աշխարհի, մարդկանց, առարկաների և երևույթների նկատմամբ, այնպես էլ նրա անհանգստությունը, վախերը, չիրականացած ցանկությունները: Խաղը նպաստում է նախադպրոցականի ճանաչողական, հուզականային և բարոյական ոլորտների զարգացմանը, նորմերի յուրացմանը, բառապաշարի հարստացմանը, հաղորդակցական հմտությունների ձևավորմանը: Կարելի է ասել, որ երեխայի և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան առանձնահատկությունները, ինչպես նաև նրա ընդունակություններն ու հոգեկան հակազդումները մեծապես կապված են խաղային գործունեության բնույթից:

Խաղը հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում հուզական, իսկ հետո մտավոր մակարդակում յուրացնում է մարդկային փոխհարաբերությունների ողջ համակարգը:

 Մեթոդական ցուցումներ լսողության խանգարումներ ունեցող երեխաների խաղային գործունեությունը կազմակերպելու վերաբերյալ

Լսողության խանգարումով երեխայի հետ աշխատող մանկավարժները պետք է նկատի ունենան հետևյալ կարևոր հանգամանքները:

- Լսողության խանգարումը հազվադեպ է լինում տոտալ: Դա նշանակում է, որ լսողության անգամ խորը խանգարումներ ունեցող երեխաները կարող են ինչ-որ բան լսել (լսողական սարքով, խխունջային իմպլանտով): Լսելու նույնիսկ չնչին հնարավորության զարգացումը և առօրյա կիրառումը երեխայի համար ճանաչողական կարևոր նշանակություն և արտաքին միջավայրում կողմնորոշվելու անփոխարինելի դեր ունեն:
- Ցանկացած խաղ, անկախ դրա հիմնական նշանակությունից, պետք է ուղղված լինի ***լսողական ընկալման զարգացմանը և արտաբերման ձևավորմանը***:
- Յուրաքանչյուր խաղի ընթացք կարելի է փոփոխել այնպես, որ այն նպաստի երեխայի լսողական ընկալման և արտաբերման զարգացմանը:
- Նախադպրոցական տարիքի չլսող երեխաների խաղային գործունեությունը հապաղում է մինչև 2 տարի:
- Նախադպրոցական տարիքի չլսող երեխաների իմացական բոլոր գործընթացները՝ անգամ տեսողական ընկալումը, զարգանում են յուրահատուկ արագությամբ և բովանդակությամբ. օնտոգենեզի վաղ փուլերում բնածին ծանրալսությամբ երեխայի զարգացումը գրեթե չի տարբերվում լսող հասակակցի զարգացումից, սակայն, խոսքի դերի մեծացմանը զուգընթաց, այս տարբերությունը խորանում է, այնքան ժամանակ, քանի դեռ չի իրականացվում համապատասխան մանկավարժական աշխատանք, չի կազմակերպվում համապատասխան աջակցություն՝ միջավայրի,

պարապմունքների, խոսքային նյութի հարմարեցում, խոսքային հաղորդակցումը խթանող միջավայրի ստեղծում:

- Արտաքին աշխարհից եկող տեղեկության (ձայնային) ընկալման սահմանափակումների, տպավորությունների և կենսափորձի աղքատության պատճառով, լսողության խանգարումներ ունեցող երեխաների իմացական գործընթացները զարգանում են անհամաչափ: Այն գործընթացները, որոնց զարգացումն անմիջականորեն կապված չէ լսողության խանգարման և խոսքի զարգացման հետ՝ գերակշռում են մյուսներին: Այսպես՝ մտածողության ակնառու ձևերը գերակշռում են ըմբռնողությանը, գրավոր խոսքը գերակիշտ դեր ունի բանավորի համեմատ: Մանկավարժի ջանքերը պետք է ուղղված լինեն այս անհամաչափությունը հաղթահարելուն, չլսող երեխայի ներդաշնակ զարգացումն ապահովելուն:
- Չլսող երեխաների խոսքի զարգացման, բառապատկերների ձևավորման գգայական հիմքը խիստ տարբերվում է լսող հասակակիցներից: Լսողների սկզբնական բառապատկերները լսողական բնույթի են, չլսող երեխաներինը՝ տեսողական (գրավոր խոսքը կամ մատնախոսությունը): Լսողության խանգարում ունեցող երեխաների ծանոթությունը բառային խոսքին սկսվում է բառի տեսողական՝ քարտերի վրա գրված բառերի չմասնատված ընկալումից և քարտերի ճանաչումից: Այս քարտերը համադրվում են համապատասխան առարկաների, պատկերների և գործողությունների հետ: Այսպես՝ բառերի չմասնատված տեսողական ընկալման՝ **«գլոբալ ընթերցանության»** շնորհիվ չլսող երեխաները պատկերացում են կազմում դրանց իմաստի մասին: Նրանց՝ գրված բառերն ընթերցելու և ընկալելու գործընթացը տարբերվում է լսող երեխաների ընթերցանության յուրացման վերլուծահամադրական սկզբունքից: Եթե լսողների ընթերցանությունը ածանցվում է բանավոր խոսքին և ենթադրում է գրաֆիկական պատկերների (տառերի) վերափոխում հնչյունների,

ապա չլսող երեխաների համար բառերի տեսողական ընկալումը խոսքին ծանոթանալու առաջին փուլն է և ելակետը: Լսողության խանգարումով շատ երեխաների համար ողջ կյանքում խոսքի ընկալման ժամանակ առաջատար դերը վերապահվում է տեսողական բաղադրամասին, որի շնորհիվ էլ տեղի է ունենում լսողական ընկալման անբավարարության փոխհատուցումը: Ուստի չլսող երեխաների խաղերում բառաքարտերի կիրառումը, գլոբալ ընթերցանության հմտությունների զարգացումը խիստ կարևոր են՝ երեխայի զարգացման ամենավաղ փուլերից սկսած:

- Մանկավարժը պետք է համոզվի, որ երեխան հասկացել է խաղի հրահանգը: Սովորաբար չլսող երեխան պարզապես գլխով հաստատում է՝ ի պատասխան «հասակացա՛ր» հարցին: Այդ պատճառով մեծահասակը պետք է խոսելիս, խաղի ընթացքը բացատրելիս կանգնի այնպես, որ երեխան հստակ տեսնի նրա դեմքը, օգտագործի հարուստ դիմախախ և կողմնորոշող ժեստեր: Կարելի է պարզապես օրինակով ցույց տալ խաղը:

Լսողության խանգարումներ ունեցող երեխաներին սյուժետադերային խաղի մեջ ընդգրկելու առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքի երեխաները սյուժետադերային խաղի ընթացքում ստանձնում են մեծահասակների դերերը և իրենց ստեղծած խաղային իրադրությունում վերաբրտադրում են նրանց գործողություններն ու փոխհարաբերությունները: Խաղի ընթացքում երեխաները յուրացնում են գործունեության պահերը և բացահայտում են դրանց միջև հիերարխիկ հարաբերությունները, զարգանում են խորհրդանիշներով (սիմվոլներով) գործողությունները, ձևավորվում է կամաձին ղեկավարումը, ինչպես նաև՝ նրանք հասկանում են մեծահասակների գործողությունների իմաստը և դրդապատճառները, յուրացնում են վարքի սոցիալական կանոնները և բարոյական նորմերը, գործում են միասին: Առանձնացվում են սյուժետադերային

խաղի հետևյալ բաղադրատարրերը՝ սյուժե և բովանդակություն, փոխարինող առարկաների կիրառում, դերի ստանձնում: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների խաղի բոլոր բաղադրամասերում դրսևորվում են առանձնահատկություններ, որոնց շտկումը մանկավարժին հնարավորություն կտա օգնել երեխային առանց հապաղման և ներդաշնակորեն անցնելու զարգացման այս կարևոր փուլը (Богданова, 2002):

Սյուժեն և բովանդակությունը երկու փոխկապակցված բաղադրատարր են: Խաղի մեջ երեխաներն արտացոլում են իրենց շրջապատող իրականությունը. որքան լայն է նրանց շփումների իրական ոլորտը, այնքան բազմազան է խաղի սյուժեն: Դերային խաղի բովանդակությունը մեծահասակների գործունեության հիմնական պահն է: Այդ պատճառով՝ միևնույն սյուժեն կարող է կիրառվել տարբեր բովանդակությամբ: Առանձնացվում են խաղի բովանդակության զարգացման երեք փուլերը՝ կրտսեր նախադպրոցական տարիքում խաղի բովանդակությունը մեծահասակների գործողություններն են որոշակի առարկաներով, միջին նախադպրոցական տարիքում խաղի բովանդակությունը մարդկանց փոխհարաբերություններն են, դրանց արտաքին կողմը, ավագ նախադպրոցական տարիքում խաղի բովանդակությունը դառնում է դերից բխող կանոնների սահմանումը և դրանց ենթարկվելը, այսինքն՝ խաղի մեջ արտացոլվում է սոցիալական հարաբերությունների ներքին կողմը:

Ինչպես լսող, այնպես էլ չլսող երեխաները վերարտադրում են մեծահասակների կյանքի առանձին դրվագներ, նրանց գործունեությունը և փոխհարաբերությունները: Չլսող երեխաները խաղում կիրառում են շրջապատից ստացած տպավորությունները: Բայց քանի որ լսողության խանգարում ունեցող երեխաներն աշխարհն ընկալում են խոսքային սահմանափակ միջոցներով, նրանց խաղն ավելի երկար է մնում առաջին փուլում, նրանց սյուժետային խաղերը միօրինակ են և պարզ: Առանց չլսող երեխաների փորձի ընդլայնմանն ուղղված հատուկ աշխատանքի՝ հնարավոր չի լինի հաղթահարել

նրանց խաղի մոտիվացիոն կողմի հապաղումը: Այսօրինակ երեխաների համար գերակշռում են կենցաղային խաղերը, որոնք վերարտադրում են մարդկանց փոխհարաբերությունների շատ փոքր մասը:

Քանի որ չլսող երեխաները իրականությունն արտացոլելու համար չեն օգտվում բավարար ընդհանրացումներից, նրանք չեն կարողանում ինքնուրույն առանձնացնել երևույթների հիմնական կամ էական կողմը և կենտրոնանում են երկրորդական առանձնահատկությունների վրա: Օրինակ, «Խանութում» խաղը կանգ է առնում, եթե երեխաներին չի տրվել ապրանքը փաթեթավորելու թուղթ: Լսողության խանգարում ունեցող երեխաները չեն կարողանում ինքնուրույն բացահայտել հարաբերությունների կառուցվածքը, բայց ակնառու առարկայական գործողությունները խաղի մեջ ներկայացնում են շատ մանրամասնորեն և բժախնդրությամբ: Սյուժեն երկրորդ պլանում է հայտնվում առարկայական մանրամասն գործողությունների պատճառով: Օրինակ՝ «Տուն-տունիկ» խաղալիս լվացքից առաջ չեն մոռանում ողողել թասը, նրանք սկսում են խաղալ «լվացք», ընդ որում՝ լվացք անում են ոչ թե որևէ նպատակի համար, այլ՝ հենց լվացքի համար:

Խոսքի հապաղման հետևանքով չլսող երեխաների ընդհանրացման կարողությունը և իրականության ստեղծագործական արտացոլման հնարավորությունը սահմանափակ դրսևորում ունեն: Երեխաները մեխանիկորեն կրկնում են միևնույն գործողությունները, բառերը և դերերը: Նրանք ձգտում են վերարտադրել նախորդ խաղի պայմանները:

Չլսող երեխաների խաղում նկատվում են մեխանիկական նմանակումներ: Նմանակելով որևէ մեկին՝ երեխան ոչ մի մանրուք չի ավելացնում իր կողմից:

Նմանակման տարրերը պահպանվում են նաև ավագ նախադպրոցական տարիքի երեխաների խաղում:

Իրական խաղային գործունեությունը ձևավորվում է, երբ երեխան մի առարկայի տակ ենթադրում է մեկ այլ առարկա, մի գործողության փոխարեն՝ մեկ այլ գործողություն: Խաղային գործողությունը ունի խորհրդանշական բնույթ: Առարկաները խաղի ժամանակ գործածելիս, լսող երեխաները դրանք անվանում են կիրառվող միջավայրին և գործառույթին համապատասխան (Речицкая, Гущина, 2019): Անգամ փոխարինելու տեսակետից հարմար գործառույթ ունեցող առարկան, լսողության խանգարումով երեխաները միշտ չէ, որ կարողանում են օգտագործել: Եթե մեծահասակը մատիտն անվանում է դանակ, և երեխան համաձայնում է նույն կերպ կոչել այդ առարկան, դա դեռ չի նշանակում, որ խաղալիս նա «կկտրի» մատիտով: Ընդունելով (մեծահասակի առաջարկած) առարկաների նոր անվան նշանակությունը՝ չլսող երեխաները հաճախ գործում են ոչ թե այդ նոր անվանը համապատասխան, այլ՝ դրա անմիջական ընկալվող առանձնահատկություններով: Օրինակ՝ երեխան համաձայնում է, որ գնդակը կկատարի ձմերուկի դեր, իսկ մատիտը՝ դանակի, և անվանում է դրանք նոր խաղին համապատասխանող անուններով: Բայց, երբ մեծահասակը առաջարկում է «կտրել ձմերուկը», նա, խաղից բխող գործողություն կատարելու փոխարեն, վերցնում է մատիտը և նկարում գնդակի վրա:

Սյուժետադերային խաղում փոխարինող առարկաների գործածումը լսողության խանգարումներ ունեցող երեխային պետք է սովորեցնել աստիճանաբար՝ հաշվի առնելով, որ՝

1. ծանոթ առարկաները ավելի դժվար է կիրառել իբրև փոխարինողներ, քան անծանոթները,
2. քանի դեռ երեխան չգիտի առարկայի անվանումը և իրական նշանակությունը՝ չի կարելի այն խաղում փոխարինել այլ առարկայով,
3. փոխարինող առարկաները պետք է որոշակի նմանություն ունենան փոխարինվող առարկայի հետ,

4. փոխարինվող առարկան պետք է գործառույթով հարմար լինի փոխարինողի դերի համար, պետք է ունենա այնպիսի հատկություններ, որոնք հնարավորություն կտան կատարել այն գործողությունները, որոնք կատարվում են փոխարինվող առարկայով:

Լսող երեխաների խաղային գործունեության զարգացման արդյունքում խաղային գործողությունները դառնում են քիչ մանրամասնած, կրճատված, քանի որ գործողության կատարողական մասը, դրա գործառույթային բաղադրամասերը կարող են մասամբ կրճատվել կամ ընդհանրապես բացակայել: Գործողությունների այսպիսի կրճատումները փոխարինվում են բառային արտահայտություններով: Օրինակ՝ տիկնիկին կերակրելիս երեխան մի քանի անգամ գդալը մոտեցնելուց հետո հարցնում է՝ արդեն կշտացա՞ր: Նրանց հետաքրքրությունները տեղափոխվում են մարդկային փոխհարաբերությունների բնագավառ:

Չլսող երեխաները, ընդհակառակը, ամենայն մանրամասնությամբ վերարտադրում են տվյալ իրադրությունը. խաղային գործունեության զագացմանը զուգընթաց պահպանում են գործողությունների ծավալումը, ամբողջականությունը, մանրամասների վերարտադրումը: Օրինակ՝ տիկնիկին կերակրելիս չի բավարարվում գդալը մոտեցնելով, նախօրոք լցնում է ճաշը կաթսայից, խառնում է, փչում է, որ սառչի, ապա՝ սկսում է կերակրել և այլն (Богданова, 2002):

Չլսող երեխաների աշխարհընկալումը սահմանափակ է լսողական զգայությունների և ընկալման բացակայությունների, հաղորդակցման դժվարությունների և սահմանափակումների հետևանքով: Սա բարդացնում է երեխաների վարքի դեկավարումը և մեծահասակների փորձի հաղորդումը:

Լսողական տպավորությունների բացակայությունը չի փոխհատուցվում տեսողական ընկալումով, մեծահասակի կողմից չուղղորդված տեսողական ընկալումը չի կարող լսողության

խանգարում ունեցող երեխային տալ բավարար հիմք նյութի ընդհանրացման համար:

Դեր ստանձնելու ցանկությունը այլ մարդու կամ մարդկանց գործառույթների և փոխհարաբերությունների վերաբառնալիքության ձգտումն է: Խաղի ընթացքում երեխան սկսում է գործել իր ստանձնած դերին համապատասխան: Չլսող երեխան երևակայության զարգացման հապաղման հետևանքով դժվարությամբ է ստեղծագործաբար կատարում իր դերը: Օրինակ՝ «մանկապարտեզ» խաղալիս չլսող երեխաները դաստիարակի դերը կատարող երեխային անվանում են իրենց դաստիարակի անունով (օրինակ՝ Աննա մորաքույր, անգամ՝ եթե դերը կատարում է տղա): Երեխաները փորձում են հնարավորինս մանրամասն հաղորդել կերպարի արտաքին դրսևորումները՝ քայլվածքը, շարժումները և այլն:

Այսպիսով չլսող երեխաների պոլիսեմադերային խաղի բոլոր բաղադրատարրերը զարգանում են որոշակի առանձնահատկություններով: Սա հանգեցնում է վարքի կամածին ղեկավարման հապաղմանը, ակնառու գործնականից ակնառու պատկերավոր մտածողությանն անցնելու դանդաղեցմանը, պատկերացման միջոցով գործնական խնդիրների լուծման (փոխարինող առարկաներով) հապաղմանը, սեփական գործողությունները, արարքները, դրդապատճառները վերլուծելու, դրանք վարքի հասարակական նորմերի և կանոնների հետ համեմատելու դժվարություններին, ստեղծագործական երևակայության դանդաղ զարգացմանը (Шапкова, 2002): Իսկ խոսքի զարգացման հապաղումը (դրա ընդհանրացնող և կարգավորող գործառույթի հապաղումը) խանգարում է չլսող երեխային վերացարկվել անմիջական ընկալումից և դժվարացնում է երևակայական խաղային իրավիճակի ստեղծումը:

Առանց հատուկ մանկավարժական ուղղորդման, լսողության խանգարումներ ունեցող երեխաների խաղալու կարողությունը զարգանում է դանդաղ և կրում է տարերային բնույթ, բայց ճիշտ մանկավարժական միջամտության շնորհիվ նրանց խաղը

կատարելագործվում է: Խաղի ընթացքում ծագում է շփվելու անհրաժեշտություն, խթանվում է հաղորդակցումը, հարստանում է երեխաների բառապաշարը, գործողությունները կառավարելու հարցում մեծանում է խոսքի նշանակությունը: Ուստի վերոշարադրյալ առանձնահատկությունների հիման վրա լսողության խանգարումներ ունեցող երեխաների խաղի կազմակերպումն ունի փոխհատուցող նշանակություն:

▲ ▼ ▲ **Շարժունակությունը զարգացնող խաղեր**

▲ ▼ ▲ **Գնացք**

Նպատակ. զարգացնել լսողական ուշադրությունը, արագ կողմնորոշվելու, հավասարակշռությունը պահպանելու ունակությունը:

Ընթացք

Երեխաները շարքով կանգնում են խաղավարի (մեքենավար) հետևում: Մեքենավարը հնչեցնում է շչակը (հնչեցնում է շվի, սուլիչ կամ նմանակում է շչակի ձայն՝ ուուու՛): Գնացքը շարժվում է՝ հաղթահարելով տարբեր խոչընդոտներ կամ փոխելով



գործողության ձևը: Ամեն անգամ նոր խոչընդոտի հանդիպելիս՝ մեքենավարը հնչեցնում է շչակը: Երեխաները, լսելով դրա ձայնը, պետք է ուշադիր հետևեն մեքենավարին և անսխալ հաղթահարեն խոչընդոտը կամ փոխեն գործողությունը: Մխավորդները լքում են գնացքը:

▲ ▼ ▲ **Հայելի**

Նպատակ. զարգացնել շարժողական ոլորտը, ուշադրությունն ու երևակայությունը, շարժումների հաջորդականության մտապահումը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր կենդանիների անվանումներ և գործողություններ նշող բառաքարտեր գլոբալ ընթերցանության համար:

Ընթացք

Խաղի մասնակիցները շարվում են և կատարում խաղավարի հրահանգները՝

1. Կրկնում են խաղավարի առանձին շարժումները, որոնք նա զուգահեռ անվանում է: Այս խաղը կարող է բարդացվել. մանկավարժը չի ցուցադրում, այլ միայն անվանում է շարժումը, իսկ երեխաները լսողության հիման վրա կատարում են այն: Մանկավարժը շարժումը ցուցադրում է միայն այն դեպքում, եթե երեխաները դժվարանում են դա ինքնուրույն անել:
2. Երեխաները կրկնում են շարժումները որոշակի հաջորդականությամբ: Այդ հաջորդականությունը պետք է մտապահեն և կատարեն ըստ հրահանգի:
3. Խաղավարն անվանում է տարբեր կենդանիներ, երեխաները նմանակում են դրանց շարժումները:

Ցուցումներ

Լսողական ընկալման զարգացման ցածր մակարդակ ունեցող երեխաների համար խոսքին զուգահեռ կարող են ցուցադրվել բառաքարտեր:



Կրակ - ջուր – քամի

Նպատակ. զարգացնել շարժողական որոտը, լսողական ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. Բառաքարտեր՝ գլոբալ ընթերցանության համար (կրակ, ջուր, քամի):

Ընթացք

Երեխաները կանգնում են շրջանաձև: Մանկավարժը պատահականության սկզբունքով արտաբերում է *ջուր*, *կրակ*, *քամի* բառերը: Երեխաները որոշակի բառը լսելիս պետք է կատարեն

համապատասխան շարժումներ: *Ջուր* բառը լսելիս ձեռքերը պարզում են առաջ և կատարում են ալիքաձև շարժումներ: *Կրակ* բառը լսելիս ձեռքերը բարձրացնում են վեր և դաստակները թափահարում են բոցկլտացող կրակի պես: *Քամի* բառը լսելիս ձեռքերը տարածում են աջ և ձախ և կատարում են շրջանաձև շարժումներ: Եթե երեխայի լսողական ընկալման զարգացման մակարդակը շատ բարձր չէ, երեխան պետք է կանգնի այն դիրքով, որ հստակ տեսնի ուսուցչի դեմքը և շրթունքները: Աշխատանքների ավելի վաղ փուլում, բառերի արտաբերումը կարող է ուղեկցվել բառաքարտերի ցուցադրումով (գլոբալ ընթերցանություն):



Որսա՝ գնդակը

Նպատակ. զարգացնել հիշողությունը, ուշադրությունը, արագ շարժվելու և կողմնորոշվելու ունակությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Երեխաները կանգնում են շրջանաձև: Խաղավարը կանգնում է շրջանի կենտրոնում. վեր նետելով գնդակը՝ կանչում է երեխաներից մեկի անունը:

1. Եթե երեխան որսում է գնդակը, վերադառնում է իր տեղը, եթե ոչ՝ խաղավարի հետ փոխում են տեղերը:
2. Երեխան որսում է գնդակը և ինքն է ասում խաղընկերոջ անունը: Հաղթում է նա, ով ամենաշատն է օղից որսում գնդակը:



Գունահավաք

Նպատակ. զարգացնել արագ վազելու, կողմնորոշվելու, հաշվելու և արտաբերելու ունակությունները, երկրաչափական մարմինները ճանաչելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. գունավոր թղթերից (ստվարաթուղթ) կտրատված երկրաչափական մարմիններ:

Ընթացք

Մանկավարժը խաղասենյակում (դասարանում, բակում) այստեղ-այնտեղ տարածում է բազմագույն երկրաչափական պատկերներ, ապա հրահանգում՝

1. հավաքի՛ր այսինչ գույնի առարկաները, օրինակ՝ դեղին:
2. հավաքի՛ր երկրաչափական մարմինները, օրինակ՝ եռանկյունները:
3. հավաքի՛ր որոշակի գույնի մարմինները, օրինակ՝ կարմիր քառակուսիները:
4. հավաքի՛ր բոլոր գույների առարկաները՝ բացառությամբ կապույտների:

Կարող են հնչել նաև այլ տարբերակներ:

Խաղի ավարտին երեխաները հաշվում են իրենց հավաքած երկրաչափական մարմինները, հաղթում է նա՝ ով ամենաշատն է հավաքել: Կարող են նաև անվանել երկրաչափական մարմինները և նշել դրանց գույները:



Շաբաթվա օրեր

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, մտածողությունը, ամրապնդել գիտելիքները շաբաթվա օրերի մասին:

Անհրաժեշտ նյութեր. շաբաթվա օրերին համապատասխան բառաքարտեր (երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի):

Ընթացք

Յոթ երեխայի տրվում են բառաքարտեր՝ շաբաթվա օրերի անուններով:

Տարբերակ 1. Խաղավարը կամայական արտաբերում է շաբաթվա օրերից մեկը: Երեխան, լսելով իր օրվա անունը, ցատկում է առաջ:

Տարբերակ 2. Խաղավարն անվանում է շաբաթվա օրերից մեկը: Երեխաները ծափ են տալիս համապատասխան քանակով, այսպես՝ մեկ ծափը համապատասխանում է երկուշաբթիին, երկուսը՝ երեքշաբթիին, ..., յոթը՝ կիրակիին:



Խճանկար

Նպատակ. զարգացնել ձեռքի մատների շարժունակությունը, հարթության վրա կողմնորոշվելու ունակությունը, գույների ընտրությունը՝ նմանակելով կամ՝ ըստ բառային հրահանգի:

Անհրաժեշտ նյութեր. նկար, հարթ կամ ծավալային խճապատկեր:

Խոսքային նյութ. առարկաների անուններ, հիմնական գույների անուններ, «աջ, ձախ, մոտ, մեկ, երկու, երեք, չորս» բառերը:

Ընթացք

Տարբերակ առաջին.

Երեխան մանկավարժի օրինակով հավաքում է համապատասխան նկարը/զարդանախշը:

Տարբերակ երկրորդ.

Երեխան ինքնուրույն ստեղծում է իր նկարը/զարդանախշը: Սա զարգացնում է ստեղծագործական երևակայությունը:

Տարբերակ երրորդ.

Երեխային տրամադրվում է նկարով/զարդանախշով քարտ, որի օրինակով նա պետք է ստեղծի զարդանաշը խճանկարով:

Տարբերակ չորրորդ.

Խոսքի զարգացման որոշակի մակարդակ ունեցող երեխաների համար կարելի է առաջարկել ստեղծել նկարը/զարդանախշը՝ ըստ բանավոր հրահանգների և քարտերի:

Օրինակ՝ «Շարի՛ր երկու կարմիր, ապա՝ երեք կարմիր և մեկ դեղին շերտիկ»:



Տեղափոխի՛ր խաղալիքը

Նպատակ. զարգացնել ձեռքի մատների շարժունակությունը, մանր առարկաներ վերցնելու ունակությունը, երկու ձեռքերի համաձայնեցված շարժումները:

Անհրաժեշտ նյութեր. մանր առարկաներ (կոճակներ, խճանկար, ուլունք), սկուտեղներ կամ ամաններ, թափանցիկ, երկար շշեր:

Ընթացք

Այս խաղը նպատակահարմար է անցկացնել երեխայի ուսուցման և դաստիարակության սկզբնական փուլում:

Երեխան նստում է սեղանի առջև, որի վրա դրված են թափանցիկ շիշը և մանր առարկաներով սկուտեղը: Մանկավարժը մատներով վերցնում է մանր առարկաներից մեկը և այն գցում է շիշի մեջ՝ երեխաների ուշադրությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ երկրորդ ձեռքով ինքը բռնել է շիշը: Ապա հրահանգում է երեխային կրկնել իր կատարած գործողությունը. «Նայի՛ր, այսպե՛ս արա»: Երբ երեխան աջ/ձախ ձեռքով տեղափոխում է բոլոր առարկաները, խաղը կրկնում է, բայց այս անգամ աշխատում է մյուս ձեռքը:

Խաղը բարդացնելու համար կարելի է վերցնել նեղ անցքով շիշ, տարբեր չափերի և ավելի շատ առարկաներ: Ավելի մեծ առարկաները չեն տեղավորվի շիշի անցքում: Խաղի բարդացված տարբերակում երեխան նախքան փորձելը պետք է որոշի՝ կանցնի՞ արդյոք առարկան շիշի անցքով, թե՛ ոչ:

Կարելի է նաև առաջարկել երեխային առարկաները շիշի մեջ մտցնել հաջորդաբար աջ, ապա ձախ ձեռքով:

Տարբերակ երկրորդ.

Երեխան տեղափոխում է առարկաները, երբ ձայն է լսում: Օրինակ՝ թմբուկի, շվիի հնչյուններ, կենդանիների ձայների նմանակումներ. այսպես ձևավորվում է ձայնի հանդեպ պայմանական հակազդում: Խաղը կարող է բարդացվել՝ մեծացնելով երեխայի ձայնի աղբյուրի միջև հեռավորությունը կամ իջեցնելով ձայնի ինտենսիվությունը:



Բռնի՛ր ձկնիկին

Նպատակ. զարգացնել դաստակների շարժումները, ձևավորել շարժումների հստակությունը, զարգացնել տեսողական ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. «Բռնի՛ր ձկնիկին» խաղը՝ պլաստմասե ձկնիկներ, ակվարիում, ձկնորսական ցանց:

Ընթացք

Տարբերակ առաջին.

Մանկավարժը ցուցադրում է երեխաներին ակվարիումը, ասում է. «Ձկներն այստեղ են ապրում» և առաջարկում է ձկնորսական ցանցի օգնությամբ որևէ տարայից ձկնիկներին տեղափոխել ակվարիումի մեջ:



Մանկավարժը ցույց է տալիս գործողությունը և առաջարկում է երեխային կրկնել՝ ասելով՝ «Բռնի՛ր ձկնիկին» կամ «Այսպե՛ս արա»:

Տարբերակ երկրորդ.

Ակվարիումի մեջ դրված են մագնիսով ձկներ, որոնք բացում և փակում են բերանները: Երեխային տրվում է փոքրիկ կարթ, որի ծայրին կա մագնիս: Երբ ձուկը բացում է բերանը, երեխան պետք է հասցնի կարթը մոտեցնել ձկանը և հանել ջրից՝ տեղափոխելով այլ տարայի մեջ:

Խաղը կարելի է կազմակերպել մի քանի երեխայի կամ թիմերի միջև: Հաղթում է այն երեխան կամ թիմը, որն ավելի կարճ ժամանակում է որսում բոլոր ձկներին:



Ո՞վ ավելի արագ կփաթաթի ժապավենը

Նպատակ. զարգացնել ձեռքերի և դաստակների շարժունակությունը, ձևավորել շարժումների արագություն և ստույգություն:

Անհրաժեշտ նյութեր. նույն գույնի և լայնության երկու ժապավեն (երկարությունը 50 սմ)՝ մի ծայրով ամրացված փայտիկին:

Ընթացք

Մանկավարժն իր մոտ է կանչում երկու երեխայի և ասում. «Խաղում ենք: Սա ժապավեն է: Այն պետք է փաթաթել: Նա, ով կփաթաթի ավելի արագ, կհաղթի», «Մեկ, երկու, երեք. փաթաթե՛ք»: Խաղն սկսելուց առաջ մանկավարժը ցույց է տալիս՝ ինչպես պտտել փայտիկը, որ ժապավենը փաթաթվի:

Խաղը կարելի է կազմակերպել մի քանի երեխայի կամ թիմերի միջև: Մանկավարժի հրահանգով բոլոր երեխաները միաժամանակ սկսում են փաթաթել ժապավենները: Հաղթող երեխային կամ թիմին կարելի է խրախուսել փոքրիկ մրցանակով:

Խաղը բարդացնելու դեպքում՝ երեխան պետք է փաթաթի ժապավենը որոշակի ժամանակահատվածում: Երեխան փորձում է հասցնել փաթաթել ժապավենը այն ժամանակահատվածում, քանի դեռ հնչում է ձայնը, օրինակ՝ երաժշտական գործիքների հնչյունները՝ թմբուկի, շվիի, սուլիչի: Ձայնի ընտրությունը կախված է երեխայի ընկալումից: Ընտրվում է այնպիսի ձայն, որը երեխան վստահաբար լսում է:



Հավաքի՛ր խաղալիքն ինքնություն

Նպատակ. զարգացնել մանր շարժունակությունը, ուշադրությունը և հիշողությունը, տարբեր առարկաներով կատարվող գործողությունների հանդեպ հետաքրքրությունը:

Անհրաժեշտ նյութեր. ցանկացած քանդվող-հավաքվող խաղալիք (փազլ, ծաղիկ՝ հանվող-դրվող թերթիկներով կամ ցանկացած առարկա՝ հանովի-դնովի մասերով):

Ընթացք

Մանկավարժը տալիս է երեխային որևէ խաղալիք և առաջարկում է ուշադիր այն ուսումնասիրել, ապա ցույց է տալիս, որ խաղալիքը «կախարդական է», և դա կարելի է քանդել ու նորից հավաքել: Մանկավարժն օգնում է երեխային քանդել խաղալիքի մասերը, այնուհետև առաջարկում է այն ինքնություն հավաքել՝ խաղալիքը վերադարձնելով իր նախկին տեսքին:



Նետի՛ր օղակը

Նպատակ. զարգացնել ընդհանուր և մատների նրբաշարժումները:

Անհրաժեշտ նյութեր. օղակներ և ձող:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխային նետել օղակն այնպես, որ այն

անցնի ձողի վրա: Խաղի սկզբում երեխան կանգնում է ձողից ոչ շատ հեռու: Աստիճանաբար մանկավարժը մեծացնում է երեխայի հեռավորությունը ձողից՝ տարածությունը հասցնելով 1,5-2 մետրի: Որպես խաղի բարդացում՝ երեխան նետում է օղակը միայն այն ժամանակ, երբ լսում է ձայնը (որևէ երաժշտական գործիքի՝ թմբուկ, շվի կամ սուլոց): Կարևոր է համոզվել, որ երեխան լավ է լսում ընտրված ձայնը:

Հիշողության և ուշադրության զարգացման խաղեր



Կառուցի՛ր ինձ նման

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, մտապահումը և երևակայությունը:

Անհրաժեշտ նյութեր. հաշվեձողիկներ/փայտիկներ:

Ընթացք

Տարբերակ առաջին.

Մանկավարժը կառուցում է հաշվեձողիկներով որևէ պատկեր, օրինակ՝ տնակ, և տալիս է անունը: Երեխային խնդրում է կառուցել իր նման: Փոքր երեխան կարող է կառուցել զուգահեռ, ավելի տարիքովը կառուցում է այն ժամանակ, երբ ուշադիր դիտել է, թե ինչպես է մանկավարժն աշխատել պատկերը կառուցելիս: Խաղը կարելի է բարդացնել՝ հետաձգելով կառուցումը և բարդացնելով պատկերը:

Տարբերակ երկրորդ.

Պատկերը կառուցելուց հետո հեռացնում ենք ձողիկներից մեկը, երեխան պետք է փորձի գտնել բաց թողնված մասնիկը և լրացնի այն: Պատկերը կառուցելուց հետո երեխան պիտի արտաբերի առարկայի անունը, գտնի համապատասխան բառաքարտը: Աշխատանքն ավարտելուց հետո երեխաները պատկերը նկարում են անհատական ալբոմներում և համապատասխան բառաքարտը սոսնձում պատկերի մոտ:



Պահարանիկ

Նպատակ. զարգացնել տեսողական հիշողությունը և մտապահումը:

Անհրաժեշտ նյութեր. բացվող դարակով պահարանիկ, խաղալիքներ, բառաքարտեր:

Ընթացք

Մանկավարժը սեղանին է դնում պահարանիկը, երեխաները նրա ուղղորդմամբ ուսումնասիրում են տարբեր դարակների պարունակությունը: Ուսումնասիրության ժամանակ անվանում են դարակներում գտնվող բոլոր խաղալիքները և զուգահեռ ցուցադրվում է խաղաքարտը: Սա արվում է համոզվելու համար, որ երեխան գիտի բոլոր խաղալիքների անունները: Այնուհետև ուսուցիչն անվանում է խաղալիքներից որևէ մեկը, իսկ երեխան պետք է հիշի՝ որ դարակում է այն թաքնված: Եթե երեխան լսողությամբ չի ճանաչում բառը, մանկավարժն այն կրկնում է (չընդգծելով արտաբերումը)՝ հնարավորություն տալով երեխային կարդալ շուրթերից: Եթե երեխան կրկին չի ճանաչում բառը, ցուցադրվում է բառաքարտը: Մանկավարժը խթանում է, որ երեխան հնարավորինս ճիշտ կրկնի խաղալիքի անունը և, երբ համոզվում է, որ երեխան հասկացել է, թե որ առարկայի մասին է խոսքը՝ խնդրում է այն գտնել պահարանիկում: Խաղը կարող է բարդացվել՝ ավելացնելով պահարանիկի դարակների և խաղալիքների քանակը և մտապահման ժամանակը:



Գտի՛ր կեսը

Նպատակ. սովորեցնել երեխաներին ճանաչել և մտապահել առարկան՝ դրա առանձին հատկանիշներով:

Անհրաժեշտ նյութեր. առարկաների սև և սպիտակ ուրվագծված նկարների զույգեր, որոնց վրա միևնույն առարկան պատկերված է հակառակ դիրքից:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխային դիտել նկարները, անվանել դրանք և համադրել բառաքարտերը, եթե դրանք արդեն կան երեխայի

բառապաշարում: Այնուհետև մանկավարժը նկարներ է առաջարկում երկրորդ հավաքածուից, որում նույն առարկաները պատկերված են հակառակ դիրքից: Երեխան առաջին հավաքածուից պետք է գտնի նկարին համապատասխան գույգը և համադրի դրանք: Եթե երեխան դժվարանում է, պետք է ցույց տալ իրական առարկան կամ խաղալիքը:



Ուրվագծի ճանաչում

Նպատակ. ճանաչել առարկաներն իրենց ուրվագծերով, մտապահել պատկերը:

Անհրաժեշտ նյութեր. գույգ նկարների հավաքածու (առարկայական և ուրվագծային)

Ընթացք

Երեխան պետք է համադրի առարկան և դրա ուրվագծային նկարները: Խաղը կարելի է բարդացնել. երեխան պետք է գտնի գույգերը ոչ թե դրանցից մեկը ցուցադրելիս, այլ՝ լսելով նկարում պատկերված առարկայի անունը:



Մտապահի'ր և գտի'ր


Նպատակ. ճանաչել միանման պատկերները, մտապահել դրանք և մտովի համադրել: Ամրապնդել առարկաների անունների մտապահումը:

Անհրաժեշտ նյութեր. լոտո կամ նկարների գույգեր:

Ընթացք

Տարբերակ առաջին.

Մանկավարժը երեխաներին նկարներ է բաժանում, իսկ 4-10 հատը շրջված շարում է նրանց դիմաց: Երեխաները ուսումնասիրում և անվանում են իրենց ձեռքի քարտերը, ապա դրանք շրջված դնում են սեղանին: Մանկավարժը բացում է սեղանին դրված քարտերից մեկը և



հարցնում է երեխաներին՝ ով ունի այդ նկարից, իսկ երեխան պետք է հիշի իր մոտ է արդյոք տվյալ նկարի գույգը, թե՛ ոչ:

Խաղը կարելի է բարդացնել. երեխան ոչ միայն պետք է մտապահի իր մոտ առկա նկարները, այլև դրանց դասավորությունը:

Տարբերակ երկրորդ.

Մանկավարժը եղած բոլոր նկարների գույգերը շրջված դասավորում է սեղանին, ապա, պատահականության սկզբունքով, բացում է երկու նկար և անվանում է դրանք. եթե նկարները գույգ են, նշում է՝ նույնն է, հանում է շարքից, իսկ եթե նկարները տարբեր են՝ նորից շրջվում և մնում են իրենց տեղերում: Նույն գործողությունը կատարում է երեխան: Այսպես խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև շարված բոլոր նկարները բաշխվում են խաղացողների միջև: Հաղթում է ավելի շատ նկարների գույգեր գտած խաղացողը:

Ընտրի՛ր բառը

Նպատակ. մտապահել բառերի շարքը, արտաբերել բառերը ճիշտ հաջորդականությամբ, զարգացնել ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. առարկաների անվանումներով բառաքարտեր (մեկ կամ տարբեր թեմաներով):

Ընթացք

Մանկավարժն անվանում է բառը և ցուցադրում է բառաքարտը, օրինակ՝ «գնդակ», ապա երկրորդ բառը՝ «տիկնիկ», և դնում է առաջինի կողքին. այսպես կազմում է երեք բառերից շարք, հետո շրջում է դրանք և ճիշտ հաջորդականությամբ արտաբերում: Երեխան կրկնում է: Ճիշտ կրկնելու դեպքում մեծահասակը շարունակում է շարքը՝ ավելացնելով նոր բառեր կամ ստեղծում է նոր շարքեր: Խաղը կարելի է բարդացնել. բառերը ընտրվում են տարբեր թեմաներից, ավելացվում է մտապահվող բառերի քանակը, իսկ լսողական ընկալման բարձր մակարդակ ունեցող երեխաների համար խաղը իրականացվում է առանց բառաքարտերի՝ լսողության հիման վրա:

Խոսքի զարգացման խաղեր

Խոսքի զարգացմանն ուղղված խաղեր անցկացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահանջները.

- լսողության խանգարում ունեցող երեխայի հետ խաղի ընտրության ժամանակ պետք է առաջնորդվել նրա համար մշակված խոսքի զարգացման ծրագրի պահանջներով, թեմաներով և բովանդակությամբ,
- խաղի ընտրության ժամանակ խոսքի ընտրության ձևը՝ բանավոր, գրավոր, մատնախոսություն, որոշվում է խոսքի զարգացման ծրագրով,
- խոսքի զարգացման բոլոր խաղերի մեջ պետք է նշված լինեն արտահայտություններ, նախադասություններ, որոնց կառուցվածքը և բարդությունը կախված է երեխայի խոսքի զարգացման մակարդակից: Կախված խաղային իրավիճակից՝ երեխայի հետ հաղորդակցվելիս միևնույն խոսքային նյութը պետք է ներկայացնել որպես հրահանգ, հարց, տեղեկություն,
- խմբային խաղերի ժամանակ աշխատանքը պետք է հարմարեցվի հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխայի անհատական առանձնահատկություններին,
- մանկապարտեզում կամ ընտանիքում իրականացվող անհատական պարապմունքների ժամանակ խաղերը պետք է կառուցվեն՝ հաշվի առնելով լսողական ընկալման և խոսքի զարգացման մակարդակները, անհատական առանձնահատկություններն ու հետաքրքրությունները:



Գնացք

Նպատակ. զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, պատասխանել հարցերին:

Անհրաժեշտ նյութեր. գնացք (5-6 վագոնով), խաղալիքներ (արջ, գայլ, աղվես, շուն, կատու և այլն), բառաքարտեր՝ կենդանիների անուններով, որոնք փակցվում են վագոններին:

Ընթացք

Երեխաները կիսաշրջանաձև նստում են մանկավարժի դիմաց: Մանկավարժը հերթով հանում է խաղալիքները և երեխաների հետ անվանում դրանք: Ապա մեկական խաղալիք է բաժանում երեխաներին: Մանկավարժը ցույց է տալիս գնացքը, որի վագոններին ամրացված է որևէ կենդանու անվանում և ասում. «Աղվեսը, գայլը, նապաստակը... հյուր են գնում տիկնիկին: Որտե՞ղ է նստում աղվեսը»: Երեխան, որի մոտ է աղվես խաղալիքը, պետք է տեղադրի համապատասխան վագոնում, բայց մինչև այդ՝ ուսուցչի հետ կարդում է բառաքարտը: Այդպես գնացքում իրենց տեղերն են գտնում բոլոր խաղալիքները: Եթե երեխան չունի լսողական ընկալման այնպիսի մակարդակ, որ տարբերի խաղալիքների անունները լսողությամբ, մանկավարժը արտաբերումից հետո կարող է ցույց տալ բառաքարտը, որի նմանությամբ երեխան կգտնի համապատասխան վագոնը:



Կարուսել

Նպատակ. զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունը, պատասխանել հարցերին:

Անհրաժեշտ նյութեր. կարուսելի ստվարաթղթե պատկեր, երեխաների նկարները, բառաքարտեր՝ երեխաների անուններով:

Ընթացք

Մանկավարժը սեղանին կամ գրատախտակին ամրացնում է կարուսելի ստվարաթղթե պատկերը (ցանկալի է այնպես, որ պտտվի): Կարուսելի յուրաքանչյուր նստարանին ամրացված է ամեն մի երեխայի անունով քարտ, իսկ սեղանին դասավորված են նրանց

լուսանկարները: «Ի՞նչ է սա, սա կարուսել է: Հիմա մենք խաղալու ենք»: Երեխաները գտնում են իրենց անունները կարուսելի վրա և տեղադրում լուսանկարները, որից հետո՝ կարուսելը կարելի է պտտել: Կարուսելի կանգ առնելուց հետո խաղը շարունակվում է, սակայն, այս անգամ ուսուցիչը երեխաներին բաժանում է ոչ թե իրենց, այլ ընկերների անունով բառաքարտեր: Երեխան պետք է կարդա և ցույց տա՝ ում անունն է գրված իր քարտին և համադրի բառաքարտը լուսանկարի հետ: Երբ բոլոր լուսանկարների մոտ տեղադրվում են բառաքարտերը, կարուսելը նորից պտտվում է:



Նկարի՛ր ճանապարհը

Նպատակ. զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, հասկանալ և կատարել հրահանգները, զարգացնել մատների նրբաշարժումները կամ մանր մոտորիկան:

Անհրաժեշտ նյութեր. պատուհանիկների և բառաքարտերի համար երկու կողմերից կտրվածքներով սպիտակ ստվարաթղթե տնակ. կտրվածքի մի կողմում պատուհանիկներն են, որոնց մեջ պատկերված են տիկնիկ, ձկնիկ, մուկ, կատու և այլն, իսկ մյուս կողմում, պատահական հաջորդականությամբ, դասավորված են այդ պատկերների անունները:

Ընթացք

Երեխաները կանգնում են գրատախտակի մոտ, որի վրա փակցված է ստվարաթղթե տնակը: Մանկավարժն ասում է. «Ահա տնակը: Ո՞վ է այստեղ ապրում»: Երեխաներից մեկը մոտենում է տնակին և բացում է որևէ պատուհան, հետո ինքնուրույն կամ մանկավարժի օգնությամբ անվանում է տնակի «բնակչին» ու ցույց է տալիս համապատասխան բառաքարտը: Երբ երեխան ճիշտ է ընտրում բառաքարտը, մանկավարժը խնդրում է նրան ճանապարհ նկարել տնակից դեպի բառաքարտ: Այսպես գործողությունը կրկնում են բոլոր երեխաները:



Ընտանիք

Նպատակ. հարստացնել բառապաշարը, կատարելագործել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել հարցերին պատասխանել:

Անհրաժեշտ նյութեր. պատուհանիկներով սովարաթղթե տնակ, որոնցում կարող են տեղադրվել բառաքարտ և ընտանիքի անդամների նկարները:

Ընթացք

Տնակի յուրաքանչյուր պատուհանիկում տեղադրված է ընտանիքի անդամներից մեկի անունով բառաքարտ: «Ո՞վ է սա», - ասում է ուսուցիչը և ցույց է տալիս ընտանիքի անդամներից որևէ մեկի նկարը: Հետո ցույց է տալիս տնակը և ասում՝ «Այստեղ ապրում են *մայրիկը, հայրիկը, աղջիկը, տղան, տատիկը, պապիկը...*: Որտե՞ղ է ապրում *մայրիկը*», երեխան վերցնում է համապատասխան նկարը և ամրացնում այն պատուհանին, որում գտնվում է *մայրիկ* բառաքարտը: Խաղը շարունակվում է մինչև ընտանիքի բոլոր անդամները զբաղեցնում են իրանց տեղերը: Խաղը կարելի է անցկացնել խմբով:



Մուկիկի տնակը

Նպատակ. հարստացնել բառապաշարը, կատարելագործել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել հարցերին պատասխանել:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք մկնիկ, խաղալիք կահույք (աթոռ, սեղան, պահարան, բազմոց, մահճակալ և այլն), թաշկինակ, սովարաթղթե կամ պլաստմասսայե տնակ՝ պատուհաններով, դռնով, հանվող կտուրով կամ շարժական պատերով:

Խոսքային նյութ. «Մա տուն է, այստեղ ապրում է մկնիկը, ի՞նչ կա այնտեղ, ի՞նչ է սա», կահույքի մասերի անուններ՝ աթոռ, սեղան, պահարան, բազմոց, մահճակալ և այլն, «Դի՛ր (կահույքի որևէ մասի անուն) այստեղ»:

Ընթացք

Երեխաները կիսաշրջանաձև նստում են սեղանի առջև, որի վրա դրված են տնակը և խաղալիք մկնիկը: Մանկավարժն ասում է՝ «Մա տուն է: Այստեղ ապրում է մկնիկը»: Երեխաները կրկնում են մանկավարժի ասածը: Մանկավարժը ցույց է տալիս թաշկինակով ծածկված կահույքի մասը. «Ի՞նչ կա այստեղ», ապա հերթով հանում է թաշկինակը կահույքի մասերի վրայից, տալիս դրանցից ամեն մեկի անունը, իսկ երեխաները կրկնում են: Մանկավարժը մկնիկին դնում է տնակում: «Նայե՛ք: Ի՞նչ կա այնտեղ»: Մանկավարժը հանում է տնակի տանիքը կամ շարժական պատերն այնպես, որ երեխաները տեսնեն տնակի ներսում դրված կահույքի մասերի անուններով բառաքարտերը: Այնուհետև մանկավարժն առաջարկում է ամեն երեխայի վերցնել մեկ բառաքարտ և դրա փոխարեն տեղադրել համապատասխան կահույքի մասը: Երբ երեխան վերցնում է կահույքի որևէ մաս, դրա անունը կրկնում է ամբողջ խումբը: Խաղն ավարտվում է, երբ ողջ կահույքը տեղադրված է տան մեջ, և մանկավարժն ասում է՝ «Տունը շատ գեղեցիկ է: Մկնիկն այստեղ է ապրելու»:



Գուշակի՛ր բառը

Նպատակ. հարստացնել բառապաշարը, կատարելագործել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել հարցերին պատասխանել:

Անհրաժեշտ նյութեր. պտուտակ, երեխաների թվով առարկաների նկարներ (օրինակ՝ աթոռ, սեղան, գլխարկ, տիկնիկ), առարկաների անուններով բառաքարտեր:

Ընթացք

Ամեն երեխայի տրվում են առարկաների նկարներով քարտեր: Մանկավարժի սեղանին դրված է պտուտակ, որին փակցված են առարկաների անուններով բառաքարտեր: Մանկավարժը պտուտակը պտտեցնում է, վերցնում այն բառաքարտը, որը ցույց է տալիս սլաքը և երեխաների հետ կարդում է բառը: Այնուհետև երեխաները պետք է

իրենց առջև դրված քարտերից գտնեն և ցույց տան բառաքարտի վրա գրված առարկային համապատասխանող նկարը: Մանկավարժը ամրացնում է գրատախտակին բառաքարտը և նկարը: Երեխաները հերթով մոտենում են պտուտակին և պտտում այն:

Խաղը բարդացնելու համար կարելի է ավելացնել բառաքարտերի և նկարների քանակը:

Խաղը կարելի է անցկացնել նաև առանց պտուտակի՝ պատահականության սկզբունքով ընտրելով բառաքարտերը:



Լոտո

Նպատակ. հարստացնել բառապաշարը, կատարելագործել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել հարցերին պատասխանել:

Անհրաժեշտ նյութեր. ընտանի կենդանիների նկարներով հինգ առարկայական քարտ, լոտոյի մեծ քարտ, որի վրա գրված են առարկայական քարտերի անունները:

Ընթացք

Երեխան նստում է սեղանի մոտ, որի վրա դրված է մեծ լոտոյի քարտ՝ ընտանի կենդանիների անուններով: Մանկավարժը հերթով ցույց է տալիս կենդանիների նկարները, և երեխան ինքնուրույն կամ մանկավարժի օգնությամբ անվանում է դրանք: Այնուհետև մանկավարժը անվանում է կենդանուն, ցույց է տալիս դրա նկարը և խնդրում երեխային գտնել բառը քարտեզի վրա: Երեխան կարդում է բառը և, եթե այն համապատասխանում է նկարին, նկարով քարտը տեղադրում է բառի վրա: Խաղի ընթացքում մանկավարժը ցույց է տալիս կենդանիների նկարներ, որոնց անունները գրված չեն մեծ քարտի վրա: Երեխան պետք է հասկանա և ասի, որ տվյալ կենդանու անունը չկա:



Կատարի՛ր հրահանգը

Նպատակ. զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել հրահանգները կատարել, սովորեցնել հարցերին պատասխանել:

Անհրաժեշտ նյութեր. գործողությունների անվանումներով քարտեր (վազի՛ր, ցատկի՛ր, նստի՛ր, կանգնի՛ր, քայլի՛ր և այլն), գործողությունների նկարներով քարտեր, անհատական ալբոմներ:

Ընթացք

Երեխաները նստում են սեղանի շուրջ, որի վրա դրված է գործողությունների անվանումներով քարտերով տուփը: Երեխաները հերթով տուփից հանում են մեկական քարտ, կարդում են (գլոբալ) քարտի վրա գրված գործողությունը և կատարում այն: Այնուհետև մանկավարժը սեղանին է դնում գործողությունների նկարներով քարտեր, և երեխաները համապատասխանեցնում են դրանք, բառաքարտը և նկարը փակցնում իրենց անհատական ալբոմներում:



Պահարան

Նպատակ. զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել կատարել հրահանգները, սովորեցնել պատասխանել հարցերին:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք պահարան, տիկնիկի հագուստի հավաքածու, հագուստի անվանումներով բառաքարտեր:

Ընթացք

Սեղանին դրված է խաղալիք պահարան և տիկնիկի հագուստ: Մանկավարժն ասում է՝ «Տիկնիկը փնթի է: Հագուստը թափթփված է: Դնենք (կախենք) հագուստը պահարանում»: Մանկավարժը բացում է պահարանը և ցույց տալիս, որ ամեն դարակի/կախիչի վրա փակցված է որևէ հագուստի անվանումով բառաքարտ: Երեխաները հերթով մոտենում են սեղանին, վերցնում որևէ հագուստ, գտնում այդ հագուստի անվանումով դարակը/կախիչը և այն տեղադրում ճիշտ տեղում: Կամ՝ երեխան ընտրում է կախիչը, ընթերցում (գլոբալ) դրան

փակցված բառաքարտը և դրան համապատասխան հագուստ
ընտրում:

Խաղը կարելի է անցկացնել նաև **հագուստի** փոխարեն **սպասք**
կիրառելով:



Դասավորի՛ր մրգերը / բանջարեղենը

Նպատակ. հարստացնել բառապաշարը,
զարգացնել գլոբալ ընթերցանության
հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. մրգերի/բանջարեղենի
նկարներով քարտեր կամ մանր խաղալիքներ,
սկուտեղ, խաղալիք զամբյուղներ կամ տուփեր,
որոնցից յուրաքանչյուրի վրա կլինի մեկական մրգի/ բանջարեղենի
անուն:



Ընթացք

Երեխաները նստում են սեղանի շուրջ, իսկ մանկավարժը վերցնում է
սկուտեղը, որի վրա դասավորված են խաղալիք մրգերը/բանջարեղենը
կամ դրանց նկարները: Մանկավարժը հերթով ցույց է տալիս մրգերը/
բանջարեղենը և անվանում դրանք երեխաների հետ:

Այնուհետև մանկավարժը դնում է սկուտեղը սեղանին և յուրաքանչյուր
երեխայի հրահանգում վերցնել որևէ մի բանջարեղեն. «Արա՛մ,
վերցրո՛ւ խնձորը»:

Երբ բոլոր երեխաները ճիշտ վերցնում են մրգերը, մանկավարժն
առաջարկում է միասին կարդալ զամբյուղների/տուփերի վրա գրված
բառաքարտերը և համապատասխանաբար դրանցում տեղավորել
մրգերը/բանջարեղենը:



Արա՛ մեզ նման

Նպատակ. հարստացնել բառապաշարը, զարգացնել գլոբալ
ընթերցանության հմտությունները, սովորեցնել կատարել
հրահանգները:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք կենդանիներ, գործողությունների անվանումներով բառաքարտեր:

Ընթացք

Երեխաները նստում են սեղանի շուրջ: Մանկավարժն ասում է, որ իրենց հյուր են եկել կենդանիները և սկսում են անվանել դրանք: Այնուհետև մանկավարժը դասավորում է խաղալիքները սեղանին, յուրաքանչյուր կենդանու կողքին դնում գործողություն նշող բառով մեկական թերթիկ: Մանկավարժը երեխաներին խնդրում է շրջան կազմել, ապա վերցնում է որևէ խաղալիք և ցույց է տալիս նրա կատարած գործողությունը: Երեխաները պետք է կարդան բառաքարտը և կրկնեն գործողությունը:



Նկա՛ր ստեղծիր

Նպատակ. զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել հարցերին պատասխանել, զարգացնել կապակցված խոսքը:

Անհրաժեշտ նյութեր. գրատախտակ, տարբեր առարկաների նկարներ (տուն, ծառ, խոտ, արև, տղա, աղջիկ, գնդակ), տվյալ առարկաների անուններով բառաքարտեր:

Ընթացք

Երեխաները կիսաշրջանաձև կանգնում են գրատախտակի կողքին, որի վրա փակցված են առարկաների անուններով բառաքարտերը, իսկ առարկաների նկարները դրված են սեղանին: Մանկավարժն ասում է երեխաներին, որ միասին ստեղծելու են նկար: Մանկավարժը օգնում է երեխաներին կարդալ գրատախտակին փակցված առարկաների անունները, ապա հերթով հանում է նկարները և առաջարկում երեխաներին դրանք փոխարինել համապատասխան նկարով: Երբ նկարը ամբողջությամբ պատրաստ է, երեխաները նորից կրկնում են առարկաների անունները և մանկավարժի օգնությամբ դրանցով կազմում են նախադասություններ: Մանկավարժը գրատախտակին գրում է կազմած նախադասությունները: Տեքստի բարդությունը և

երկարությունը կախված են երեխաների խոսքի զարգացման մակարդակից: Օրինակ՝ «Գարուն է: Արևը շողում է: Ծաղիկները բացվում են: Աղշիկն ու տղան գնդակ են խաղում»:



Աղվեսի ծնունդը

Նպատակ. հարստացնել բառապաշարը, զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել պատասխանել հարցերին:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք կենդանիներ (աղվես, արջ, գայլ, նապաստալ և այլն), կենդանիների անուններով բառաքարտեր, խաղալիք սեղան և աթոռներ:

Ընթացք

Երեխաները նստում են սեղանի շուրջ: Սեղանին դրված են խաղալիք սեղանն ու աթոռները, որոնցից յուրաքանչյուրի վրա դրված է որևէ կենդանու անունով թերթիկ: Մանկավարժն ասում է՝ «Այսօր աղվեսի ծնունդն է: Նրան հյուր են եկել ընկերները: Աղվեսը կարդալ չգիտի: Օգնե՛ք աղվեսին»: Երեխաները սկսում են կարդալ աթոռների վրայի բառաքարտերը, ապա մանկավարժի հետ սկսում են անվանել խաղալիք կենդանիներին: Մանկավարժն առաջարկում է նստեցնել կենդանիներին սեղանի շուրջ: Յուրաքանչյուր երեխա վերցնում է մեկական բառաքարտ և դրա փոխարեն աթոռին է դնում համապատասխան կենդանու խաղալիքը:



Խանութ

Նպատակ. հարստացնել բառապաշարը, զարգացնել գլոբալ ընթերցանության հմտությունները, սովորեցնել պատասխանել հարցերին:

Անհրաժեշտ նյութեր. պահարան կամ պահարանի մեծ նկար, խաղալիքներ կամ առարկաների նկարներով քարտեր (սպասք, հագուստ և այլն), առարկաների անվանումներով բառաքարտեր:

Ընթացք

Պահարանիկում տեղադրվում են խաղալիքներ կամ դրա նկարի վրա ամրացվում են առարկաների նկարներ, սեղանին շարվում են այդ խաղալիքների/առարկաների անվանումներով բառաքարտեր: Մանկավարժն ասում է՝ «Հիմա խաղում ենք **խանութ-խանութ**, ես վաճառողն եմ»: Հետո դիմում է երեխաներից որևէ մեկին՝ «Ի՞նչ ես ուզում գնել»: Երեխան մոտենում է, վերցնում իրեն հետաքրքրող առարկայի անունով բառաքարտը և արտաբերում բառը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Богданова Т.Г. Сурдопсихология: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений. - М.: Академия, 2002. - с. 203
2. Головниц Л.А. Дошкольная сурдопедагогика. Учеб. пособие для вузов, М. Владос, 2010.- с. 319
3. Коррекционные подвижные игры и упражнения для детей с нарушениями в развитии / Под общей ред. проф. Шапковой Л.В. - М.: Советский спорт, 2002.
4. Речицкая Е. Г., Гущина Т.К. Коррекционная работа по развитию познавательной сферы глухих учащихся с задержкой психического развития: учебное пособие - Москва: Владос, 2019.- с.133
5. [https://www.ndcs.org.uk/information-and-support/parenting-and-family-life/parenting-a-deaf-](https://www.ndcs.org.uk/information-and-support/parenting-and-family-life/parenting-a-deaf-child/playtime-tips-and-ideas/)
6. [child/playtime-tips-and-ideas/](https://www.ndcs.org.uk/information-and-support/parenting-and-family-life/parenting-a-deaf-child/playtime-tips-and-ideas/)
7. <https://nsportal.ru/detskiy-sad/raznoe/2015/08/22/igry-dlya-detey-doshkolnogo-vozrasta-s-narusheniem-sluha>

**ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ, ՇՈՇԱՓԵԼԻՔԻ, ՏԱՐԱԾԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Խաղը, ինչպես բնականոն զարգացում ունեցող, այնպես էլ՝ չտեսնող և թույլ տեսնող երեխայի կյանքում կարևոր դեր և նշանակություն ունի: Խաղի օգնությամբ երեխան ճանաչում է շրջակա աշխարհը,



մարդկանց, ապահովում է առարկաների հետ կապը, սկսում է հասկանալ իր դերը ընտանիքում և հասարակությունում:

Խաղերը խթանում են երեխայի ակտիվությունը, ինքնուրույնությունը և ստեղծարարությունը: Խաղն է, որ պատրաստում է երեխային հետագա ինքնուրույն կյանքին:

Տեսողության խորը խանգարումով վաղ նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեությունը դեռևս կարող է լինել շատ ցածր մակարդակի վրա: Հնարավոր է երեխան իրեն պատկերացնի որոշակի դերում, սակայն այդ դերը, որպես կանոն, բացահայտված չլինի: Խաղում երեխան սովորում է գործել որոշակի իրավիճակում, այս գործընթացում զարգանում է նրա տրամաբանությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը: Խաղը երեխաների առաջատար գործունեությունն է և միայն բնականոն տեսողություն ունեցող երեխան կարող է խաղի մեջ տեղափոխել իրական կյանքի դրվագներ, իսկ տեսողության խորը խանգարումով երեխաները, հակառակը՝ խաղի միջոցով սովորում են ինչպես վարվել կյանքի տարբեր իրավիճակներում (Дружинина, 2006):

Անկախ նրանից, թե ինչպես է չտեսնող երեխան վարվում խաղալիքի հետ, միևնույն է, նա պետք է ունենա բոլոր տեսակի խաղալիքներից: Երեխաների հնարավորությունները տարբեր են,

սակայն կան խաղալիքների անհարաժեշտ տեսակներ, որոնք ընդհանուր են բոլոր երեխաների համար՝ որոնց բացակայության դեպքում երեխաների զարգացումը լիարժեք չի կարող լինել։ շինարարական նյութեր, (ցանկալի է, որ փայտից և խոշոր լինեն, կենդանիներ, երաժշտական գործիքներ, կենցաղային տեխնիկա, մեքենաներ, տիկնիկներ, տարբեր չափսերի և որակի գնդակներ, սյուժետադերային խաղերի հավաքածուներ (բժշկական, խոհարարական և այլն), փափուկ խաղալիքներ։ Դիդակտիկ խաղերը և խաղալիքները պետք է ընտրել՝ հաշվի առնելով երեխայի տեսողության խանգարման աստիճանը։ Մանր մոտորիկայի զարգացման համար անհրաժեշտ են բուրգեր, խոշոր ուլունքներ և քուղեր, խոշոր խճանկար և այլն։ Լսողական ընկալման համար անհրաժեշտ են ձայնային, չիկչիկան, խշխշան խաղալիքներ, առարկաներ։ Շոշափելիքի զարգացման համար պետք է ունենալ տարբեր մակերեսներով խորանարդիկներ կամ քարտեր (Celeste, 2006):

Գլխավոր կանոն

Մինչ երեխային նոր խաղալիքի հետ մենակ թողնելը, անհրաժեշտ է նրան սովորեցնել ճիշտ խաղալ դրանով և համոզվել, որ նա կարող է ինքնուրույն կրկնել բոլոր գործողությունները։ Հակառակ դեպքում նա կարող է ճիշտ չընկալել իմաստը և խաղալիքը կիրառել սխալ նշանակությամբ։

Չտեսնող երեխայի համար առավել բարդ են շարժախաղերը, սակայն՝ շատ անհրաժեշտ, քանի որ նրանք ունեն սակավ շարժուն կենսակերպ։ Անհրաժեշտ է սովորեցնել երեխաներին նետել և բռնել գնդակը, ձայնով կողմնորոշվելով՝ վազել գնդակի ետևից, գլորել առաջ և նետել վերև։ Եթե տարածքը թույլ է տալիս, կարելի է փոքրիկ բատուտ պատրաստել, որպեսզի երեխան կարողանա ցատկոտել, կամ՝ փչովի լողավազան, որի մեջ կլինեն փոքրիկ գունավոր գնդակներ։ Այս ամենը լավ զարգացնում է շարժողական ակտիվությունը, տարածական կողմնորոշումը և ընդհանուր շարժունակությունը։

Կարևոր է պահպանել օրվա ռեժիմ, որի ընթացքում առանձնահատուկ տեղ պետք է հատկացնել խաղին: Երեխան պետք է խաղա առավոտյան, ցերեկային քնից հետո և երեկոյան: Եթե խաղով չապահովենք տեսողության խանգարումով երեխայի ազատ ժամանակը, նա կդրսևորի ձեռքերի, գլխի, մարմնի կաշուն, անկանոն շարժումներ: Խաղային պարապմունքները պետք է ընտրել՝ հաշվի առնելով երեխայի տարիքը: Շատ օգտակար են ջրով և ավազով խաղերը. ջուրը պետք է լինի սենյակային ջերմաստիճանի, իսկ ավազը՝ մաքուր և թաց (Саматова, 2012):

◆◆◆ Դիդակտիկ խաղեր


Կառուցի՝ր աստիճան

Նպատակ. զարգացնել երեխաների շոշափելիքը և հաշվելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. փայտե խորանարդիկներ:

Ընթացք

Երեխային տալ փայտե խորանարդիկները, նա պետք է վերցնի այնքան, որքան պետք կլինի աստիճանը կառուցելու համար՝ հատակին շարելով չորս, վրայից երեք, հետո երկու և ամենավերևում մեկ խորանարդիկ:



Թակ - թակ

Նպատակ. զարգացնել լսողական ընկալումը և շոշափելիքը:

Անհրաժեշտ նյութեր. Ժամացույցի տեսքով շրջանաձև կտրված հաստ սովաբաթուղթ, որի վրա բրայլյան համակարգով թվեր են ամրացված և շրջանի մեջտեղում կա մեկ սլաք:

Ընթացք

Խաղի ժամանակ խաղավարը փայտիկով հարվածում է սեղանին:



Երեխան լսում է, հաշվում հարվածները և ըստ շոշափելիքի սլաքը կանգնեցնում համապատասխան թվի վրա:



Գուշակի՝ր ըստ ձայնի

Նպատակ. զարգացնել երեխաների լսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. սպասք, ամսագիր, բանալիներ, մուրճ, մեխեր և այլն:

Ընթացք

Երեխան պետք է որոշի, թե ինչ են անում մեծերը (սեղանին սպասք են դնում, թերթում են ամսագիրը, բանալիով բացում են դուռը, մուրճով մեխ են մեխում և այլն):



Չոր լողավազան

Նպատակ. զարգացնել նուրբ շարժումները, , մատների բարձր զգայունակությունը, ըստ հատկանիշների դասակարգման հմտությունները, զգայաշարժողականությունը:

Անհրաժեշտ նյութեր. ավազով արկղ, որի հատակին տարբեր իրեր են թաքցրած (կոճակներ, երկրաչափական պատկերներ, մանր խաղալիքներ՝ «Սպասք», «Կենդանիներ», «Տրանսպորտ» թեմաներով):



Ընթացք

Երեխան, ըստ մասնագետի հրահանգի, շոշափելով փնտրում է որևէ առարկա, գտնում և դասակարգում:



Ուլունքներ

Նպատակ. զարգացնել տեսաշարժողական կոորդինացիան, ձեռքի նուրբ շարժումները, ըստ ձևի, չափի և գույնի առարկաների տարբերակումը: Զարգացնել ուշադրության կենտրոնացումը, ստեղծագործական երևակայությունը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր գույնի, ձևի, մեծության ուլունքներ և թելեր:

Ընթացք

Սկզբնական փուլում առաջարկել երեխաներին պարզապես թելի վրա հավաքել ուլունքները՝ իրենց նախընտրած հերթականությամբ: Հետո՝ առաջարկել որոշակի հաջորդականությամբ հավաքել ուլունքները: Չտեսնող երեխաների պարագայում, նույնը կատարում են՝ ընտրելով ուլունքները ըստ ձևի և չափի:



Կոճակներ

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումն ու տեսողական ուշադրությունը, տեսաշարժողական կոորդինացիան, ձեռքերի նուրբ շարժումները:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր չափերի և գույնի կոճակներ:

Ընթացք

Խառնել տարայի մեջ տարբեր չափերի, գույնի կոճակներ և առաջարկել երեխային դասավորել ըստ գույնի, չափի և անցքերի քանակի:



Որտե՞ղ, ու՞մ տնակն է

Նպատակ. զարգացնել տեսողական ուշադրությունը, աչքերով գծերին հետևելը:

Անհրաժեշտ նյութեր. կենդանիների նկարներ, նրանց բները և յուրաքանչյուր կենդանուց դեպի իր բունը տանող գիծ՝ համապատասխան գույնով: Սկզբում երեխան կարող է մատով կամ մատիտով ձեռքը սահեցնել գծի վրայով, այնուհետև՝ առանց դրա, հայացքով գտնել բույնը/կենդանուն:






Հաշվիչ

Նպատակ. զարգացնել տեսողական ուշադրությունը:

Անհարժեշտ նյութեր. թուղթ և գունավոր մատիտներ:

Ընթացք

Թղթի տարբեր հատվածներում գրել տարբեր չափսերի և գույների մեկից տասը թվերը և խնդրել, որ երեխան գտնի դրանք հերթականությամբ: Հետագայում կարելի է ժամանակ սահմանել:



Գուշակի՝ր կենդանուն

Նպատակ. զարգացնել տեսողական և ձևի ընկալումը:


Անհրաժեշտ նյութեր. նկարների երկու հավաքածու:

1. Առարկայական նկարներ, որոնց վրա պատկերված են կենդանիներ (ընտանի և վայրի), միրգ, բանջարեղեն:
2. Կենդանիների ստվերների նկարներ (ընտանի և վայրի), միրգ, բանջարեղեն:

Ընթացք

Երեխային առաջարկում ենք ուսումնասիրել բոլոր նկարները և անվանել կենդանիները: Այնուհետև առաջարկում ենք գտնել յուրաքանչյուր կենդանու ստվերը: Կամ, առաջարկելով դիտարկել ստվերը, գտնել համապատասխան կենդանու պատկերը:

Զտեսնող երեխային տրվում է կենդանու ռելիեֆային նկարը, և նա շոշափելով պետք է գտնի համապատասխան ուրվագծով քարտը:





Գտի՛ր տարբերությունները

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. նման պատկերներով գույգ նկարներ, սակայն՝ տարբեր գունավորմամբ:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխային գտնել նման նկարները և նշել տարբերությունները:




Ի՞նչն է անավարտ թողել նկարիչը

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումը, ձեռքի նուրբ շարժումները:

Անհրաժեշտ նյութեր. անավարտ տարրերով առարկաների նկարների քարտեր, գունավոր մատիտներ:

Ընթացք

Երեխային առաջարկվում են անավարտ տարրերով ծանոթ նկարներ. օրինակ՝ թռչուն՝ առանց կտուցի, ձուկ՝ առանց պոչի, ծաղիկ՝ առանց տերևների, զգեստ՝ առանց թևքի, արձող՝ առանց ոտքի և այլն: Երեխային առաջարկվում է նկարել, ավելացնել անավարտ հատվածը:



Տարբերակներ


Երեխային առաջարկվում է նկար, որտեղ պատկերված է առարկայի մի հատվածը, և նա ինքնուրույն պետք է ամբողջացնի և ավարտի նկարը:



Մեծ-փոքր

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումը, տեսողական հիշողությունը, տեսողական ուշադրությունը, միկրոտարածությունում կողմնորոշվելը:

Անհրաժեշտ նյութեր. քարտ, որի վրա պատկերված են տարբեր չափերի երկրաչափական պատկերներ, գունավոր մատիտներ:



Ընթացք


Մանկավարժը ներկայացնում է երեխային քարտը և հրահանգ տալիս՝ «Մեծ պատկերները ներկիր կարմիր գույնով, փոքրերը՝ կապույտ»:
Այնուհետև խնդրում է հաշվել դրանց քանակը:



Ավարտի՝ր նկարը

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որտեղ պատկերված են առարկայի միայն ձախ կողմը, գունավոր մատիտներ:



Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխային ուսումնասիրել նկարը և նույն ձևով ամբողջացնել պատկերի աջ հատվածը, ավարտելուց հետո ներկել այն:



Հրաշալի պարկ

Նպատակ. զարգացնել շոշափելիքը:

Անհրաժեշտ նյութեր. երկրաչափական մարմիններ (գնդեր, խորանարդիկներ, բուրգեր և այլն) և պարկ:

Ընթացք

Երեխան մանկավարժի հրահանգով պետք է շոշափելով պարկից հանի նշված երկրաչափական մարմինը (Титарь, 2007):



Որտե՞ղ ես գտնվում

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշումը

Ընթացք

Երեխաները գտնվելով մանկապարտեզի տարբեր հատվածներում՝ պետք է կարողանան օգտագործել պահպանված վերլուծիչները (հոտառություն, լսողություն և շոշափելիք) և գտնեն ճանապարհը դեպի խաղասենյակ:



Շոշափելով գտի՝ ռ նշված մարմնի մասը

Նպատակ. զարգացնել շոշափելիքի միջոցով երեխաների սեփական մարմնի մասին պատկերացումները:

Ընթացք

Երեխաները ուշադիր լսում են մանկավարժի հրահանգները և գտնում դեմքի, մարմնի մասերը, բացատրում որտեղ են դրանք գտնվում՝ օգտագործելով «վերև-ներքև», «աջ-ձախ», «հետ-առաջ» հասկացությունները:

Շոշափվող ցուցանակներ

Նպատակ. զարգացնել շոշափելիքի հիշողությունը:

Ուսուցանել շոշափելիքի միջոցով նման առարկաների ուռուցիկ (ռելիեֆային) պատկերները տարբերակելը, ձևավորել երկու ձեռքերի համակցված շարժումների հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. խաղը կազմված է փայտե տարբեր առարկաներից և փոքրիկ տախտակներից, որոնց վրա համապատասխան առարկաների եզրագծերի փոսիկներ կան:



Ընթացք

Երեխային առաջարկվում է շոշափելով գտնել փայտե առարկայի համապատասխան փոսիկով տախտակը և տեղադրել այնտեղ:



Թաքցրո՛ւ գունդը ափիդ մեջ

Նպատակ. սովորեցնել և զարգացնել չափի, մեծության տեսողական ընկալումը:

Անհրաժեշտ նյութեր. նույն գույնի երկու տարբեր չափերի գնդեր (մեծ, փոքր):

Ընթացք

Մանկավարժը սեղանին դնում է մեծ և փոքր գնդերը, ցույց է տալիս, թե ինչպես պետք է թաքցնել գունդը ձեռքի մեջ: Երբ երեխան վերցնում է մեծ գունդը, այն չի կարողանում թաքցնել:



Քանդի՛ր աշտարակը

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումը, տարածական կողմնորոշումը:

Անհրաժեշտ նյութեր. թղթե մեծ խորանարդներ, գնդակ:

Ընթացք

Երեխան աշտարակ է կառուցում՝ մեկ խորանարդը մյուսի վրա դնելով: Այնուհետև վերցնում է գնդակը և երկու մետր հեռավորությունից հարվածում աշտարակին, որպեսզի քանդի այն:



Բռնի՛ր ձկները

Նպատակ. զարգացնել չափի տեսողական ընկալումը, տարածական կողմնորոշումը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր չափերի օղակներ, խաղալիք ձկներ:

Ընթացք

Երեխաները կանգնում են երկու շարքով: Նրանցից երեք մետր հեռավորությամբ՝ գետնին դրված են տարբեր չափերի ձկներ:

Երեխաների ձեռքին տարբեր չափերի օղակներ են: Նրանք պետք է վազելով գնան և դրանք դնեն համապատասխան չափի ձկան վրա, ապա՝ հետ վերադառնան, խփեն հաջորդ մասնակցի ձեռքին, որը շարունակելու է խաղը: Հաղթում է այն խումբը, որը ճիշտ և շուտ է ավարտում խաղը:



Բերքահավաք

Նպատակ. զարգացնել տեսողական ընկալումը և տարածական կողմնորոշումը:

Անհրաժեշտ նյութեր. թղթից պատրաստված մեծ ծառ, որի վրա ամրացված են խնձորներ և գնդակ:

Ընթացք

Մենյակում պատի մոտ դրված է «խնձորի ծառը»: Երեխան երկու մետր հեռավորությունից գնդակով պետք է խփի խնձորին և գցի այն: Խաղի վերջում երեխան պետք է հավաքի խնձորները:

Ցուցումներ

Այս խաղը կարելի է անցկացնել խմբերով: Խաղի վերջում որոշվում է հաղթողը: Այն խումբն է հաղթում, որը շատ խնձոր է հավաքում:



Շարժախաղեր

Շարժախաղերը չտեսնող և թույլ տեսնող երեխաների համար ունեն հատուկ նշանակություն: Դրանք դիտվում են ոչ միայն որպես ֆիզիկական դաստիարակության, այլև՝ որպես դաստիարակչական և կրթական խնդիրների լուծման միջոց:

Կազմակերպելով և անցկացնելով շարժախաղեր՝ մանկավարժը պետք է ղեկավարվի մի շարք մեթոդաբանական առաջարկություններով.

1. Խաղի համար հատուկ տեղ և գույք նախապատրաստի (առարկան՝ զանգակներով ապարանջաններ, հատուկ

ձայնային գնդակներ և այլ միջոցներ, որոնք նպաստում են երեխաների անվտանգությանը և խաղի հաջող անցկացմանը):

2. Խաղի բովանդակությունը՝ ուսումնադաստիարակչական հատվածները, խաղացողների շարժողական գործողությունները պետք է համապատասխանեն չտեսնող և թույլ տեսնող երեխաների ֆիզիկական նախապատրաստվածության և առողջական վիճակին, տարիքին, սեռին:
3. Թիմային խաղերում անհրաժեշտ է ապահովել խաղացողների հավասարաչափ բաշխում թիմերում՝ ըստ տեսողության վիճակի, իրենց ֆիզիկական նախապատրաստվածության մակարդակի, սեռի և այլն:
4. Անհրաժեշտ է չտեսնող և թույլ տեսնող երեխաներից պահանջել հետևել խաղի բոլոր կանոններին, թույլ չտալ որևէ խախտում:
5. Պետք է անընդհատ հիշել նաև խաղի չափաքանակի մասին: Դա շատ պատասխանատու պահ է: Խաղում լարվածությունը պահպանելը ավելի բարդ է, քան մարմնամարզության և թեթև ատլետիկայի պարապմունքների ընթացքում, քանի որ խաղով տարված երեխաները հոգնածություն չեն զգում: Այդ պատճառով էլ մանկավարժը պետք է մանրամասն հետևի հոգնածության արտաքին դրսևորումներին (արագացած շնչառություն, դեմքի կարմրություն), երեխաների վարքին (կանոնների հաճախակի խախտում, կոպտություն, թուլություն) և ժամանակին նվազեցնի լարվածությունը կամ ավարտի խաղը:
6. Չտեսնող և տեսողության խանգարումով երեխաներին հետաքրքրում է ոչ միայն հենց խաղի գործընթացը, այլև՝ դրա արդյունքը: Այդ պատճառով, յուրաքանչյուր խաղի անցկացումից հետո, անհրաժեշտ է գնահատական տալ, այսինքն՝ վերլուծել, թե ով է իրեն պահել լավ ընկերոջ նման, իսկ ով է խախտել կանոնները:

7. Խաղն անցկացնելու ընթացքում մեծ ուշադրություն է պետք դարձնել նախադպրոցականների դաստիարակչական աշխատանքի վրա: Խաղերը պետք է օգնեն ընկերական կոլեկտիվի ստեղծմանը, որում փոխադարձ աջակցությունը, օգնությունը, անձնական հետաքրքրությունների/շահերի ենթարկումը խմբային հետաքրքրություններին՝ երեխաների համար դառնան մշտական և սովորական (Азарян, Григорян, 2009):

Չտեսնող և թույլ տեսնող երեխաներին բնական ուղղակեցվածք, ճիշտ քայլք, գեղեցիկ քայլվածք և շարժումն սովորեցնելու համար մեծ է ֆիզիկական վարժությունների, խաղերի, հատուկ պարապմունքների նշանակությունը:

Ֆիզիկական վարժությունների բազմազանությունը թույլ է տալիս նպատակաուղղված ազդեցություն ունենալ կեցվածքի այս կամ այն թերության, տարածության մեջ կողմնորոշման, քայլերի առանձին տարրերի, հարթաթաթության վրա:

Դրանց կիրառման մեթոդները հնարավորություն են տալիս որոշել լարվածությունը՝ հաշվի առնելով երեխաների տարիքը, սեռը, բնավորությունը և տեսողության խանգարման աստիճանը, ֆիզիկական նախապատրաստվածությունը և շարժողական հնարավորությունները:

Հատուկ խաղերի համատեղ իրականացումը դաստիարակում է կազմակերպվածություն, կարգապահություն, ճշտապահություն, վճռականություն, դժվարությունները հաղթահարելու կարողություն և այլ որակներ, որոնք կարևոր նշանակություն ունեն կյանքում և աշխատանքային գործունեության մեջ:

Մանկավարժը պետք է հիշի, որ չտեսնող և թույլ տեսնող երեխաներին ճիշտ քայլվածք, շարժումների գեղեցիկ ձև սովորեցնելու աշխատանքի հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե ուսուցման գործընթացում ինչ տեղ է նա հատկացնում նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակությանը:



Ուղի՝ դ պահիր գլուխն ու ուսերը

Ընթացք

«Կանգնի՛ր» հրամանով բոլոր խաղացողները կանգնում են պատի մոտ՝ հավելով ծոծրակով, թիակով, նստատեղով և կրունկներով: «Ցրվի՛ր» հրամանով երեխաները ցրվում են ամբողջ դահլիճով 15-30 վայրկյանի ընթացքում, իսկ «կանգնի՛ր» հրամանով պետք է ընդունեն ճիշտ, բնական ուղղակեցվածք: Մանկավարժը մոտենում է յուրաքանչյուրին և որոշում գլխի և ուսերի ճիշտ դիրքը: Պարտվածները պետք է կանգնեն պատի մոտ՝ հավելով պատին ծոծրակով, թիակներով, նստատեղով, կրունկներով և քառատող արտասանեն: Խաղն անցկացնելու ժամանակ պետք է ավելի հաճախ հերթափոխել դադարի տարբեր դիրքերը:



Անցնել ճիշտ

Ընթացք

Երեխաները հերթականությամբ պետք է անցնեն մանկավարժի կողքով՝ պահպանելով գլխի, ուսերի, իրանի ճիշտ դիրքը: Եթե երեխաներից որևէ մեկը սխալ է քայլում (գլուխը կախ, ուսերն անհամաչափ), մանկավարժը հավում է նրան ձեռքով՝ նշելով սխալները: Սխալներ անողները քաշվում են մի կողմ և մեկ անգամ ևս անցնում մանկավարժի կողքով:



Ո՞վ ճիշտ կկանգնի մեկ ոտքի վրա

Ընթացք

Խաղացողը մեկ ոտքի վրա որոշակի դիրք է ընդունում (ձեռքերը գոտկատեղին), մյուս ոտքը պահում է կողքի՝ դեպի ետ, ծավլած վիճակով: Հաղթում է նա, ով առանց կեցվածքի խախտման կանգնում է մեկ ոտքի վրա 5-7 վայրկյան:



Պահպանի՛ր հավասարակշռություն

Ընթացք

Խաղացողները հերթականությամբ անցնում են մարմնամարզական հարթակով, որը դրված է գետնին: Հասնելով մեջտեղ՝ յուրաքանչյուրն ընդունում է որոշակի դիրք, որն իրենց ներկայացրել է մանկավարժը (դադար մեկ ոտքի վրա, ձեռքերը և մյուս ոտքը դեպի կողք): Առաջադրանքի կատարման ժամանակ պետք է պահպանել մարմնի ճիշտ դիրքը: Հաղթում է նա, ով բոլորից լավ է կարողանում կատարել առաջադրանքը: Պարտվողներն անցնում են շարասյան ետնամաս և կրկնում են գործողությունը:

◆◆◆ Քայլքի ընթացքում ոտքերի և ձեռքերի շարժումների կոորդինացիայի, համաձայնեցվածության, ռիթմի զարգացմանը նպաստող խաղեր



Լսի՛ր հրահանգը

Նպատակ. զարգացնել շարժումների կոորդինացիան, համաձայնեցվածությունը և ռիթմը քայլքի ընթացքում:

Ընթացք

Երեխաները՝ նստելով սեղանի շուրջ, մանկավարժի հրահանգով պետք է սեղանի վրա ձեռքերով թխկթխկացնելով կրկնեն նրա կողմից տրված ռիթմն ու տեմպը: Երեխան, ով ընկնում է ռիթմից և տեմպից, դուրս է գալիս խաղից: Հաղթում է նա, ով ճիշտ է կատարում առաջադրանքը: Խաղը կարելի է անցկացնել՝ խաղացողներին թիմերի բաժանելով: Խաղի տարբերակներն են՝ մեկ կամ երկու ոտքով դմբդմբացնելը:



Քայլք աստիճաններով

Նպատակ. զարգացնել շարժումների կոորդինացիան, համաձայնեցվածությունը և ռիթմը քայլքի ընթացքում:

Ընթացք

Խաղացողները շարքով կանգնում են սանդուղքի դիմաց:

Մանկավարժը թխթխկացնելով, ծափահարելով, հաշվով տալիս է տեմպը, որով երեխաները պետք է բարձրանան կամ իջնեն աստիճաններով: Տրված տեմպը խախտող մասնակիցներն անցնում են շարքի ետնամաս և կրկնում առաջադրանքը:

Հաղթում են այն երեխաները, ովքեր ճիշտ են կատարել առաջադրանքը:

◆◆◆ Հավասարակշռության պահպանման հմտությունների ուսուցման և ամրապնդման համար նախատեսված խաղեր



Ո՞վ ավելի երկար կմնա մեկ ոտքի վրա

Նպատակ. զարգացնել և ամրապնդել հավասարակշռության պահպանման ունակություններն ու հմտությունները:

Ընթացք

Խաղացողները հերթականությամբ մեկ ոտքի վրա որոշակի դիրք են ընդունում (ձեռքերի տարբեր դիրքերով): Ժամանակը որոշվում է ըստ վայրկյանաչափի: Հաղթում է նա, ով ավելի երկար է մնում մեկ ոտքի վրա:



Քայլի՛ր արագ

Նպատակ. զարգացնել և ամրապնդել հավասարակշռության պահպանման ունակություններն ու հմտությունները:

Ընթացք

Խաղացողները շարվում են մեկ գծով (դեմքով դեպի պատը):

Մանկավարժը մոտենում է խաղի մասնակիցներից մեկին, և, նրան ձեռքով հպվելով, ասում՝ «Արա՛գ գնա, տե՛ս, չընկնե՛ս»: Նա, ում հպվել է մանկավարժը, շրջվում է և արագ քայլերով գնում դեպի դիմացի պատը՝ ձգտելով չկորցնել հավասարակշռությունը: Պարտվողը կանգնում է շրջանում տուգանային գծի վրա:

Գնացք

Նպատակ. զարգացնել և ամրապնդել հավասարակշռության պահպանման ունակություններն ու հմտությունները:

Ընթացք

Երեխաները կանգնում են շարասյունով և ձեռքը/ձեռքերը դնում իրենց առջև կանգնածի ուսին: Առաջին խաղացողը «շոգեքարշն է», մյուսները՝ «վագոնները»: Ըստ մանկավարժի հրահանգի՝ «գնացքը» շարժվում է մեկ՝ արագ, մեկ՝ դանդաղ, հաճախ փոխելով շարժման ուղղությունը: Խաղացողները չպետք է իջեցնեն ձեռքերը և դուրս գան շարասյունից: Նա, ով պտույտների կամ արագացման ընթացքում չի կարողանում պահպանել հավասարակշռությունը և իջեցնում է ձեռքերը, խախտելով շարասյունը, դուրս է գալիս խաղից:

◆◆◆ **Խաղեր՝ ուղղագիծ քայլքի հմտությունների ուսուցման եվ ամրապնդման համար**

Լուռ գնա՝

Նպատակ. սովորեցնել և ամրապնդել ուղղագիծ քայլքը:

Ընթացք

Երեխաները հերթականությամբ ձգտում են լուռ անցնել մանկավարժի կողքով: Եթե մասնակիցներից որևէ մեկը գնում է ոչ բավականաչափ լուռ (դմբդմբացնում է ոտքերով, ձեռքերով հպվում է վարողի մարմնին և այլն), մանկավարժը հպվում է նրան ձեռքով: Երեխան քաշվում է մի կողմ և անցնում է մանկավարժի կողքով ևս մեկ անգամ: Հաղթում է նա, ով ամենասահունն է անցնում մանկավարժի կողքով:

Ո՞վ կհաղթի

Նպատակ. սովորեցնել և ամրապնդել ուղղագիծ քայլքը:

Ընթացք

Երեխաները մրցում են ուղիղ գծով քայլելով՝ չանցնելով հատակին նշված «միջանցքը»: Ամեն անգամ «միջանցքից» դուրս գալու դեպքում

մասնակցին հաշվարկվում է տուգանային միավոր: Հաղթողը որոշվում է ըստ նվազագույն տուգանային միավորների:

◆◆◆ **Խաղեր՝ չտեսնող և թույլ տեսնող երեխաների քայլերու ժամանակ կողմնորոշման կարողությունների և հմտությունների ուսուցման, ամրապնդման համար**



Բռնի՛ր գնդակը

Նպատակ. սովորեցնել քայլքի ընթացքում կողմնորոշման կարողություններն ու հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. ձայնային գնդակ:

Ընթացք

Խաղացողը գլորում է ձայնային գնդակը հատակին, մյուսը՝ կողմնորոշվելով ձայնով, պետք է բռնի այն: Խաղը պետք է սկսել ոչ մեծ հեռավորությունից՝ աստիճանաբար մեծացնելով այն:

Յուրաքանչյուր սխալ նետած գնդակի (հեռու) դիմաց՝ խաղացողը ստանում է տուգանային միավոր: Հաղթում է նա, ով ամենաքիչ տուգանային միավորներով է նետել գնդակը և ամենաշատն է բռնել այն:

Ուսուցման սկզբնական փուլում գնդակը նետելուց առաջ կարելի է կանխատեսել դրա ուղղությունը:

Խաղի տարբերակը. խաղացողներին կարելի է բաժանել թիմերի

(Haraeva, 2010):



Քայլի՛ր պարանի վրայով

Նպատակ. սովորեցնել քայլքի ընթացքում կողմնորոշման կարողություններն ու հմտությունները:

Ընթացք

Լայնակի երկու-երեք մետր հեռավորության վրա ձգվում և ամրանում է պարանը (հատակից 10-15 սմ բարձրության վրա): Մանկավարժի հրահանգով երեխաները հերթով պետք է անցնեն ուղեգորգով՝

անցնելով պարանի վրայով: Ձգված պարանից երեք-չորս քայլ առաջ տրվում են ազդանշաններ, և երեխաները կողմնորոշվելով դրանցով, պետք է անցնեն պարանի վրայով ու շարունակեն իրենց ճանապարհը: Ստուգվում է լսողությամբ կողմնորոշվելու հատկությունը, քայլվածքը և կեցվածքը: Հաղթում է նա, ով ճիշտ է կողմնորոշվել, անսխալ է անցել ամբողջ հեռավորությունը՝ պահպանելով լավ կեցվածք:

Խաղի տարբերակը. ազդանշանները կարող են տրվել անդադար, 2-3 անգամ, 1 անգամ:



Անցի՛ր՝ չտրորելով առարկան

Նպատակ. սովորեցնել քայլելու ընթացքում կողմնորոշման կարողություններն ու հմտությունները, շարժումների ճկունությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ, խորանարդներ:

Ընթացք

Գնդակները, խորանարդները կամ այլ առարկաներ դրված են միմյանցից 1 մետր հեռավորության վրա 1,5-80 սմ լայնությամբ, «միջանցքի» երկու կողմերում: Խնդիրը կայանում է նրանում, որ անցնեն «միջանցքով» (լսողական կողմնորոշմամբ)՝ չտրորելով դրված առարկաները: Ստուգվում է լսողությամբ կողմնորոշվելու կարողությունը:

Հաղթում է նա, ով ավելի հստակ է անցնում հեռավորությունը:



Անցի՛ր, մի՛ սխալվիր

Նպատակ. սովորեցնել քայլելու ընթացքում կողմնորոշման կարողություններն ու հմտությունները:

Խաղն ունի մի քանի տարբերակ:

1. Խաղացողը պետք է անցնի մանկավարժի ետևից ուղիղ, աղեղնաձև, շրջանաձև, մասնատված գծով՝ կողմնորոշվելով իր առջևից գնացողի քայլերի ձայնով:
2. Երեխան պետք է անցնի դահլիճով՝ կողմնորոշվելով ազդանշանով (դաստիարակի ձայն, ծափեր, հարվածներ

դափին): Առաջադրանքը դժվարանում է շարժումների սխեմայի փոփոխությամբ (ուղիղ, մասնատված գծով, շրջանով, շրջապտույտներով և այլն), ինչպես նաև՝ տեմպի, ռիթմի, հնչող ձայների ուժգնության, ուղեգծի անցման արագության փոփոխությամբ և այլն:

Հաղթում է նա, ով հստակ և ճշգրիտ կողմնորոշվելով կատարում է առաջադրանքը՝ պահպանելով ճիշտ կեցվածքը, քայլվածքի ուղղագիծը:

◆◆◆ **Տարբեր պայմաններում տեսողության խանգարումով երեխաների քայլքի կատարելագործմանը նպաստող խաղեր**



Ո՞վ ավելի արագ կգտնի դուռը

Նպատակ. զարգացնել տարբեր պայմաններում տեսողության խնդիրներ ունեցող երեխաների քայլքի ունակություններն ու հմտությունները:

Ընթացք

Հավաքելով խաղի բոլոր մասնակիցներին իր շուրջը՝ դահլիճի կենտրոնում մանկավարժը բացատրում է՝ որտեղ է գտնվում դուռը /պատուհանը: Երեխաները մոտենում են նշված առարկային, որպեսզի հստակեցնեն դրա տեղակայումը դահլիճի կենտրոնի, հիմնական մուտքի, դահլիճի անկյունների հանդեպ: Հետո նորից հավաքվում են դահլիճի կենտրոնում և մանկավարժի՝ «Ո՞վ ավելի արագ կգտնի դուռը» հրամանով մոտենում են դռանը: Հաղթում է նա, ով ամենակարճ ճանապարհով և բոլորից արագ է գտնում դուռը /պատուհանը:

Ուսուցման առաջին փուլում՝ անվանելով ցանկացած առարկայի անուն, մանկավարժը կանգնում է հենց այդ առարկայի մոտ, որպեսզի երեխաները կարողանան կողմնորոշվել նրա ձայնով:

Խաղի տարբերակները. պատի, դռան կամ պատուհանի մոտ մանկավարժի հրահանգով կարելի է գտնել դահլիճի կենտրոնը, դրա անկյունները և այլն:

Այս և այլ խաղերում անընդհատ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քայլի առանձին տարրերի ճիշտ կատարման, լավ կեցվածքի պահպանման, տարածության մեջ կողմնորոշվելու կարողության վրա:



Արի՛ իմ ետևից

Նպատակ. զարգացնել տարբեր պայմաններում տեսողության խնդիրներով երեխաների քայլքի ունակություններն ու հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր. խորանարդներ, գնդակներ և այլն:

Ընթացք

Խաղի մասնակիցները շարվում են միմյանց ետևից երկու-երեք քայլ հեռավորության վրա: Մանկավարժի հրահանգով նրանք սկսում են քայլքը: Ուղղորդողը գնում է դահլիճով (ուղիղ, աղեղնաձև)՝ շրջանցելով առարկաները, որոնք հանդիպում են ճանապարհին: Մյուս մասնակիցը, ով կանգնած է նրա ետևում, պետք է ճիշտ քայլի՝ կողմնորոշվելով իր առջևից ընթացողի քայլերի ձայներով: Մանկավարժի հրահանգով նրանք փոխվում են տեղերով, ուղղորդողը դառնում է երկրորդը:

Խաղը կարելի է բազմազան դարձնել՝ աստիճանաբար մեծացնելով մասնակիցների միջև հեռավորությունը, դժվարացնելով շարժման երթուղին, փոխելով տրվող ազդանշանների հաճախականությունը: Քայլելու ընթացքում պետք է նշվեն յուրաքանչյուրի սխալները և թերությունները:



Գտի՛ր լսողությամբ

Նպատակ. զարգացնել տարբեր պայմաններում տեսողության խնդիրներով երեխաների քայլքի ունակություններն ու հմտությունները:

Ընթացք

Խաղն անցկացվում է ուղիղ ծածկույթով տարածությունում: Երեխաները շարվում են մեկ շարքով՝ միմյանց միջև երկու-երեք քայլ

հեռավորության վրա: Մանկավարժը կանգնում է խաղացողներից 30-40 մետր հեռավորության վրա և սուլիչով ազդանշան է տալիս: Խաղացողներն սկսում են քայլել այն ուղղությամբ, որտեղից լսում են ազդանշանը՝ ձգտելով մոտենալ դրան:

Խաղի տարբերակը. երկրորդ ազդանշանի համաձայն (իրար ետևից երկու կարճ սուլոց)՝ բոլորը կանգ են առնում, իսկ մանկավարժը տեղափոխվում է նոր տեղ և նորից ազդանշան է տալիս, որով երեխաները պետք է շարժվեն նոր ուղղությամբ:

Մանկավարժն անցնում է մի տեղից մյուսը երկու-երեք անգամ և այդպես փոխում բոլոր խաղացողների շարժման ուղղությունը: Խաղի ավարտին մանկավարժը տալիս է երկար եզրափակիչ սուլոց, որից հետո բոլորը կանգ են առնում: Ով ավելի մոտ կգտնվի մանկավարժին, նա էլ կհաղթի:



Անցի՛ր, մի՛ դիպչիր

Նպատակ. զարգացնել տարբեր պայմաններում տեսողության խնդիրներով երեխաների քայլքի ունակություններն ու հմտությունները, շարժումների կոորդինացիան:

Ընթացք

Տարբեր առարկաներ (օրինակ՝ փչովի գնդակներ) տեղակայվում են միմյանցից 2-2,5 մետր հեռավորության վրա ուղեգորգի առջևում և 80-100 սմ հեռավորությամբ՝ վերջում: Խաղացողները, կանգնելով շարքով, գնում են մանկավարժի ետևից օձաձև, շրջանցելով առարկաները աջ և ձախ կողմերից՝ կողմնորոշվելով իր առջևից ընթացողի քայլերով: Պետք է այնպես անցնել, որպեսզի մասնակիցներից ոչ մեկը չտրորի առարկան: Առարկան տրորողը դուրս է գալիս խաղից:



Ո՞վ ծափ տվեց

Նպատակ. զարգացնել երեխաների լսողական ընկալումը, ձայնի տեղակայման որոշման կարողությունը, շարժումների արագությունը:

Ընթացք

Վարողը (Եթե թույլ տեսնող է, ապա փակ աչքերով) կանգնում է դաշտի մեջտեղում, մյուսները՝ նրանից 8-10 քայլ հեռու: Մանկավարժի ազդանշանով խաղացողներից մեկը ուժեղ ծափ է տալիս, վարողը փորձում է գուշակել, թե ով էր: Եթե գուշակում է, ապա այդ խաղացողները փոխվում են տեղերով, և խաղը շարունակվում է:



Լսի՛ր ազդանշանը

Նպատակ. զարգացնել երեխաների ձայնի տեղակայման որոշման կարողությունը, շարժումների կոորդինացիան, արագությունը, ուշադրությունը:

Ընթացք

Մասնակիցները քայլում են դահլիճի երկայնքով: Ազդանշանի համաձայն՝ մեկ ծափ, բոլորը ձեռքերը դնում են գոտկատեղին, երկրորդ ազդանշանի համաձայն՝ երկու ծափ, իջեցնում են, երրորդ ազդանշանի համաձայն՝ երեք ծափ, ձեռքերը դնում են մեջքին: Ով սխալվում է՝ դուրս է գալիս շարքից, կանգնում վերջում և շարունակում է խաղը:



Գտի՛ր գնդակը

Նպատակ. զարգացնել ձայնի տեղակայման որոշման կարողությունը: Խաղն անցկացվում է երկու մասնակցով՝ մեծահասակը և երեխան:

Անհրաժեշտ նյութեր. ձայնային գնդակ (զանգ գնդակի ներսում՝ նախատեսված չտեսնող երեխայի համար):

Ընթացք

Խաղավարը թաքցնում է գնդակը կամ ինքն էլ է թաքնվում գնդակի հետ, որից հետո երեխան գնում է այն գտնելու:

Ցուցումներ

Գնդակը թաքցնելու ընթացքում երեխան կանգնում է ականջները փակած, որ չլսի գնդակի ձայնը, խաղավարի ոտնաձայները:

Խաղն անցկացվում է չորս անգամ՝ փոփոխելով ձայնի տեղայնացումը՝ աջից, ձախից, առջևից և ետևից:

Գնդակը փնտրելու ժամանակ երեխայի ճանապարհին խոչընդոտներ չպետք է լինեն:



Հասի՛ր ինձ

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշման կարողությունն՝ ըստ շարժվող ձայնի:

Խաղն անցկացվում է երկուսով՝ մեծահասակ և երեխա:

Անհրաժեշտ նյութեր. առանց խոչընդոտների 5x5 մետր տարածք, զանգակ:

Ընթացք

Մանկավարժը վարում է խաղը: Նա զանգակի, ձայնային գնդակի կամ ձայնային որևէ առարկայի միջոցով անընդհատ ձայն է արձակում և փախչում երեխայից, իսկ երեխան իր հերթին վազում է խաղավարի ետևից՝ կողմնորոշվելով ըստ ձայնի:

Ցուցումներ

Խաղի տեմպը դանդաղ է, խաղավարը հեռանում է քայլելով, այլ ոչ թե՝ վազքով:

Կարելի է երեխային հուշել ցուցումներով, օրինակ՝ «Մի քիչ աջ, մի քիչ ձախ» և այլն:



Տաք գնդակ

Նպատակ. զարգացնել ուշադրությունը, արագությունը, շարժողական արագ արձագանքը և ձեռքերի ճկունությունը:

Խաղն անցկացվում է երեխաների խմբի հետ (շուրջ տասը երեխա):

Անհրաժեշտ նյութեր. ձայնային գնդակ:

Ընթացք

Երեխաները շրջան են կազմում՝ կանգնելով միմյանցից 10սմ հեռավորության վրա: Ձայնային գնդակը մասնակիցներից մեկի ձեռքում է: Խաղավարի հրահանգով ձայնային գնդակը շատ արագ փոխանցվում է ձեռքից ձեռք:

Ցուցումներ

Եթե խաղին մասնակցում են նաև թույլ տեսնողներ կամ բնականոն տեսողությամբ երեխաներ, ապա պետք է նախապես նրանց պատրաստել, որ գնդակը չտեսնող երեխային փոխանցելիս անմիջապես նրա ձեռքը տան: Չտեսնող երեխային անհրաժեշտ է բացատրել՝ ինչ դիրքով ձեռքերը պահել (ափերը վերև, ճկույթները միմյանց կպած): Գնդակը գցողը դուրս է գալիս խաղից: Խաղը շարունակվում է այնքան, մինչև մնում են երկու հոգի, որոնք էլ հաղթողներն են:



Ինչո՞վ ենք խաղում

Նպատակ. զարգացնել լսողական ընկալման, ձայների տարբերակման կարողությունը:

Մասնակիցների քանակը՝ 4-15 երեխա:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր ձայներ արձակող առարկաներ՝ զանգակ, չիկչիկան խաղալիք, սուլիչ, փայտյա կամ մետաղյա գդալներ, ձայնային գնդակ, այլ ձայնային խաղալիքներ, թուղթ և այլն:

Ընթացք

Խաղն անցկացվում է դաշտում կամ խաղահրապարակում: Խաղի մասնակիցներից մեկն ընտրվում է խաղավար: Նա մյուս մասնակիցներին մեջքով կանգնում է 2-3մ հեռավորության վրա: Մի քանի մասնակից (երեք-չորս) ձայնային ազդանշանը լսելուն պես մոտենում են խաղավարին և հարցնում՝ «Ինչո՞վ ենք խաղում», ու սկսում են տարբեր առարկաներով ձայներ հանել: Խաղավարը պետք է գուշակի: Եթե ճիշտ է գուշակում՝ մտնում է խաղացողների խմբի մեջ, եթե ոչ՝ շարունակում է մինչև ճիշտ պատասխան տալը: Եթե երեք փորձից չի կարողանում գուշակել, մասնակիցները փոխում են ձայնային առարկան:

Ցուցումներ

Ձայները պետք է պարբերաբար փոխել: Պետք է սկսել ամենապարզ ձայներից, որոնք լավ ծանոթ են մասնակիցներին, ավարտել բարդ

ձայներով: Նոր, բարդ ձայների հետ պետք է ծանոթացնել երեխաներին նախապես:



Ճանաչի՛ր ձայնով

Նպատակ. զարգացնել լսողության և տարածական կողմնորոշման կարողությունը:

Մասնակիցների քանակը՝ 5-20 հոգի:

Ընթացք

Խաղն անցկացվում է մարզադահլիճում կամ խաղահրապարակում: Բոլոր մասնակիցները իրար ձեռք բռնած շրջան են կազմում: Խաղավարը կանգնում է կենտրոնում: Մասնակիցները ազդանշանից հետո վազում են աջ ու ձախ և փոխված ձայնով կանչում խաղավարի անունը: Եթե խաղավարը ձայնով ճանաչում է մասնակցին, ապա նրանք դերերով փոխվում են:



Հասի՛ր և բռնի՛ր զանգակը

Նպատակ. զարգացնել արագության, ճկունության, տարածական կողմնորոշման կարողությունները:

Մասնակիցների քանակը՝ 10-12 հոգի:

Անհրաժեշտ նյութեր. զանգակ:

Ընթացք

Խաղահրապարակն անհրաժեշտ է նշել շոշափվող կողմնորոշիչներով:

Մասնակիցներից երկուսն ընտրվում են խաղավար:

Մասնակիցներից մեկին տալիս են զանգակ: Մասնակիցը զանգակով փախչում է խաղավարներից, իսկ նրանք փորձում են հասնել և բռնել նրան: Մասնակիցը վտանգի պահին իրավունք ունի փոխանցել (սակայն չնետել) զանգակը մասնակիցներից որևէ մեկին:

Ցուցումներ

Ձույգերը կազմվում են ըստ տեսողության խանգարման աստիճանի՝ մեկը տեսնող, մյուսը՝ չտեսնող երեխա:

Մասնակիցները խաղահրապարակի սահմաններից դուրս գալու իրավունք չունեն: Բոլոր մասնակիցները կարող են ձայնային թնոցներ կրել:

◆◆◆ **Լավագույն զգայական խաղալիքները տեսողության խանգարում ունեցող երեխաների համար**

Շոշափվող խաղալիքներ

Կինետիկ ավազ

Կինետիկ ավազն այն հրաշալի զգայական խաղալիքն է, որին կարելի է պարզապես դիպել և գործողություններ կատարել: Այն անսովոր ծովափնյա ավազ է, որին կարելի է տարբեր ձևեր տալ, ձգել, սեղմել: Ամենահաճելին այն է, որ չի կաշում ձեռքերին, ինչն ավելի է գրավում այն երեխաներին, ովքեր չեն սիրում ցեխի հետ խաղալ:



Աղվափնջիկ գնդակ (Puffer ball)

Տեսողության խանգարումներ ունեցող շատ երեխաներ չեն համարձակվում դիպել կաշուն առարկաների, սակայն շատերին աղվափնջիկ գնդակը դուր է գալիս: Շատ կան շոշափողազգայական գնդակներ, սակայն երեխաների մեծամասնությունը սիրով խաղում է այս գնդակով, որն իր փափուկ ռետինե ելուստներով շատ հարմար է բռնելու համար: Աղվափնջիկ գնդակի լուսային տարբերակը նախընտրում են կեղևային տեսողության խանգարումով /CVI/ երեխաները:



◆◆◆ Ձայնային խաղալիքներ



Թմբուկ՝ տեսողության խանգարումով երեխաների համար

Իհարկե, երաժշտական գործիքները պետք է լինեն բոլոր տեսողության խանգարումով երեխաների խաղալիքների մեջ, սակայն այս թմբուկների հավաքածուն առանձնահատուկ է: Այն ոչ միայն իր մեջ ներառում է բզեզների թեմատիկայով մի քանի գործիքներ, այլև նրանցից յուրաքանչյուրը վառ գույն ունի, հետաքրքիր ձև և մակերես:



Մոցարտ կախարդական խորանարդիկ (Mozart magic cube)

Մոցարտ կախարդական խորանարդիկը թույլ տեսնող երեխաների համար դասական խաղալիք է: Այն կոճակներով խորանարդիկ է՝ ամեն կողմը մեկ երաժշտական գործիքի համար: Երեխաները սեղմում են տարբեր կոճակները, որպեսզի Մոցարտի երաժշտությունը լսեն:

Կոճակները շատ հեշտ են սեղմվում:

Մոցարտ կախարդական խորանարդը նաև թերապևտիկ նշանակության գործիք է:



◆◆◆ Վեստիբուլյար խաղալիք



Փակ բատուտ (Indoor Trampolines)

Սա չտեսնող/կույր երեխաների համար ֆիզիոթերապիայի գերազանց միջոց է համարվում: Այն վեստիբուլյար խթանման համար է:



◆◆◆ Ինտելեկտուալ խաղեր



Շախմատ

Շախմատի ստանդարտ հավաքածու՝ միայն վերևից բրայլյան համակարգով տաշված սիմվոլներով: Սև ու սպիտակ դաշտերը իրարից տարբերվում են շոշափվող մակերեսով:



Ռուբիկ կուբիկ /Ռուբիկ-խորանարդիկ

Խորանարդիկի կողմերին բրայլյան համակարգով գույներն են գրված, կամ յուրաքանչյուր գույնին համապատասխան շոշափվող նշան է:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Азарян Р.Н., Григорян Н.П. (2009). Коррекционно-развивающая работа со слабовидящими детьми в условиях массового детского сада //Педагогическая мысль.- Ереван.- С. 157-160.
2. Дружинина Л.А. (2006). Коррекционная работа в детском саду для детей с нарушением зрения. – М.: «Экзамен».
3. Нагаева Т.И. (2010). Нарушение зрения у дошкольников: Развитие пространственной ориентировки.- Ростов-на-Дону.- 92с.
4. Саматова А.В. (2012). Дети с глубокими нарушениями зрения. Изд-во: Феникс. Р-на-Дону, 96с.
5. Титарь А.И. (2007). Игровые развивающие занятия в сенсорной комнате. – М.: АРКТИ, 88с.
6. Celeste, M. (2006). Play Behaviours and Social Interactions of a Child Who Is Blind: In Theory and Practice. Journal of Visual Impairment & Blindness, 100(2), 75-90.

ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտանիքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող երեխայի ծնվելը ծնողների համար որոշակի դժվարություններ է առաջացնում, այդ թվում, հատկապես՝ մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի: Քանի որ նրանց զարգացումն ունի մի շարք առանձնահատկություններ, ներկայացնենք դրանցից հիմնականները.

- ընկալման աստիճանի նվազեցումը և հետաձգված արձագանքի ձևավորումը,
 - երեխայի կողմից սովորած նյութի յուրացման համար անհրաժեշտ են բազմաթիվ կրկնողություններ,
 - նյութի ընդհանրացման ցածր մակարդակ,
 - եթե հմտությունը բավարար չի օգտագործվում՝ այն մոռացվում է,
 - դժվարանում է յուրացրածը տեղափոխել մեկ այլ իրավիճակ:
- Միաժամանակ մի քանի հասկացություններ կիրառելու

չզարգացած ունակություն:

Այդպիսիք են՝

- մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխան դժվարանում է նոր տեղեկություններն արդեն ծանոթ նյութի հետ կապել, տեղափոխել մի իրավիճակից մյուսը,
- դժվարանում է կատարել շղթայական գործողություններ,
- չի կարողանում ինքնուրույն նպատակ դնել և պլանավորել գործողությունները:

Տարբեր ոլորտներում երեխայի անհամաչափ զարգացումը (շարժողական, սոցիալական, հուզական) և ճանաչողական ոլորտի զարգացման հետ սերտ կապը հաճախ դժվարացնում է այս երեխաների սոցիալականացման և ադապտացման գործընթացները: Մտավոր զարգացման խանգարումով երեխայի համար

ամենահասանելին և մատչելին այն գործողությունն է, որը նա կատարում է մեծահասակին ընդօրինակելով կամ նրա հետ:

Այս երեխաների մոտ ուշանում է ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական զարգացումը: Կարևոր է կյանքի առաջին տարվա ընթացքում սկսել զարգացնող վարժությունները և իրականացնել հատուկ պարապմունքներ՝ ուղղված երեխայի շարժողականության զարգացմանը, ստեղծել տարբեր խաղային իրավիճակներ, կիրառել հատուկ վարժություններ: Սրանք կօգնեն ավելի շուտ հասնել արդյունքի և կանխարգելել կամ նվազեցնել երկրորդային խանգարումների զարգացումը: Զգայական ընկալման խանգարումը կապված է հաճախակի հանդիպող տեսողական և լսողական խանգարումների հետ: Հայտնի է, որ մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների զարգացման սկզբնական մակարդակները տարբեր են, և դրանց զարգացման տեմպերը նույնպես կարող են զգալիորեն տարբերվել՝ կապված խանգարման աստիճանից: Այս երեխաները լավ ընդօրինակելու և դիտարկելու ունակությամբ են օժտված: Մտավոր զարգացման խանգարումով երեխան սովորում է մեծահասակների և հասակակիցների օրինակով:

Շատ կարևոր է սկսել այդ երեխայի զարգացմանն ուղղված աշխատանքները հնարավորինս շուտ՝ նախադպրոցական տարիքից: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս երեխայի զարգացումը չի տարբերվում այլ երեխաների զարգացումից, պարզապես, զարգացման տեմպը որոշ չափով ցածր և դանդաղ է: Այս կամ այլ հմտություններին տիրապետելու համար մտավոր զարգացման խանգարումով երեխային պետք են ավելի շատ կրկնողություններ, ուստի, նրա զարգացման գործընթացը պետք է ընթանա աստիճանաբար՝ փոքր քայլերով: Երեխաների զարգացման գործում նախադպրոցական հաստատության մանկավարժի դերը հսկայական է, քանի որ, ծնողի անմիջական մասնակցությամբ, հենց ինքն է օգնելու երեխային սովորել և զարգացնել նոր հմտություններ: Իսկ այդ հմտությունները

զարգացնելու ամենաարդյունավետ և հետաքրքիր ուղին խաղն է և տարբեր խաղային վարժությունները:

Խաղը երեխայի կյանքի անբաժան մասն է. այն առանցքային դեր ունի երեխայի հոգեկան և ֆիզիկական զարգացման գործընթացում: Խաղի շնորհիվ է երեխան ճանաչում շրջապատող միջավայրը, ուսումնասիրում, մանիպուլացնում այն: Նախադպրոցական հաստատությունում մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատելիս, բնականաբար, նույնպես կիրառվում են տարբեր նյութեր, խաղեր և վարժություններ: Խաղը յուրահատուկ միջնորդ ու շփվելու լեզու է մանկավարժի և երեխայի միջև: Անգամ շփման խնդիրներ ունեցող երեխան կգտնի խմբում/սենյակում իրեն հետաքրքրող խաղալիք կամ խաղ:

Զարգացմանն ուղղված աշխատանքում էլ խաղերը դառնում են գործիքներ՝ խթանելու այս կամ այն հոգեկան ոլորտը, գործընթացը: Խաղը դառնում է շարժիչ ուժ, որը վեր է հանում հոգեկան հենց այն բովանդակությունը, որի հետ մասնագետը ցանկանում է աշխատել: Հետևաբար, շատ կարևոր է իմանալ երեք կարևոր գործոն.

1. երեխայի տարիքային զարգացման առանձնահատկությունները,
2. խաղի զարգացման առանձնահատկությունները,
3. մասնագիտական աշխատանքում կիրառվող խաղերը, դրանց կիրառման ձևերը:

Ստորև ներկայացնում ենք տարբեր օրինակելի խաղեր և վարժություններ՝ ուղղված մտավոր զարգացման խանգարումներ ունեցող նախադպրոցականների զարգացմանը:

Հիգիենայի և ինքնասպասարկման հմտությունների զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ



Ջուր - ջուրիկ

Նպատակ. ձևավորել հետաքրքրություն ինքնասպասարկման հմտությունների ինքնուրույն կատարման ընթացքում:

Անհրաժեշտ նյութեր. երկու տիկնիկ:

Ընթացք

Մանկավարժը երկու տիկնիկ է ցուցադրում երեխաներին և ասում, որ նրանք պետք է ճաշ ուտեն, սակայն նրանց ձեռքերն ու դեմքը կեղտոտ են: Հարցնում է երեխաներին, թե ինչ պետք է անեն և պատասխանում, որ պետք է լվանան ձեռքերն ու դեմքը: Դրա համար խնդրում ենք ջրին մեզ օգնել. «Ջուր, ջուրիկ լվա իմ երեսը, որ աչքերս փայլեն, թուշիկներս կարմրեն, իսկ բերանս ժպտա»: Ապա լվանում են ձեռքերը: «Ջուր, ջուրիկ լվա իմ ձեռքերը, որ մաքուր և գեղեցիկ լինեն»: Այնուհետև առաջարկում է երեխաներին, ըստ կրկնօրինակման, լվանալ իրենց դեմքն ու ձեռքերը:



Լվա ձեռքերը

Նպատակ. սովորեցնել լվանալ ձեռքերը:

Անհրաժեշտ նյութեր. ռետինե նապաստակ:

Ընթացք

Մանկավարժը դիմում է երեխային՝ «Մենք եկել ենք զբոսանքից և պետք է լվանանք ձեռքերը, իսկ նապաստակը նայելու է մեզ»: Մանկավարժը դնում է նապաստակին լվացարանի անկյունում և երեխայի հետ լվանում ձեռքերը: Ավարտելուց հետո նապաստակի անունից գովեստի խոսքեր է ասում երեխային:

Հետագայում ձեռքերը լվանալու հմտությունը բարդացվում է՝ երեխային սովորեցնելով ինքնուրույն բացել ծորակը, օճառել ձեռքերը, ճիշտ լվացվել, սրբվել և կախել սրբիչը կախիչից:

Կարևոր է, որ մանկավարժն ուշադրություն դարձնի երեխայի գործողությունների կատարման ճիշտ հերթականությանը. սկզբում նա պետք է կրկնօրինակի, ապա՝ ինքնուրույն կատարի: (Стребелева, Мишина 2014):



Բարի առավոտ

Նպատակ. սովորեցնել լվացվել:

Անհրաժեշտ նյութեր. հայելի, սրբիչ:

Ընթացք

Մանկավարժը երեխային ուղեկցում է լոգասենյակ և խնդրում, որ նայի հայելու մեջ՝ երեխայի ուշադրությունը դարձնելով դեպի աչքերը, բերանը, քիթը, այտերը և այլն: Առաջարկում է երեխային միասին լվացվել՝ միաժամանակ ցույց տալով, թե ինչպես պետք է կատարել գործողությունը: Ընթացքում կարող է կարճ ոտանավոր արտասանել կամ երգել: Լվացվելուց հետո մանկավարժը սովորեցնում է երեխային սրբել երեսը, նայել հայելու մեջ և ասում է՝ «Ի՛նչ մաքուր ես, նայիր հայելու մեջ»:



Սանրվածք

Նպատակ. սովորեցնել բռնել սանրը, սանրել մազերը վերնից ներքև:

Անհրաժեշտ նյութեր. հայելի, սանր, տիկնիկ:

Ընթացք

Մանկավարժը երեխային տիկնիկ է ցուցադրում և ասում՝ «Տես, ինչ գեղեցիկ երկար մազեր ունի տիկնիկը, ինչ վառ գույնի ժապավեն: Արի քեզ էլ գեղեցիկ սանրվածք անենք»: Մանկավարժը հայելու առջև սանրում է երեխայի մազերը, հետո խնդրում, որ երեխան ինքնուրույն կատարի նույն գործողությունը՝ սանրը փոխանցելով նրան: Գործողության կատարման ընթացքում մանկավարժն իր ձեռքով ուղղորդում է երեխային՝ մազերը սանրել վերնից ներքև: Վերջում նորից նայում են հայելու մեջ՝ երեխային ասելով, որ նա էլ տիկնիկի նման գեղեցիկ է:



Լվանում ենք ատամները

Նպատակ. սովորեցնել լվանալ ատամները:

Անհրաժեշտ նյութեր. ատամի երկու խոզանակ, բաժակով ջուր, հայելի:
Ընթացք

Մանկավարժը խնդրում է երեխային նայել հայելու մեջ՝ ուշադրություն դարձնելով ատամներին:

Ապա ասում է, որ պետք է ատամները լվանալ, որպեսզի դրանք չհիվանդանան:

Մանկավարժը վերցնում է երկու խոզանակ, մեկը տալիս երեխային, իսկ մյուսով ցույց տալիս, թե ինչպես պետք է մաքրել ատամները:
Գործողության ընթացքում կարող է արտասանել.

Բերան, բերանիկ, որտե՞ղ ես,

Ատամ, ատամիկ որտե՞ղ ես,

Իսկ դո՞ւ թուշիկ, կարմիր թուշիկ,

Կլինի սիրուն մաքուր բալիկ:

Խաղի վերջում մանկավարժը երեխայի հետ նայում է հայելու մեջ և լայն ժպտում՝ ցույց տալով մաքուր ատամները: Դժվարությունների դեպքում՝ օգտագործվում են մանկավարժի և երեխայի համատեղ գործողությունները:



Քիթ-քիթիկները

Նպատակ. սովորեցնել օգտագործել թաշկինակ/անձեռոցիկ:

Անհրաժեշտ նյութեր. անհատական թաշկինակներ/անձեռոցիկներ:

Ընթացք

Մանկավարժը առողջանությանը արտասանում և ցուցադրում է յուրաքանչյուր գործողությունը.

Թաշկինակը գրպանում է (հանում է թաշկինակը գրպանից),

Մեր քիթիկը կսրբենք (ցուցադրում է գործողությունը),

Որ գեղեցիկ մեր քիթիկը (դնում է թաշկինակը գրպանի մեջ)

Կրկին լինի գեղեցիկ:

Ապա յուրաքանչյուր երեխայի խնդրում է ցույց տալ, թե ինքն ինչպես է կարողանում օգտվել թաշկինակից:



Հագնվում ենք, որ գնանք զբոսանքի

Նպատակ. սովորեցնել հագնվել ճիշտ հերթականությամբ, համադրել հագուստը մարմնի մասերին համապատասխան:

Անհրաժեշտ նյութեր. երեխայի հագուստ:

Ընթացք

Մանկավարժը առաջարկում է երեխաներին հագնվել և գնալ զբոսանքի: Դնում է հագուստը երեխայի առջև և ցույց տալով բացատրում, թե որ հագուստը պետք է հագնել մարմնի համապատասխան մասին: Այնուհետև երեխաները փորձում են հագնվել ինքնուրույն. եթե չի ստացվում, մանկավարժը օգնում է երեխային՝ օգտագործելով բանավոր խոսքը:



Գտի՛ր գույգը

Նպատակ. սովորեցնել տարբերակել կոշիկի գույգերը, գտնել կոշիկի համապատասխան գույգը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր տեսակի կոշիկներ, Անի անունով տիկնիկ:

Ընթացք

Մանկավարժն ստեղծում է խաղային իրավիճակ. Անին խառնել է բոլոր կոշիկները, դրանք հայտնվել են սենյակի տարբեր անկյուններում: Նա չի կարող ինքնուրույն գտնել բոլորը: Գտել է մի կոշիկը, չի կարող գտնել երկրորդը և այլն: Երեխային առաջարկում ենք օգնել Անիին գտնել կոշիկները: Մանկավարժը ցույց է տալիս արդեն գտնված կոշիկը, իսկ երեխան պետք է գտնի մյուսը՝ անվանելով այն: Խաղի վերջում մանկավարժը երեխային առաջարկում է գտած կոշիկները հագցնել Անիին:



Ճաշ՝ տիկնիկների հետ

Նպատակ. ձևավորել ճաշի սեղան պատրաստելու նկատմամբ հետաքրքրություն և կարողություն:

Անհրաժեշտ նյութեր. խաղալիք սպասք, սփռոց, երկու տիկնիկ:

Ընթացք

Մանկավարժը խնդրում է երեխային ճաշի սեղան պատրաստել տիկնիկների համար՝ ցուցադրելով անհրաժեշտ առարկաները և դրանց հետ իրականացվող գործողությունները: Այնուհետև երեխային առաջարկում ենք հրավիրել տիկնիկներին սեղանի շուրջ և հյուրասիրել նրանց:



Հավաքի՛ր սեղանը

Նպատակ. ձևավորել ինքնուրույն գործողություններ կատարելու հմտություններ՝ հավաքել ավսենները սեղանից, մաքրել սեղանը:

Անհրաժեշտ նյութեր. սպասք, խոզանակ կամ սեղանը մաքրող լաթ, սկուտեղ:

Ընթացք

Մանկավարժը ցույց է տալիս՝ ինչպես հավաքել սպասքը սեղանից, և առաջարկում է նույնը կատարել՝ իրեն կրկնօրինակելով: Բոլոր գործողությունները ուղեկցվում են բանավոր խոսքով՝ մեկնաբանություններով. «Մենք սկուտեղի վրա ենք դնում ավսեն, բաժակը, գդալը...» և այլն: Ապա ցույց է տալիս, թե ինչպես պետք է մաքրել սեղանը: Բոլոր գործողությունների կատարման ժամանակ երեխային ինքնուրույն գործելու հնարավորություն ենք տալիս: (Шинкаренко, 2015):



Անկողինը պատրաստի՛ր քնելու համար

Նպատակ. ձևավորել կարողություն՝ ինքնուրույն կատարելու առօրյա գործողությունները:

Անհրաժեշտ նյութեր. մահճակալ, բարձ, սավան, վերմակ, ծածկոց:

Ընթացք

Մանկապարտեզում քնելուց առաջ մանկավարժն առաջարկում է երեխաներին բացել իրենց անկողինը և պատրաստվել քնելու: Մեկնաբանելով ցուցադրում է գործողություններն ըստ հերթականության. սկզբում բացում են ծածկոցը, ապա՝ վերմակը, ուղղում բարձր: Երեխաները փորձում են գործողությունները կատարել ինքնուրույն, դժվարանալու դեպքում՝ մանկավարժը օգնում է նրանց: Արթնանալուց հետո, նույն սկզբունքով սովորեցնում են հարդարել անկողինը (Стребелева, Мишина, 2014):



Մաքրում ենք կոշիկները

Նպատակ. ձևավորել խոզանակի միջոցով կոշիկները մաքրելու կարողություն:

Անհրաժեշտ նյութեր. կոշիկ, խոզանակ:

Ընթացք

Մանկավարժը երեխաների ուշադրությունն ուղղում է կեղտոտ կոշիկների վրա, բացատրում խոզանակի նշանակությունը: Ցուցադրելով գործողությունը, կարելի է արտասանել, օրինակ՝ «Խոզանակը վերցրեցի, կոշիկներս մաքրեցի»: Դրանից հետո երեխաները փորձում են նույն գործողությունն ինքնուրույն կատարել:



Ճանաչողական ոլորտի և սոցիալական-գարգամանն ուղղված խաղեր, վարժություններ



Փակում ենք շիշը

Նպատակ. զարգացնել մանր շարժունակությունը և ուշադրությունը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր չափերի շշեր:

Ընթացք

Վերցնում ենք տարբեր չափերի շշեր, բացում կափարիչները, խառնում և երեխային առաջարկում նորից փակել դրանք (Стребелева, Мишина, 2014):



Լվանում ենք ափսեները

Նպատակ. զարգացնել սոցկենցադային հմտություն:

Անհրաժեշտ նյութեր. սպունգ, ափսե, աման լվանալու հեղուկ, ջուր:

Ընթացք

Վերցնել սպունգ և օձառ, ու առանց շտապելու երեխային ցույց տալ, թե ինչպես է պետք լվանալ ափսեները: Հետո առաջարկել, որ նա կրկնի տեսածը:

Թափել մանրաձավարը, վերցնել ավելը, միասին մաքրել, ապա նույն սկզբունքով թափել ջուրը և սրբել (Стребелева, Мишина, 2014):



Կերակրի՝ր նապաստակին

Նպատակ. ձևավորել կերակրելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. կոճակներ, ժապավեններ, թելեր:

Ընթացք

Մանկավարժի հետ միասին վերցնել կոճակներ, ժապավեններ, թելեր և պատրաստել, օրինակ՝ նապաստակ և գազար, ամրացնել միմյանց ժապավենով կամ կոճակով և խաղալ «Կերակրի՝ր նապաստակին գազարով» խաղը:

- Վերցնել տարբեր կտորներ՝ մետաքսե, բամբակյա և բրդյա: Քննարկել, թե ինչպիսի կտոր են նրանք ձեռք տալիս: Առաջարկել գտնել նմանատիպ կտոր:
- Մանր առարկաները՝ կոճակները, մոզաիկան, գնդակները նետել ջրով լցված լայն բերանով շշի մեջ և դուրս հանել գդալով:
- Վերցնել երեխային ծանոթ ութից տասը առարկայով լցված տոպրակ: Երեխան փակ աչքերով հանում է առարկաները և անվանում դրանք: Հետագայում կարելի է դժվարացնել խնդիրը՝ տոպրակի մեջ դնելով միայն մեկ տառով սկսվող առարկաներ:



Դույլ-դույլիկ

Նպատակ. զարգացնել /սովորեցնել ջրով գործողություններ կատարել:
Անհրաժեշտ նյութեր. երկու ափսե կամ փոքր դույլեր, սպունգ, բաժակ:
Ընթացք

Մի ափսեի կամ դույլի մեջ լցնում ենք ջուր և սպունգի օգնությամբ տեղափոխում ջուրը մյուս ափսեի կամ դույլի մեջ: Նույն գործողությունը կատարում ենք բաժակի օգնությամբ՝ երեխայի մոտ ձևավորելով թացի և չորի, տաքի և սառի մասին պատկերացում:



Գլորի՛ր ուլունքները

Նպատակ. ձևավորել մանր շարժունակությունը, չափի և ձևի մասին պատկերացումները:

Անհրաժեշտ նյութեր. ուլունքներ, ափսե, խողովակի կտոր:

Ընթացք

Խողովակը պահել թեքությամբ և ուլունքները նրանով գլորել ափսեի մեջ: Կարելի է մրցել, թե ում ուլունքն ավելի շուտ տեղ կհասնի: Խաղն անհրաժեշտ է իրականացնել մանկավարժի անմիջական հսկողությամբ:

Ճմրթել, կտրատել կամ ծալել թուղթը: Դա կզարգացնի երեխայի ձեռքերի ճկունությունը:

Թեթև քաշով պարկեր՝ թելով կապված: Երեխան դրանք պետք է քաշի իր ետևից: Զարգացնում է ձեռքերի ուժն ու դիմացկունությունը:

Ժապավենի վրա անցկացնել ցանկացած առարկա, որ անցք ունի (Шинкаренко, 2015):

Խառնել ուլունքները և առաջարկել, որ դրանք դասավորեն տարբեր տուփերի մեջ: Ընտրում ենք հնարավորինս մեծ չափերի ուլունքներ (Шинкаренко, 2015):



Լցրո՛ւ շիշը

Նպատակ. զարգացնել մանր շարժունակությունը, ձևավորել կոճակի և այլ փոքրիկ առարկաների մասին հասկացողություն:

Անհարժեշտ նյութեր. լայն անցքով շիշ, կոճակներ, ուլունքներ, փոքրիկ առարկաներ:

Ընթացք

Շշի մեջ երեխաները գցում են ուլունքներ, կոճակներ և այլ փոքր առարկաներ՝ մանկավարժի հետ անվանելով առարկաները, դրանց գույները: Հաղթում է նա, ով կարողանում է բոլորը գցել շշի մեջ:

Լորով, ոլոռով լի պարկեր. կարելի է դատարկել, վերադասավորել կամ պարկերի մեջ թաքցնել փոքրիկ խաղալիքներ և երեխայի հետ որոնել դրանք:



Ուտում ենք հատապտուղներ

Նպատակ. սովորեցնել հատապտուղների անունները (օրինակ՝ ելակ, հաղարջ):

Անհարժեշտ նյութեր. սառույցի աման, փոքր գդալ, հատապտուղներ, ափսե:

Ընթացք

Սառույցի ամանից երեխան գդալով փորձում է հանել հատապտուղը, անվանում է այն ու դնում իր ափսեի մեջ: Հաղթում է նա, ով կարողանում է միանգամից հանել և անվանել այն: Հետո բոլորը միասին համտեսում են:

Երեխային նստեցնել աթոռին, սեղանին այուր թափել, առաջարկել՝ մատիկներով, փայտիկով կամ վրձինով նկարի այուրի վրա:

Սկուտեղ, մոզախկա, լոբի:

Երեխան կարող է որոնել-գտնել լոբիները մոզախկայի կտորների միջից: Նաև պետք է սովորեցնել, թե ինչն է ուտելի, ինչը՝ ոչ:

Ջրով ափսե, մի կաթիլ հեղուկ օճառ և վրձին:

Հանձնարարել, որ երեխան վրձինով փրփուր ստանա:



Գտի՛ր կափարիչը

Նպատակ. ձևավորել պատկերացումներ չափի, ձևի մասին:

Անհարժեշտ նյութեր. երեք տարբեր չափերի կաթսաներ և կափարիչներ. դրանք կարող են լինել և՛ իրական, և՛ խաղալիք:

Ընթացք

Մանկավարժը ցույց է տալիս կաթսաները և առաջադրում երեխաներին, որ որոնեն ու գտնեն ճիշտ կափարիչը: Այնուհետև սովորեցնում է կաթսաները մեկը մյուսի մեջ դնել (Стребелева, Мишина, 2014):



Ծանր-թեթև


Նպատակ. ձևավորել ծանրի ու թեթևի մասին պատկերացում:

Անհարժեշտ նյութեր. պլաստմասե բարձր բաժակ կամ ջրով ծաղկաման, տարբեր մանր առարկաներ:

Ընթացք

Երեխային սովորեցնում ենք մանր առարկաները նետել ջրի մեջ: Մինչ երեխան դրանք հերթով նետում է ջրի մեջ և հետևում, թե ինչպես են առարկաները սուզվում, մանկավարժը բացատրում է, թե որն է ծանր, որը՝ թեթև:

- Վերցնել հին թերթեր կամ ամսագրեր և երեխայի հետ մասնատել դրանք: Ընդ որում, դա պետք է ճիշտ անել. երկու ձեռքերի մատներով բռնել թուղթը և տարբեր կողմեր քաշել: Հետո կարելի է ամբողջը հավաքել և օդ նետել, որից հետո միասին հավաքել:
- Պետք չէ շտապել ծեփամածիկով ինչ-որ բան պատրաստել. կարելի է սկզբում, պարզապես, տրորել ու մարզել ձեռքի մկանները, հետո գլորել և վրան տարբեր մանր առարկաներ հավաքել (Стребелева, Мишина, 2014):



🟢🟡🟠 **Տարածական կողմնորոշման զարգացմանն ուղղված խաղեր, վարժություններ**



Ու՞ր

Նպատակ. սովորեցնել կողմնորոշվել տարածությունում:

Անհարժեշտ նյութեր. թղթի վրա պատկերված մեքենա և ծառ:

Ընթացք

«Ուշադիր նայեք նկարին: Ո՞ւր մեքենաներն են գնում ձախ, որոնք՝ աջ: Ուշադիր նայեք ծառերին: Ձեր կարծիքով որո՞նք են տեղադրված ճանապարհից աջ, որոնք՝ ձախ»:



Ի՞նչ է պատահել

Նպատակ. զարգացնել թղթի (գրատախտակի) վրա կողմնորոշման կարողություն:

Անհրաժեշտ նյութեր. թուղթ, գրատախտակ, մատիտ:

Ընթացք

Մանկավարժ. Ես ցույց կտամ, կասեմ, թե ինչպես պետք է գիծ քաշել, իսկ դուք ուշադիր լսե՛ք (նայեք) և նկարե՛ք ինչպես ես: Օրինակ՝ մեկ վանդակ աջ, մեկ՝ ներքև, մեկ՝ ձախ, մեկ՝ վերև: Ի՞նչ ստացվեց: Ստացվեց քառակուսի: Սա ամենահեշտ հանձնարարությունն է, եկեք շարունակենք խաղը: Օրինակ՝ մեկ վանդակ վերև, մեկը՝ աջ, երկուսը ներքև, մեկը՝ աջ, մեկը՝ ներքև, մեկը՝ վերև» և այլն:



Գտի՛ր խաղալիքը

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշման կարողությունը պլանի (քարտեզի) օգնությամբ:

Ընթացք

Աննկատելի թաքցնում ենք խաղալիքը պլանի վրա, կարմիր գույնով նշում այդ տեղը: Երեխան, ըստ պլանի, պետք է գտնի խաղալիքը: Խաղը կարելի է կրկնել մի քանի անգամ՝ խաղալիքը տարբեր տեղեր թաքցնելով:

Ցուցում

Այս խաղն անցկացնելու համար նախօրոք պետք է նկարել (երեխայի հետ միասին) սենյակի կամ բակի պլանը և նշել, թե ո՛ր խաղալիքը պետք է գտնել:



Գնացք

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշումը՝ երաժշտությամբ:

Ընթացք

Երեխաները կանգնում են մեկը մյուսի ետևից և ուրախ, աշխույժ երաժշտության ներքո քայլում շրջանով: Լսելով խաղավարի ծափի ձայնը՝ երեխաները կտրուկ թեքվում են և գնում դեպի իրենց նստարանները: Այնուհետև բարդացնելով առաջադրանքը՝ յուրաքանչյուր ծափի ժամանակ կամ դուրս են գալիս միջանցք, կամ՝ գնում կողքի սենյակ:



Տեղադրի՝ ր առարկաները

Նպատակ. զարգացնել մոտակա տարածքում կողմնորոշվելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. բաժակ, սրբիչ, տիկնիկ, մեքենա և այլն:

Ընթացք

Երեխաներին բաժանում են առարկաներ (բաժակ, սրբիչ, տիկնիկ/մեքենա և այլն): Յուրաքանչյուր երեխա, ով վերցնում է առարկան, պետք է տանի և տեղադրի այն իր տեղում: Բաժակը դնի պահարանում, սրբիչը՝ կախի կախիչից, տիկնիկը/մեքենան՝ դնի խաղալիքների տուփի մեջ և այլն: Հանձնարարությունը կարելի է կատարել գույգերով՝ ըստ օրինակի կամ խոսքային հրահանգի: Հաղթում է նա, ով ճիշտ է տեղադրում առարկաները:



Աջ-ձախ

Նպատակ. երեխաներին սովորեցնել կողմնորոշվել տարածության մեջ:

Արջուկը կանգնած է խաչմերուկում՝
 Ո՞րն է աջն ու ձախը՝ չէր հասկանում:
 Հանկարծ արջուկը գլուխը քորեց
 Ու հասկացավ, որ աջով դա արեց...
 Գնդակ նետեց և գիրքը թերթեց,
 Գդալ բռնեց և հատակը մաքրեց:
 - Հաղթանա՛կ, -լսվեց հաղթական մի ճիչ.
 Վերջապես հասկացավ աջն ու ձախը ճիշտ:

Ինչպե՞ս արջուկն իմացավ աջն ու ձախը: Ո՞ր ձեռքով նետեց գնդակը: Ցու՛յց տուր աջ (ձախ) ձեռքը:



Նապաստակ

Նպատակ. սովորեցնել կողմնորոշվել ըստ սեփական մարմնի աջ և ձախ կողմերի: Երեխաները, լսելով բանաստեղծությունը, ըստ օրինակի կատարում են վարժությունը:

- Փափկամազի՛կ նապաստակ,
 Որտե՞ղ ես դու ապրում, ասա:՝
- Արահետով, որ գնաս
 Ու ձախ թեքվես, կտեսնես
 Իմ հարազատ տունը:
 Դե հարվածի՛ր աջ ոտքով,
 Հետո նորից ձախ ոտքով,
 Նորից աջով, հետո՝ ձախով:



Ամենաճարպիկը

Նպատակ. զարգացնել տարածակողմնորոշիչ հակազդումները:

Անհրաժեշտ նյութեր. ձողիկներ, տուփեր, տվյալ խաղի համար կարող եք օգտագործել մատիտներ:

Ընթացք

«Երեխանե՛ր, ձեր առջև տուփեր են, որոնց մեջ դրված են ձողիկներ: Հիմա կսկսենք մրցույթը: Իմ ազդանշանով աջ ձեռքով տուփից հանե՛ք մեկ ձողիկ: Այնուհետև՝ նույն ձեռքով մեկական ձողիկ դրե՛ք տուփի մեջ»: Այս խաղը կարելի է կատարել ձախ կամ երկու ձեռքով միաժամանակ:

Կհաղթի այն խումբը, որն առաջինը և ճիշտ կկատարի հանձնարարությունը:



Որտե՞ղ է

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշումը սեղանի վրա:

Անհրաժեշտ նյութեր. սեղան, որի վրա դրված է բաժակ, ափսե, գդալ, հացաման:

Ընթացք

Նշված առարկաները տեղադրված են անկյուններում: Մեջտեղում գտնվում է զամբյուղ: «Ուշադի՛ր նայիր և ասա՝ որտեղ է գտնվում բաժակը, գդալը, ափսեն, հացամանը: Վերցրու այդ առարկաները (մանկավարժն անվանում է դրանք) և դիր մեջտեղում դրված զամբյուղի մեջ»:

Ցու՛յց տուր՝ ի՞նչ է պատկերված զամբյուղից աջ, ձախ, վերև, ներքև: Հաղթում է նա, ով անսխալ կատարում է հանձնարարությունը:





Նկարում ենք թաշկինակներ

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշումը սահմանափակ տարածությունում:

Ընթացք

Մանկավարժ.

- Ուշադի՛ր նայեք թաշկինակներին, որոնց վրա նախշեր են պատկերված: Նկարե՛ք նույն նախշը թաշկինակի մյուս անկյունում:

Համեմատե՛ք: Գտե՛ք սխալները:

Նույնը կատարել թղթի, գրատախտակի վրա:



Կախարդական մատիտ

Նպատակ. զարգացնել թղթի վրա կողմնորոշվելու կարողությունը:

Ընթացք

Մանկավարժ.

- Երեխանե՛ր, մենք ունենք կիսատ նկարած նախշեր, դրանք պետք է ավարտել կախարդական մատիտով, որից հետո նախշերն էլ կդառնան կախարդական: Եկեք սկսենք.

- ամբողջական դարձրու նախշը աջից,
- ավարտիր նախշը ձախից,
- նկարիր նախշ վերևում, հետո՝ ներքևում:



Որտե՞ղ են թաքնված գանձերը

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշիչ ռեակցիաները:

Ընթացք

Խմբում դրվում են տարբեր խոչընդոտներ (գնդակ, աթոռ, դույլ և այլն): «Երեխանե՛ր, ճիշտ հաղթահարելով խոչընդոտները, դուք կգտնեք գանձերը: Կանգնե՛ք դռան առջև և սկսե՛ք: Խմբի մուտքի դուռը ելման կետն է: Թեքվեք աջ և կատարեք երեք քայլ առաջ:



Թեքվեք աջ և ցատկեք գնդակի վրայով: Գնացեք չորս քայլ առաջ, շրջանցեք աթոռը» և այլն: Հաղթում է նա, ով ճիշտ կանցնի ճանապարհը:



Հավաքում ենք բերքը

Նպատակ. զարգացնել տարածական կողմնորոշման կարողությունը:

Ընթացք

Երեխաները, աշխատելով մանկապարտեզի տարածքում, հավաքում են բերքը: Երեխաները պետք է անցնեն կենտրոնական ճանապարհով, գտնեն ծառեր, որոնք գտնվում են աջ կողմում, հետո՝ թփեր ձախ կողմում: Այս ամենից հետո հավաքած բերքը տանում են առաջին հարկում գտնվող ճաշարան:



Էքսկուրսիա

Նպատակ. զարգացնել տարածական պատկերացումները մանկապարտեզի բակում:

Ընթացք

«Երեխանե՛ր, այսօր գնալու ենք մակապարտեզի բակ էքսկուրսիայի: Մենք կշրջենք բակում և կանվանենք այն ամենը, ինչը կտեսնենք: Այնուհետև կվերադառնանք խումբ/սենյակ և կպատմենք, թե ինչ տեսանք»:

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները մանկավարժի հետ գործածում են բառեր և բառակապակցություններ, որոնք բնորոշում են տարածական հարաբերությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ագապյան Թ. Յու., Մտավոր հետամնաց աշակերտների տարածական կողմնորոշման զարգացման միջոցները: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր. ԷդիտՊրինտ, 2012, 45 էջ
2. Հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների մանկավարժական աջակցություն: Հատուկ կրթության մանկավարժների համար նախատեսված վերապատրաստման գործնական դասընթացի փաթեթ, Եր., Աստղիկ, 2017, 52 էջ
3. Игры и занятия с детьми раннего возраста с психофизическими нарушениями//Методическое пособие для родителей и педагогов дошкольных учреждений, под.ред. Стребелевой Е.А., Мишиной Г.А., М., Из-во “Экзамен”, 2014, 160 с.
4. Методика формирования умений учебной деятельности у учащихся с легкой интеллектуальной недостаточностью//Методическое пособие, под.ред. Шинкаренко В.А., Минск, Из-во “Четыре четверти”, 2015, 76 с.

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճանաչողական, շարժողական հուզական, սոցիալական ոլորտներում ցանկացած երեխայի զարգացման համար խաղն անհրաժեշտ է: Մենք խաղում ենք, երգում երեխայի համար, զվարճալի հնչյուններ ենք արտասանում կամ դիմախաղով ուրախացնում նրան: Խաղում ենք նաև, երբ թույլ ենք տալիս երեխային ուսումնասիրել առարկաները և դրանք նետել հատակին:

Շարժումների կատարման և կեցվածքի պահպանման հետ կապված դժվարությունների պատճառով, շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների աշխարհը ուսումնասիրելու հնարավորությունը սահմանափակ է: Սակայն սա չի նշանակում, որ ուսումնասիրությունները քիչ են, և դրանք մեկ անգամ ևս փաստում են, որ այս պարագայում խթանման և խաղային գործունեությունը հեշտացնող միջավայրի ստեղծման շատ կարիք կա (Sulaiman, Ghazali, 2016):

Շարժունակության խանգարումներ ունեցող երեխաները հաճախ ավելի պասիվ են և դյուրագրգիռ: Արդյունքում նրանք, կարծես թե, ավելի քիչ ուշադրություն են պահանջում շրջապատից և ավելի քիչ են շփվում իրենց խնամողների հետ, ինչը հանգեցնում է նրան, որ երեխան դառնում է ավելի պարփակված, պասիվ և անտարբեր: Սա, իհարկե, խստորեն խոչընդոտում է երեխայի զարգացմանը և հանդիսանում ընդհանուր խնդիր, որը պետք է շուտափույթ լուծում ստանա: Խաղի և խաղային փոխազդեցությունների միջոցով և՛ երեխան, և՛ խնամողը հաճելի գործողություններ են կատարում՝ առանց որևէ արդյունքի մասին հոգ տանելու (Blanche, 2008):

Խաղը ցանկացած երեխայի զարգացման կարևոր բաղադրիչներից է: Այս գործողությունը երջանկացնում և միաժամանակ զարգացնում է երեխային: Խաղի զարգացման հիերարխիկ փուլային հաջորդականությունն ընթանում է բոլոր

երեխաների համար միննույն կերպ՝ անկախ նրանց զարգացման առանձնահատկություններից (Huang, Ragonesi, Stoner, Peffley, Galloway, 2014):

★ ★ ★ Մեթոդական ցուցումներ մանկավարժներին՝
շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների խաղային
գործունեության կազմակերպման վերաբերյալ

- Անհրաժեշտ է ապահովել երեխայի այնպիսի դիրք, որ նա կարողանա տեսնել իր ձեռքերը, իր հետ խաղացողին կամ խաղացող այլ երեխաներին: Ճիշտ դիրքավորումը կարևոր է նաև որպեսզի երեխան կարողանա ազատ բռնել խաղալիքները և տանել բերանը: Հաճախ փոփոխե՛ք երեխայի դիրքը և խրախուսե՛ք երեխային ակտիվ լինել յուրաքանչյուր դիրքում:
- Ցանկալի է խաղը դարձնել երեխայի առօրյայի մի մաս: Օրինակ՝ լվացվելիս կարող եք խրախուսել նրան ջուր ցողել կամ խաղալ պլաստիկ խաղալիքի հետ, կարծես դա նավ լինի:
- Պետք է փորձել օգտագործել խաղաժամանակը նոր հմտություններ սովորեցնելու և զարգացնելու համար, բայց հիշե՛ք, որ դա պետք է զվարճալի ու հաճելի լինի երեխայի համար: Ցանկացած լավ մասնագետ պետք է հիշի, որ երեխաներն ավելի լավ են սովորում, երբ զվարճանում են:
- Մասնագետներից շատերը հիմնականում գիտեն ինչպես խաղալ երեխաների հետ: Խաղը դժվարանում է, երբ երեխան չի պատասխանում այնպես, ինչպես մենք ակնկալում ենք, կամ եթե մասնագետը խղճում է երեխային: Փորձե՛ք խրախուսել խաղային գործունեությունը ցանկացած իրավիճակում և միշտ հիշեք, թե ինչքան կարևոր է խաղը երեխայի զարգացման համար:
- Յուրաքանչյուր մշակույթում կան ավանդական խաղեր, որոնք մեծահասակները խաղում են երեխաների հետ. ցանկալի է

հնարավորինս շատ կիրառել այդ խաղերը (Հալամուլա, Չիկ դաստա, Այգեպան, Յոթ քար և այլն):

- Մեծանալով՝ երեխաներն ավելի շատ են խաղում և հաղորդակցվում իրենց հասակակիցների հետ. սա առավել կարևոր է շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար: Այս հնարավորությունը նախադպրոցական հաստատություններում պետք է միշտ ստեղծվի նրանց համար: Միևնույն ժամանակ սա հիանալի քայլ է դեպի ներառում և մարդկային բազմազանության մասին սովորելու արդյունավետ փորձ:

★ ★ ★ **Շարժունակության խանգարումներ ունեցող երեխայի հետ խաղ կազմակերպելիս մասնագետը պետք է հետևի հետևյալ կանոններին՝**

- Ցանկացած խաղից առաջ երեխաներին անհրաժեշտ է մանրամասն ծանոթացնել խաղի կառուցվածքին և ընթացքին:
- Երեխաները պետք է իմանան խաղի անվանումը, խաղացողների դերերը և տեղակայումը, խաղի կանոնները:
- Աղմուկ-աղաղակը, ուրախ ձայնարկությունները, բնականոն երևույթները պետք է խրախուսել, և երբեք՝ չարգելել:
- Խաղավարը պետք է օբյեկտիվ մոտեցում դրսևորի, կարգավորի և ապահովի հաղթող և պարտվող երեխաների համապատասխան հուզական ապրումները:
- Խաղավարը պետք է միշտ կարգավորի երեխայի ծանրաբեռնվածությունը խաղի ժամանակ և վստահ լինի, որ շարժունակության խանգարումներ ունեցող երեխան կարող է ներգրավվել և մինչև ավարտը մասնակցել տվյալ խաղում: Այս գործընթացը կարելի է կառավարել՝ կրճատելով խաղի տևողությունը, ընդմիջումներ առաջարկելով, խաղացողների

քանակի կրճատումով, խաղի կանոնների փոփոխությամբ, խաղացողների դերերի փոփոխությամբ և այլն:

- Ցանկացած խաղ պետք է ժամանակին ավարտել, որպեսզի երեխաները չկորցնեն դրա նկատմամբ հետաքրքրությունը:

ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔՆԵՐ

(խորհուրդ է տրվում կիրառել ցանկացած խաղից կամ վարժությունից առաջ)

Պարապմունքն սկսելուց առաջ անհրաժեշտ է մերսել երեխաների ձեռքերը կամ այնպիսի վարժություններ անել, որոնք կտաքացնեն մատիկները և դաստակը, դրանով իսկ ձեռքը կնախապատրաստվի ավելի բարդ համալիր վարժություններ կատարելուն: Համառոտ ներկայացնում ենք մի քանի նմանատիպ վարժանքներ.

- Շրջանաձև շարժումներով երեխան բռնում է աջ և ձախ դաստակները:
- Ուժեղ մերսումներով մասնագետն ուղիղ գծեր է տանում երեխայի մատների ծայրերից մինչև ասփը՝ նախ աջ, այնուհետև ձախ ձեռքի վրա:
- Մասնագետի հրահանգով և հաշվով երեխան ծալում և տարածում է մատները:
- Մասնագետի հրահանգով երեխան բռնոցք է կազմում և հերթով բացում է ցուցամատը, միջնամատը, մնացած բոլորը մատները մնում են ծալված:
- Երեխան հերթով, հաշվի տակ բոլոր մատներով դիպչում է բութ մատին:
- Երեխաները ցուցամատով շրջան են գծում թղթի վրա կամ օղի մեջ: Նախ դա անում են իրենց աջ ձեռքով, իսկ հետո՝ ձախով: Այնուհետև այս վարժությունը կարող է կատարվել միաժամանակ երկու ձեռքով:

☆☆☆ Հավասարակշռության պահպանման, վեստիբուլյար ապարատի և մկանային լարվածության կարգավորման խաղեր



Գնդակը զամբյուղի մեջ

Նպատակ. զարգացնել հավասարակշռության պահպանումը նստած դիրքում, աչք-ձեռք համակարգումը, պլանավորումը, ուժի, ուղղության և հեռավորության զգացումը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ, փուչիկ, զամբյուղ:

Ընթացք

Երեխան կարող է նստել անկյունում և գնդակը գլորել, այլ ոչ թե նետել: Մեկ ուրիշը կարող է նստել երեխայի ետևում, ոտքերը V ձևով: Երեխան կարող է նստել նրա ոտքերի արանքում և գլորել կամ նետել գնդակը: Խորհուրդ է տրվում գնդակի փոխարեն կիրառել փուչիկ, որն ավելի թեթև է և ավելի հեշտ վերահսկելի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ երեխան խաղում չորս անգամից գոնե երեքում հաջողության հասնի: Պետք է հաշվել գնդակի յուրաքանչյուր հայտնվելը զամբյուղում և խրախուսել երեխային:



Զսխալվե՛ս

Նպատակ. զարգացնել հավասարակշռության պահպանումը, շարժումների պլանավորումը, հրահանգ-ընկալում-կատարում կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. սենյակ կամ բացօթյա տարածք, կարելի է նաև միացնել ցածր երաժշտություն:

Ընթացք

Երեխաները կանգնում են խաղավարի առջև և փակում աչքերը: Հաջորդիվ՝ խաղավարը տալիս է հրահանգներ՝ «շրջվի՛ր», «քայլ արա՛ առաջ», «պտտվի՛ր տեղում»: Հաղթում են այն երեխաները, ովքեր ամեն ինչ անում են առանց սխալների:



Շլդիկը լվացվում է

Նպատակ. զարգացնել կանգնած դիրքում մարմնի խոշոր շարժումների, հավասարակշռության պահպանումը, աչք-ձեռք համակարգման, պլանավորման, ուժի, ուղղության զգացողության և հեռավորության պատկերացումը:

Անհրաժեշտ նյութեր. սենյակ կամ բացօթյա տարածք, կարելի է նաև միացնել ցածր երաժշտություն:

Ընթացք

Բոլոր մասնակիցները, բացի մեկից, նստում են շրջանագծի մեջ: Երեխաներից մեկը մտնում է և կանգնում շրջանի կենտրոնում ու դառնում է խաղի Շլդիկ նապաստակը: Մնացած բոլորը արտասանում են.

Լողանում է Շլդիկը, ձերմակ սիրուն մեր թմբկիկը:

Լվանում է թաթիկները, սիրուն սպիտակ ոտիկները,

Ապա մեծ-մեծ աչուկները, և՛ քիթիկը, և՛ փորիկը:

Շատ սիրուն է մեր Շլդիկը...

Լողանում է վերջացնում՝ ցատկում, վազում, ուրախանում:

Միաժամանակ շրջանի կենտրոնում կանգնած նապաստակը պետք է կատարի բոլոր շարժումները, որոնք նկարագրվում են արտասանության մեջ: Մնացած մասնակիցները պետք է կրկնեն նրա ետևից: Այնուհետև խաղի հիմնական խաղացողը՝ Շլդիկ նապաստակը, ընտրում է երեխաներից մեկին, ով էլ դառնում է նոր նապաստակ և կանգնում շրջանի կենտրոնում: Խաղը կարող է ավարտվել, երբ առնվազն 5-6 երեխա լինեն Շլդիկ նապաստակի դերում:



Գլորի՛ր գնդակը

Նպատակ. զարգացնել կանգնած դիրքում հավասարակշռության պահպանումը, աչք-ձեռք համակարգման, պլանավորման, ուժի, ուղղության և հեռավորության զգացողությունը: Ապահովել հոդերի շարժունակությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ, ցածր սղարան:

Ընթացք

Երկու երեխա խաղում են. մեկը կանգնում է սղարանի ներքևի մասում, մյուսը՝ վերևում: Վերևում կանգնած երեխան գնդակը գլորում է ներքև, իսկ ներքևում կանգնածը՝ բռնում է և նետում վերև: Մի քանի անգամ տվյալ գործողությունը կատարելուց հետո խաղացողները փոխվում են տեղերով:



Մի՛ դիպչիր դարպասներին

Նպատակ. զարգացնել կանգնած դիրքում հավասարակշռության պահպանումը, զգուշության և շարժումների պլանավորման, ուշադրության կենտրոնացման և պահմպանման կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. չորս աթոռ:

Ընթացք

Խաղն սկսվում է դարպասներ կառուցելով. չորս աթոռ՝ յուրաքանչյուր կողմում դրվում է երկու աթոռ՝ իրարից 50 սմ հեռավորությամբ: Երեխաները անցնում են այդ աթոռների արանքով՝ չկպնելով վերջիններին: Սկզբում երեխաները անցնում են բաց աչքերով, այնուհետև փորձում են նույն գործողությունը կատարել փակ աչքերով: Խաղում հաղթում է նա, ով անխոչընդոտ անցնում է դարպասների արանքով:



Արգելված շարժում

Նպատակ. զարգացնել մկանային համակարգի ամրապնդումը, նվազեցնել մկանային լարվածությունը, զարգացնել ուշադրության կենտրոնացումը և դրա պահպանման կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. անարգել միջավայր, որտեղ երեխան կարող է ազատ շարժվել:

Ընթացք

Խաղավարը ցույց է տալիս տարբեր շարժումներ, իսկ երեխան պետք է կրկնի դրանք: Շարժումները պետք է լինեն մատչելի, որ երեխան

հեշտությամբ կարողանա կրկնել: Շարժումները պետք է լինեն տարբեր՝ ներառելով մկանային տարբեր խմբեր, և արագ կատարվեն: Ցույց տալով տարբեր շարժումներ՝ խաղավարը նշում է, թե կոնկրետ որ շարժումը կրկնել չի կարելի: Արգելված շարժման փոխարեն երեխան պետք է ծափ տա կամ թափահարի ձեռքերը: Եթե երեխան մոռանում և կրկնում է շարժումը՝ պարտվում է: Խաղավարը խաղը կարող է կազմակերպել ինչպես անհատական, այնպես էլ 2-3 երեխայի հետ միաժամանակ: Ցանկալի է, որ խաղավարն էլ ներգրավվի խաղի մեջ և երեխաների հետ փոխվի դերերով:



Այրվող հրաբուխ

Նպատակ. զարգացնել համակարգված շարժումների և մարմնի դիրքը, հավասարակշռության պահպանումը, մկանային համակարգի ամրապնդումը, ուշադրության կենտրոնացման և պահպանման կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. թուղթ, կպչուն ժապավեն:

Ընթացք

Խաղավարը հատակին ամրացնում է տարբեր չափի թղթեր: Երեխան քայլելիս պետք է ոտքերը դնի միայն թղթերի վրա՝ մնացած ամբողջ տարածքը «այրվող հրաբուխ» է: Խաղն ավելի հեշտացնելու համար խաղավարը կարող է մի քանի թուղթ ամրացնել իրար և ավելի մեծ տարածք ստեղծել: Խաղն ավելի դժվարացնելու համար, անհրաժեշտ է թղթերը մեկը մյուսից բավարար հեռավորության վրա ամրացնել, որպեսզի տեղաշարժվելիս երեխան ջանք գործադրի: Պարտվում է այն երեխան, ով ամենից շատն է ընկնում «այրվող հրաբուխ» մեջ:



Արեգակ

Նպատակ. զարգացնել համակարգված շարժումների և արագ շարժվելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. Էստաֆետային ձողեր կամ թենիսի գնդակներ: Խաղը ցանկալի է անցկացնել մեծաթիվ խմբով (15 և ավելի մասնակից):

Ընթացք

Մենյակի կամ բակային տարածքի մեջտեղում շրջան գծել: Մասնակիցները բաժանվում են հինգ խմբի և շարվում շրջանի կողքով այնպես, որ ստացվի արևն իր շողերով՝ յուրաքանչյուր շողը մի թիմ: Շրջանին մոտ մասնակիցները ձեռքում պահում են էստաֆետային ձողերը: Խաղավարի հրահանգից հետո նրանք վազում են շրջանով և փողը փոխանցում իրենց թիմի հաջորդ մասնակցին: Վազքի ժամանակ արգելվում է դիպչել կանգնած երեխաներին կամ խանգարել մեկ այլ մասնակցի վազքը: Խաղի կանոնները չպահպանած թիմը ստանում է տուգանային միավորներ:

Խաղում հաղթում է այն թիմը, որն առաջինն է ավարտում բոլոր պտույտները և ընդունում էլման դիրք: Էստաֆետային ձողը կրողը բարձրացնում է այն՝ ազդարարելով շրջապտույտների ավարտը:

Խաղն ավելի հեշտացնելու համար խաղավարը կարող է մի քանի թուղթ ամրացնել իրար և ավելի մեծ տարածք ստեղծել:



Լսի՛ր քո անունը

Նպատակ. զարգացնել արագ արձագանքելու, համակարգված շարժումների և արագ շարժվելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. վոլեյբոլի գնդակ, 5-15 մասնակից:

Ընթացք

Խաղի մասնակիցները մեկը մյուսին մեջքով են կանգնում: Գնդակը գտնվում է մասնակիցներից մեկի մոտ: Նա նետում է գնդակը և կանչում մասնակիցներից մեկի անունը: Նա, ում անունը կանչել են, պետք է շրջվի դեմքով դեպի շրջանը և բռնի գնդակը:

Խաղում հաղթում է առավել շատ գնդակ բռնող մասնակիցը:



Ձկնորսները

Նպատակ. զարգացնել արագ արձագանքելու կարողությունը, հավասարակշիռ շարժումները:

Անհրաժեշտ նյութեր. բաց տարածություն, 10-15 մասնակից:

Ընթացք

Երկու երեխա բռնում են իրար երկու ձեռքերից և դառնում «ձկնորսական ցանց»: Մնացած երեխաները ձկներն են: «Ցանցով» ձկնորսները բռնում են մյուս երեխաներին: «Բռնված ձկները» բռնում են ձկնորսների ձեռքերից և ավելի մեծացնում «ձկնորսական ցանցը»:

Խաղը շարունակվում է այնքան, մինչև մնում է երկու «չբռնված ձուկ»: Իրենք էլ ճանաչվում են խաղի հաղթողներ:



Կատուն և ճնճղուկները

Նպատակ. զարգացնել արագ արձագանքելու կարողությունը, հավասարակշիռ շարժումների, ձայների կրկնօրինակման կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. շարժական հենք (կոճղ կամ քոթուկ), 10-15 մասնակից:

Ընթացք

Խաղահրապարակի մի հատվածում՝ կոճղի վրա, կանգնում են երեխաները՝ «ճնճղուկները»: Ավելի հեռու նստում է «կատուն»: Կատուն քնած է: Խաղավարը կանչում է՝ «Ճնճղուկներ՝, թռա՛նք»: «Ճնճղուկները» ցատկում են կոճղից, բացում են թևերը, ծղրտալով թռչում են տարբեր կողմեր: Այդ պահին, խաղավարի հրահանգով՝ «ո՛վ է գալիս» արթնանում է «կատուն» և սկսում բռնել ճնճղուկներին: Փրկվել կատվից կարելի է միայն թռչելով և նստելով կոճղի վրա: Հաղթում է այն «ճնճղուկը», որին «կատուն» ոչ մի անգամ չի բռնել (Грабенко & Зинкевич-Евстигнеева, 2002):

★☆☆ Վարժություններ՝ երկու ձեռքերի միաժամանակյա աշխատանքը խթանելու համար

Անկախ այն հանգամանքից, որ յուրաքանչյուր մարդու համար առաջատար է միայն մեկ ձեռքը, այդուհանդերձ, անհրաժեշտ է զարգացել շարժունակության խանգարումներ ունեցող երեխայի ձեռքերի մկանային ուժը և երկու ձեռքերի կառավարումը տարբեր գործողություններ իրականացնելու համար: Հատկապես կարևոր է խթանել երկու ձեռքերի միաժամանակյա կիրառումը՝ ներգրավելով երեխային խաղերի մեջ՝ առաջարկելով տարբեր առաջադրանքներ և վարժություններ: Օրինակ՝

- Սովորեցրեք երեխային տեղափոխել առարկաները մի ձեռքից մյուսը: Տվեք նրան մեկ խաղալիք, այնուհետև՝ մեկ այլ խաղալիք, և հետևեք, որ չնետի արդեն ձեռքում եղածը, այլ տեղափոխի այն մյուս ձեռք: Այս վարժության ժամանակ ցանկալի է կիրառել զույգով խաղալիք՝ երկու խորանարդիկ, բաժակ և գդալ և այլն:
- Խաղալիքը դրե՛ք անմիջապես երեխայի առջև այնպես, որ նա կարողանա երկու ձեռքով վերցնել: Սկզբում կարելի տեղադրել այն կողմում, որ կողմի ձեռքն ուզում եք ավելի ակտիվ կիրառի, այնուհետև՝ խրախուսեք երկու ձեռքի միաժամանակյա օգտագործումը:
- Կազմակերպեք խաղեր ջրով և ավազով: Խրախուսեք երեխային ավազը կամ ջուրը մի բաժակից մեկ այլ բաժակ լցնելը՝ միաժամանակ խաղալով երկու ձեռքերով:
- Շատ կարևոր է մասնագետների այսպիսի աշխատանքը շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների երկու ձեռքերի միաժամանակյա կիրառման ուղղությամբ:
- Երեխային սովորեցնել նետել, բռնել և գլորել մեծ գնդակը:
- Երեխային սովորեցնել գրտնակել խմորը կամ՝ երկու ձեռքով խմոր հունցել:

- Երեխային սովորեցնել ուտելու ժամանակ մեկ ձեռքով բռնել գդալը, իսկ մյուս ձեռքով՝ ափսեն:
- Երեխային սովորեցնել կերակրել, զգեստափոխել, լողացնել տիկնիկներին:
- Կիրառել կառուցողական խաղեր, խաղալիքներ, որոնք կարելի է միացնել և անջատել միմյանցից:
- Տեղադրել միրգը, բանջարեղենը զամբյուղի կամ թասի մեջ՝ մեկ ձեռքով բռնելով զամբյուղը, իսկ մյուս ձեռքով տեղադրելով միրգն ու բանջարեղենը:
- Երեխային սովորեցնել նվագել հարվածային գործիքներով:
- Երեխային սովորեցնել հանել և տեղադրել ֆլումաստերի, գրիչի, ատամի մածուկի կափարիչը և այլն:
- Խրոխուսել երեխային հաճախ ծափ տալ՝ ստեղծելով դրա համար տարբեր առիթներ:
- Երեխային սովորեցնել օդում բռնել օձառի պղպջակները:
- Երեխային սովորեցնել անցկացնել տարբեր տրամաչափի ուլունքներ բարակ և հաստ թելերի վրա:
- Երեխային սովորեցնել պատռել թուղթը:

☆☆☆ Մանր մոտորիկայի (և ուշադրության) զարգացման խաղեր



Տեսակավորի՛ր իրերը

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը, պլանավորումը, առարկաների գույնի, երկրաչափական ձևի, չափսի ընկալումն ու տարբերակումը, հրահանգ-ընկալում-կատարում կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. փոքր գունավոր առարկաներ, գունավոր զամբյուղներ կամ տուփեր:

Ընթացք Ընտրել այնպիսի առարկաներ, ինչպիսիք են փոքրիկ գնդակները, տիկնիկները, ձողիկները, գլանակները: Երեխային առաջարկել տեսակավորել դրանք ըստ խմբերի, գույնի, չափսի և այլն: Առաջարկել գամբյուղներ, տուփեր, որտեղ երեխան կարող է տեղադրել տեսակավորվածը:



Հարցեր տալ երեխային տեսակավորման ընթացքում և հետո:



Հիշի՛ր և նկարի՛ր

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը, տեսողական հիշողությունը:

Անհրաժեշտ նյութեր. սեղան, աթոռ, թուղթ, մատիտ:

Ընթացք

Խաղավարը թղթի վրա նկարում է տարբեր տրամաչափի և գույնի շրջան: Ապա թույլ է տալիս, որ երեխաներն այդ նկարը մեկ բույս տևողությամբ ուշադիր նայեն: Հետո խաղավարը հեռացնում է նկարը և երեխաներին մաքուր թուղթ ու գունավոր մատիտներ առաջարկում: Երեխաները պետք է հիշողությամբ պատկերեն շրջանները՝ համապատասխան գույներով և չափերով:

Հաղթում է նա, ով առանց որևէ սխալի կատարել է խաղավարի հրահանգները և ճիշտ պատկերել շրջանները:



Խաղ ավագով

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը, պլանավորումը, շոշափելիքը, առարկաների ձևի, չափսի ընկալումն ու տարբերակումը:

Անհրաժեշտ նյութեր. չոր ավագ, տարաներ, խաղալիքներ, քամիչ:

Ընթացք

Ավագը թափվում է երեխայի մատների միջով, տրորվում է ձեռքերում: Երեխան ավերով հարվածում է ավազին, ձեռքերը մխրճում դրա մեջ, այնուհետև մատիկները հերթով խցկում է ավազի մեջ: Այս խաղի համար կարելի է օգտագործել նաև քամիչ, որ երեխան անցկացնի ավագը քամիչի միջով:



Մատիկներով մնջախաղ

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգում, պլանավորումը, տրամաբանությունը, հիշողությունը, ընկալումն ու տարբերակումը:

Անհրաժեշտ նյութեր. սեղան, աթոռ:

Ընթացք

Խաղն սկսվում է երեխայի մատիկներին անուններ կամ դերեր տալով. այս մատը մայրիկն է, այս մատը՝ հայրիկն է և այլն: Այնուհետև յուրաքանչյուր մատ կատարում է մի գործողություն՝ համաձայն տրված հրահանգի: Ավելի ուշ անվանում են մատիկները, օրինակ՝ ցուցամատը Կարմիր գլխարկն է և այլն: Խաղը կրում է ազատ բնույթ, և խաղավարն այն կարող է իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային՝ ցանկացած տարր ավելացնելով խաղի բովանդակությանը:



Ոգնի

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգում, տեսողական և պատկերավոր հիշողությունը:

Անհրաժեշտ նյութեր. սեղան, աթոռ, ծեփամածիկ:

Ընթացք

Խաղավարն առաջարկում է ծեփամածիկից ոգնի պատրաստել՝ նախապես նկարագրելով և մի փոքրիկ պատմություն պատմելով նրա մասին: Խաղն սկսվում է մատիկների տարբեր շարժումներից, այնուհետև երեխաներն սկսում են աշխատել ծեփամածիկով: Ծեփամածիկը տրորում են ձեռքի մեջ և յուրաքանչյուր մատիկով փոսիկներ անում: Այնուհետև ձեռքի ափերով, հետո էլ սեղանի վրա տրորում են ծեփամածիկը, ձեռքի ափով գրտնակում/բացում այլն: Այդ բոլոր գործողությունները կատարելուց հետո՝ յուրաքանչյուր երեխա սկսում է պատրաստել պատմվածքի իր պատկերացրած ոգնուն: Պատրաստված ոգիները մեկնաբանում և գնահատում են խմբի բոլոր երեխաները (Бырובה, 2017):



Գնդիկ-բոքոնիկը

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը:

Անհրաժեշտ նյութեր. սեղան, աթոռ, ծեփամածիկ:

Ընթացք

Խաղավարը կարդում է Գնդիկ-բոքոնիկ հեքիաթը, որն ուղեկցում է մատիկներով շարժումներով: Երեխաներն ուշադիր հետևում են և կրկնում խաղավարի շարժումները: Բռունցքը գնդիկ-բոքոնիկն է, մատիկներով շարժումները՝ գնդիկ-բոքոնիկի փախուստը և այլն: Ընթացքում կարելի է ցուցաբերել որքան հնարավոր է ստեղծագործական մոտեցում: Երեխաներին ցանկալի է առաջարկել մատիկներով պատկերել արջին, գայլին, աղվեսին և այլն: Խաղի ընթացքում խրախուսվում է ինտերակտիվ կապը երեխաների հետ:



Սովորաթղթե կերպարներ

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը:


Անհրաժեշտ նյութեր. սեղան, աթոռ, ստվարաթուղթ, գունավոր թուղթ, ամրակներ, սոսինձ:

Ընթացք

Խաղավարը երեխաներին առաջարկում է պատրաստել տարբեր կերպարներ ստվարաթղթից: Կերպարները պետք է լինեն շարժական և ձեռքեր ու ոտքեր ունենան: Երեխաները պատրաստում են կերպարներ և անվանում վերջիններին:

Երեխաները դրանցով ստեղծում են ստվարաթղթե կերպարների թատրոն:

Խաղավարը ուշադրություն է դարձնում, որ երեխաները բեմականացման ընթացքում ակտիվ շարժեն իրենց կերպարի գլուխը, ոտքերը և ձեռքերը:



Ծափիկ-ծափիկ

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), հավասարակշռության պահպանման կարողությունը, աչք-ձեռք համակարգումը:

Անհրաժեշտ նյութեր. թերապևտիկ գնդակ (ֆիթբոլ):

Ընթացք

Երեխաները նստում են ֆիթբոլի վրա իրար դիմաց՝ խաղավարի հրահանգով: Միասին կամ առանձին-առանձին ծափիկ-ծափիկ են անում խաղընկերոջ հետ: Հրահանգները մեկ արագանում են, մեկ՝ դանդաղում: Հաղթում է հրահանգներին առավել հստակ հետևող երեխան:

Խաղավարը հետևում է երեխաների մարմնի դիրքի պահպանմանը և համապատասխան հրահանգներ տալիս:



Ես Մոխրոտիկն եմ

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր տեսակի ձավարեղեն, լոբազգիներ, տարաներ, ժամացույց (կարելի է՝ ավագով), 2-4 մասնակից:

Ընթացք

Խաղավարը երեխաներին նստեցնում է սեղանի շուրջ և տալիս մի թաս՝ 2-3 տեսակի իրար խառնած ձավարեղենով և/կամ լոբազգիներով:

Երեխաները հրահանգ են ստանում վերջիններս տեսակավորել՝ լցնելով



յուրաքանչյուր տեսակի համար հատկացված տարայի մեջ: Խաղավարը ֆիքսում է ժամը և երեխաներին տեղեկացնում իրենց հատկացված ժամանակի մասին. օրինակ՝ 2-4 րոպե: Ժամանակի ավարտին հնչում է ազդակը, և երեխաները դադարեցնում են խաղը: Խաղում հաղթում է առավել շատ ձավարեղեն տեսակավորած երեխան:



Վարժություններ՝ ձեռքերի աշխատանքը խթանելու համար

Եթե երեխան ունի ձեռքերի մկանների կառավարման խնդիրներ, չափազանց կարևոր է խրախուսել նրա ձեռքերի աշխատանքը՝ վերջիններիս ճկունությունը և մկանային կառավարումը խթանելու համար: Ստորև նշված վարժություններն օգնում են երեխային բացել բռունցքը և օգտագործել մատիկները.

Խաղացեք երեխայի հետ՝

- տարբեր նյութերով և ստիպեք, որ տարբեր ձևերով առնչվի այդ նյութի հետ՝ դիպչի, շոյի, քաշի, տրորի և այլն,
- ավագով և հողով, ինչպես չոր, այնպես էլ՝ թաց,
- ջրով, պղպջակներով, սափրվելու փրփուրով, ներկերով,

- խմորով և ծեփամածիկով՝ ծեփելով տարբեր կերպարներ (ցանկալի է օգտագործել եգիպտացորենի ալյուր, այն առաձգական է դարձնում խմորը և թույլ է տալիս հեշտությամբ տարբեր կերպարներ ստանալ),
- երաժշտական գործիքներով,
- սառը մակարոնեղենի հետ:
- Երեխայի հետ թերթեք տարբեր տիպի թղթերից պատրաստված գրքեր և թույլ տվեք, որ նա ձեռք տա թուղթը, դիպչի գրքի կազմին:
- Երեխայի հետ կարկանդակներ պատրաստեք, թույլ տվեք հունցի խմորը:
- գԵրեխայի հետ հաճախակի նկարեք մատիկներով՝ օղում, թղթի, հայելու, ավազի վրա:

★ ★ ★ Վարժություններ՝ առարկաները երկու կամ երեք մատով վերցնելու կարողությունները զարգացնելու համար

- Ընդհանուր կանոն՝ սկսեք պարապմունքները հնարավորինս թեթև իրերով, որոնք հեշտությամբ տեղավորվում են ավիի մեջ, այնուհետև օգտագործեք ավելի ծանր առարկաներ, ինչպես նաև՝ փոքր և մեծ չափերի:
- Երեխայի հետ խորանարդներից, մանրադրամից, բաժակներից, կոճակներից և այլ առարկաներից աշտարակ կառուցեք:
- Սովորեցրեք երեխային դասավորել խորանարդիկները, մանրադրամը, թելերը համապատասխան արկղերի և տուփերի մեջ:
- Նկարեք թղթի վրա փոքրիկ պատկերներ (ձկնիկ, գորտ, բադիկ) և կտրատեք այդ պատկերները: Մեկ այլ թղթի վրա նկարեք լճակ: Հրահանգեք, որ երեխան այդ պատկերները տեղադրի լճակում:

- Ուրվագծեք թղթի վրա մեքենայի, շան, տնակի պատկերներ և հրահանգեք, որ երեխան այդ ուրվագծի վրա տարբեր կպչուն պատկերներ կպցնի:
- Ստվարաթղթից տարբեր տրամաչափի թունելներ և ճանապարհներ պատրաստեք, թույլ տվեք, որ երեխան մեքենաները անցկացնի այդ թունելներով/ ճանապարհներով:
- Ամրակներով տարբեր վարժություններ իրականացրեք, թող երեխան ամրակները կպցնի ստվարաթղթի վրա, ապա՝ պարանի և այլ առարկաների:
- Երեխայի հետ միասին մրգեր և բանջարեղեն լվացեք, ապա կտրատեք և աղցան պատրաստեք:
- Սովորեցրեք երեխային բացել և փակել շշեր ու տարբեր տարաներ:
- Սովորեցրեք երեխային անցկացնել մեծ տրամաչափի ուլունքները հաստ պարանի վրա, այնուհետև՝ փոքր ուլունքները՝ բարակ թելի վրա:
- Սովորեցրեք երեխային դասավորել գրքերը պահարանի մեջ, նամակը գցել փոստարկղը, ափսեները տեղավորել չորանոցում, բաժակները դնել սկուտեղի վրա, մանրադրամը նետել «խոզուկի» մեջ և այլն:
- Երեխայի հետ միասին փազլ հավաքեք: Աշխատեք ընտրել հնարավորինս վառ գույներով և պատկերներով փազլներ, որոնք կգրավեն երեխայի ուշադրությունը:
- Երեխայի հետ հավաքեք խորանարդիկներով պատկերներ: Հնարավորինս շատ հրահանգեք և թույլ տվեք երեխան գործի հնարավորինս ինքնուրույն:

Եթե երեխան մեկ ձեռքի կիրառման և կառավարման խնդիրներ ունի, ապա՝

- խաղալիքները տեղադրեք «թույլ» ձեռքի կողմում,
- ժամանակ առ ժամանակ փոփոխեք երեխայի ձեռքերը՝ գդալը կամ պատառաքաղը բռնելիս,

- երեխային առաջակետք «թույլ» ձեռքով խաղալ փափուկ խաղալիքներով և գնդակներով, խմորով, ծեփամածիկով, բամբակով,
- «ուժեղ» ձեռքին ձեռնոց կամ գուլպա հագցրեք և հրահանգեք, որ հանի այն «թույլ» ձեռքով (Трунова, 2018):

☆☆☆ Ուշադրությունը և տրամաբանությունը զարգացնող խաղեր



Դերային խաղ՝ «Ձյան փաթիլներ»

Նպատակ. զարգացնել մարմնի խոշոր շարժումների պլանավորումը և կատարումը, ուշադրության հրահանգների ընկալումը և կատարման կարողությունը, վերացական մտքերի ընկալման կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. սենյակ կամ բացօթյա տարածք, երաժշտություն:

Ընթացք

Երեխաները բաժանվում են 2 խմբի՝ մի խումբը խաղում է ձյան փաթիլների դերը, մյուս խումբը՝ քամու: Խաղավարը սառնամանիքն է: «Ձյան փաթիլները» կանգնում են ոտքերի թաթերի վրա և դանդաղ ու սահուն շարժվում են խաղասենյակում: «Սառնամանիքը եկավ» բառերը լսելուց հետո նրանք կռանում են ծնկներին ու ձեռքերով ծածկում գլուխները: Երբ վարողը ասում է՝ «Ամառային քամին է փչում», երեխաները նորից ոտքի են կանգնում և պտտվում ձյան փաթիլների պարի մեջ: Խաղը ուղեկցվում է երաժշտությամբ:



Տեսակավորի՛ր կոճակները

Նպատակ. զարգացնել ձեռքի մանր շարժունակությունը (նուրբ շարժումներ), աչք-ձեռք համակարգումը, պլանավորումը, ուշադրության կենտրոնացումը և պահպանումը, հրահանգների ընկալման և կատարման կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. գունավոր, տարբեր չափսերի կոճակներ:

Ընթացք

Երեխային առաջարկվում են տարբեր գույների և չափսերի կոճակներ:

Կոճակները կարելի է կարել հյուսվածքի վրա կամ դնել տուփի մեջ: Խաղավարն առաջարկում է երեխային գտնել երեք նույնական կոճակ: Կոճակները գտնելուց հետո երեխային առաջարկվում է դասավորել դրանք մեծից փոքր՝ ըստ գույների կամ այլ սկզբունքներով: Խաղը կարելի է շարունակել տարբեր հրահանգներով:



Լսի՛ր քո անունը

Նպատակ. զարգացնել արագ արձագանքելու կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. գնդակ:

Ընթացք

Խաղին կարող են միաժամանակ մասնակցել 5-15 երեխա: Երեխաները կանգնում են իրար մեջքով, նրանցից մեկը նետում է գնդակը և կանչում որևէ մեկի անունը: Ում անունը կանչում են՝ պետք է բռնի գնդակը և կանչի հաջորդի անունը: Հաղթում է այն խաղացողը, ով ամենքից շատն է առանց ուշանալու բռնել գնդակը (Шапкова, 2002):

Ո՞ր բաժակի տակ է թաքնված

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացումը և պահպանումը, արագ կողմնորոշվելու և արձագանքելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. երկու պլաստմասե բաժակ, փոքր խաղալիք:

Ընթացք

Բաժակներն անհրաժեշտ է հակառակ կողմով տեղադրել սեղանին, և փոքրիկ խաղալիքը պահել նրանցից մեկի մեջ: Այդ բոլոր գործողություններին երեխան պետք է ակնառեստ լինի: Խաղավարը հարցնում է երեխային, թե ո՞ր բաժակի տակ է խաղալիքը:

Այնուհետև մի քանի անգամ փոփոխում է բաժակների տեղերը և կրկին հարցնում, թե որտե՞ղ է թաքնված խաղալիքը: Ցանկալի է, որ

խաղավարն էլ ներգրավվի խաղի մեջ և երեխայի հետ փոխվի դերերով՝ երեխան պահի խաղալիքը, իսկ խաղավարը փորձի գուշակել: Խաղն ավելի բարդացնելու համար կարելի է ավելացնել բաժակների թիվը՝ այն դարձնելով երեք-չորս (Трунова, 2018):



Գտի՛ր գույգը

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացումը և պահպանումը, արագ կողմնորոշվելու և արձագանքելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. միևնույն պատկերով գույգ նկարներ:

Ընթացք

Երեխայի առջև դրվում են գույգերով նկարները: Խաղավարը անվանում է պատկերները և խառնում նկարների բոլոր գույգերը: Երեխայի առջև դրվում է խնդիր՝ գտնել համապատասխան գույգը: Խաղավարը պետք է խրախուսի, երբեք չի սխալվում վերցնի նկարի համապատասխան գույգը և տեղափոխի այլ հարթակ կամ փոխանցի խաղավարին: Խաղը ցանկալի է սկսել երկու գույգ նկարներից, հետո՝ ավելացնել գույգ նկարների քանակը (Трунова, 2018):



Ի՞նչն այնպես չէ

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացումը և պահպանումը, արագ կողմնորոշվելու կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. թերթ, մանր առարկաներ, խաղալիքներ:

Ընթացք

Խաղավարը սեղանին տեղադրում է մի քանի մանր առարկաներ և խաղալիքներ: Երեխային տրվում է 30 վայրկյան՝ առարկաների և խաղալիքների դասավորվածությունը դիտելու և հիշելու համար: 30

վայրկյան անց խաղավարը թերթով ծածկում է խաղալիքները: Երեխան մի քանի վայրկյանով փակում է աչքերը, իսկ խաղավարն այդ ընթացքում հեռացնում է որևէ առարկա կամ խաղալիք, կամ՝ փոխում է դրանց դասավորվածությունը: Երեխան բացում է աչքերը խաղավարի հրահանգով և հեռացնում է առարկաներն ու խաղալիքները ծածկող թերթը:

Աչքերը բացելուն պես, երեխան փորձում է ասել, թե ինչն այնպես չէ, և որ առարկան է բացակայում կամ տեղափոխված:



Կենդանաբանական այգի

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացման, խոսքային գործունեության ակտիվացման, բառապաշարի ընդլայնման, շարժումների և ձայների կրկնօրինակման կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. օղակ և կավիճ:

Ընթացք

Երեխաներն ընտրում են որևէ կենդանու կերպար: Փոքրիկների համար այդ դերերը կարող է նշանակել խաղավարը: Ամեն կենդանի նստում է իր վանդակում՝ գետնի վրա նկարած շրջանի մեջ: Մնացած երեխաները կանգնում են խաղավարի ետևում, գնացք կազմում և «մեկնում» կենդանաբանական այգի՝ անցնելով յուրաքանչյուր կենդանու վանդակի կողքով:

Մոտենալով վանդակին՝ խաղավարը հարցնում է՝ «Ո՞ր կենդանին է ապրում այս վանդակում»: Վանդակում նստած կենդանիները ձայներ են արձակում և տարբեր շարժումներ անում:

Կենդանաբանական այգի էքսկուրսիա եկած երեխաները փորձում են գուշակել կենդանիներին՝ անցնելով մի վանդակից մյուսը: Խրախուսվում են կենդանիներին առավել դիպուկ նմանակող երեխաները:

Խաղի ավարտին բոլորը՝ և՛ երեխաները, և՛ «կենդանիները» խաղավարի ետևից գնացք են կազմում և վերադառնում տուն: Տուն

վերադառնալիս խաղավարը կարող է առաջարկել երգել բոլորին ծանոթ մի երգ (Грабенко, Зинкевич-Евстигнеева, 2002):



Երկար ոտքեր-կարճ ոտքեր

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացման և պահպանման կարողությունը, որովայնի և ոտքերի մկանների ամրապնդումը:

Անհրաժեշտ նյութեր. թերապևտիկ գնդակ (ֆիթբոլ) կամ գորգապատ հատակ:

Ընթացք

Երեխաները նստում են հատակին կամ ֆիթբոլի վրա՝ հենվելով ձեռքերին: Խաղավարը հրահանգում է՝ «երկար ոտքեր». Երեխաները բարձրացնում և ձգում են ոտքերը: Այնուհետև խաղավարը հրահանգում է՝ «կարճ ոտքեր», և երեխաները բարձրացնում են ծնկներից ծավաճ ոտքերը: Ընթացքում հրահանգներն ավելի արագ են տրվում, և ուշադրություն է դարձվում, որ երեխաները ճիշտ կատարեն բոլոր հրահանգները:

Եթե երեխան դժվարանում է կատարել տվյալ վարժությունը նստած դիրքում, կարելի է առաջարկել պառկած խաղալ:



Կախարդական պարկ

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացման կարողությունը, շոշափելիքի զարգացումը, որովայնի և ոտքերի մկանների ամրապնդումը:

Անհրաժեշտ նյութեր. սեղան, աթոռ, պարկ, փոքրիկ խորանարդիկներ, առարկաներ և խաղալիքներ, 2-4 մասնակից:

Ընթացք

Խաղավարը սեղանի վրա տեղադրում է 5-6 փոքրիկ խորանարդիկ, առարկա և խաղալիք: Ցանկալի է, որ բոլոր առաջարկվող առարկաները երեխաներին ծանոթ լինեն: Խաղավարը երեխաների աչքի առաջ այդ բոլոր առարկաները տեղադրում է պարկի մեջ և

խառնում: Երեխան ձեռքը մտցնում է պարկի մեջ և փորձում գտնել այն առարկան, որը նշում է խաղավարը:

Երեխան առարկան փնտրում է միայն շոշափելիքի օգնությամբ, նայել չի կարելի: Հաղթում է այն երեխան, ով ամենահաճախն է գուշակել և ճանաչել պարկի մեջ գտնվող առարկան:



Լսի՛ր և հիշի՛ր

Նպատակ. զարգացնել ուշադրության կենտրոնացման և պահպանման, լսողության կենտրոնացման կարողությունները:

Անհրաժեշտ նյութեր. ազատ միջավայր, սենյակ:

Ընթացք

Խաղավարն ընտրում է իրար հետ կապված հինգ գույգ բառեր: Օրինակ՝ ամպ-անձրև, արև-ցերեկ, քուն-անկողին, լամպ-լույս, մեքենա-ճանապարհ և այլն: Երեխային առաջարկվում է լսել այդ կապակցված բառախումբը երկու անգամ: Ապա խաղավարը յուրաքանչյուր բառախմբից անվանում է մեկ բառ, և երեխայի խնդիրն է՝ հիշել գույգ բառը և արտասանել: Առաջադրանքը կարելի է ավելի բարդացնել՝ առաջարկելով ավելի շատ բառագույգեր:

Ցանկալի է նաև, որ երեխան և խաղավարը խաղի ընթացքում փոխվեն դերերով:



Նշի՛ր մատիկով

Նպատակ. զարգացնել նպատակաուղղված ուշադրության կենտրոնացման և պահպանման կարողությունը:

Անհրաժեշտ նյութեր. ազատ միջավայր, սենյակ, 2-4 մասնակից:

Ընթացք

Խաղավարն առաջարկում է երեխաներին տարբեր գունավոր և գրավիչ նկարներ: Երեխան պետք է գտնի այն պատկերը, որն ասում է խաղավարը և հնարավորինս արագ նշի այն մատիկով: Գտած նկարը երեխան ստանում է որպես պարգևատրում: Կարևոր պահանջ է, որ երեխան նկարը փնտրի աչքերով և ոչ թե մատի օգնությամբ: Երեխան

մատիկը պահում է սեղանի անկյունի մոտ, թույլատրվում է մատը հանել սեղանի վրայից միայն խաղավարի հրահանգից հետո:
Խմբի երեխաներն իրենք են որոշում, թե ով է առաջինը գտել և ճիշտ մատնանշել խաղավարի կողմից նշված նկարը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Blanche E., I. (2008). Play in children with cerebral palsy: Doing with-not doing to. Play in occupational therapy for children. Jan 1:375-93.
2. Huang H., H, Ragonesi C., Stoner T., Peffley T., Galloway J.,C. (2014). Modified toy cars for mobility and socialization: case report of a child with cerebral palsy. Pediatric physical therapy. Apr 1;26(1):76-84.
3. Sulaiman N.,H, Ghazali M. (2016). Learning through Playing for Children with Cerebral Palsy. Jurnal Teknologi. Jan 1;78 (2-2).
4. Буравова Н. В. (2017). Содержание коррекционной работы по развитию мелкой моторики у детей старшего дошкольного возраста с детским церебральным параличом Выпускная квалификационная работа по направлению 44.03.03 Специальное (дефектологическое) образование Направленность программы бакалавриата «Дошкольная дефектология», Челябинск.
5. Грабенко Т. Н., Зинкевич-Евстигнеева Т.Д. (2002). Коррекционные, развивающие и адаптирующие игры. Спб.
6. Трунова М. С. (2018). Развитие внимания через игру, «Елизаветинский сад» для Ресурсного центра по оказанию информационно-методической помощи по вопросам воспитания, развития и абилитации детей с ДЦП.
7. Шапкова Л. В. (2002). Коррекционные подвижные игры и упражнения для детей с нарушениями в развитии / Под общей ред. проф. Шапковой Л.В. М.: Советский спорт, - 212 с.

ՀՈՒԶԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շատ հաճախ, տարված լինելով երեխայի ֆիզիկական և իմացական ոլորտների զարգացմամբ, մենք անտեսում կամ ըստ արժանվույն չենք գնահատում հույզերի և զգացմունքների ոլորտի կարևորությունը: Բնականաբար, երեխայի զարգացումը ենթադրում է նաև փոփոխություններ նրա հուզական ոլորտում: Փոխվում են երախայի հայացքները շրջապատող աշխարհի և աշխարհում իր ունեցած փոխհարաբերությունների, այդ հարաբերություններում առաջացող հույզերի նկատմամբ: Փոխվում է նաև դրանց գիտակցման և վերահսկման մակարդակը:

Հայտնի է, որ մանկական հույզերը բնորոշվում են իմպուլսիվությամբ և միայն ժամանակի հետ հասունանում, դառնում են ավելի կայուն և համապատասխան: Հույզերը օգնում են երեխային ընտելանալ այս կամ այն իրավիճակին, մասնակցում են սոցիալական փոխազդեցությունների և կապվածությունների ձևավորմանը: Դրանք ազդում են մարդու ապագա վարքի վրա, նպաստում են սոցիալական և բարոյական զարգացմանը:

Նախադպրոցական տարիքն առավել զգայուն է հույզերի զարգացման տեսանկյունից, ուստի, հատկապես այս տարիքում հուզական ոլորտի ուղղությամբ իրականացվող աշխատանքներն առավել այժմեական են դառնում:

Հուզական ոլորտում ծագող այնպիսի խնդիրներն, ինչպիսիք են հուզական անկայունությունը, ագրեսիվությունը, տագնապայնությունը, վախերը, անվստահությունը՝ հանգում են շրջապատի հետ փոխհարաբերություններում տարաբնույթ դժվարությունների առաջացմանը (Бреслав, 2007): Նախադպրոցական տարիքի ընթացքում տեղի է ունենում հույզերի բովանդակության փոփոխություն, հուզական ապրումների վերափոխում, հայտնվում են նոր հույզեր և զգացմունքներ, ինչը ոչ միայն անդրադառնում է երեխայի

գործունեության բովանդակության և կառուցվածքի փոփոխության վրա, այլև, ինչ-որ չափով, նաև պայմանավորում է այդ փոփոխությունները:

Սկսելով հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ երեխան հայտնվում է նոր, իր համար անսովոր պայմաններում՝ շրջապատված իրեն անծանոթ մեծահասակներով և երեխաներով, որոնց հետ պետք է որոշակի փոխհարաբերություններ հաստատի: Այդ իրավիճակում երեխան, առավել քան երբևէ, մեծահասակների աջակցության կարիքն ունի՝ իր հուզական հարմարավետության ապահովման, հասակակիցների հետ հաղորդակցման հմտությունների զարգացման հարցում: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ մեծահասակները (ծնողները և դաստիարակները) գործադրեն հնարավոր բոլոր ջանքերը՝ երեխայի հետ սերտ հուզական կապ հաստատելու համար, քանի որ այլ մարդկանց հետ փոխհարաբերությունները, նրանց արարքները նախադպրոցականի հույզերի՝ ուրախության, կարեկցանքի, զայրույթի, վախի և այլն, ձևավորման կարևորագույն աղբյուր են: Զարգացնել երեխայի հուզական ոլորտը, գիտակցել սեփական հույզերը, ճանաչել և արտահայտել դրանք՝ նրան պիտի սովորեցնեն ոչ միայն հոգեբանները, այլև մանկավարժները, դաստիարակները, ծնողները:

Նման աշխատանքները նպաստում են երեխաների գիտակցված հույզերի շրջանակի ընդարձակմանը, ինչպես սեփական, այնպես էլ՝ այլոց հույզերի և դրանց արտաքին դրսևորումների ճանաչմանը, ապրումակցման զարգացմանը, բացասական հույզերի հետևանքով առաջացող լարվածության լիցքաթափմանը (Данилина, Зедгенидзе, Стёпина, 2007): Այլ կերպ ասած՝ մանկապարտեզային առօրյայում հուզական ոլորտի զարգացմանը միտված խաղերի, խաղային վարժությունների ընդգրկումը մեզ հնարավորություն է ընձեռում նպաստել երեխայի հուզական ոլորտի զարգացմանը:

 Մեթոդական ցուցումներ մանկավարժներին՝ հուզական ոլորտի խանգարումով երեխաների խաղային գործունեության կազմակերպման վերաբերյալ

1. Հուզական խանգարումներ ունեցող երեխաները հաճախ գերզգայուն են իրենց խաղին և արարքներին տրվող գնահատականների նկատմամբ: Ուստի, ցանկացած խաղի ընթացքում (և խաղից դուրս) անհրաժեշտ է զերծ մնալ բացասական գնահատականներից, տարատեսակ համեմատություններից:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հուզական ոլորտի զարգացմանն ուղղված խաղերն անդրադառնում են երեխայի տարբեր հույզերին ու ապրումներին, որոնց հետ երեխան միշտ չէ, որ պատրաստ է «դեմ առ դեմ կանգնել», ցանկացած նոր խաղ առաջարկելիս, կարևոր է երեխային հնարավորություն տալ աստիճանաբար ընդգրկվելու խաղի մեջ:
3. Բոլոր այն դեպքերում, երբ երեխան դեռ պատրաստ չէ ընդգրկվելու խաղի մեջ, կարիք չկա նրանից պահանջել, որ խաղա ամբողջական ներգրավվածությամբ: Սկզբնական շրջանում նա կարող է պարզապես հետևել ուրիշների խաղին, ծանոթանալ խաղի պահանջներին, հրահանգին և աստիճանաբար խաղի մեջ ընդգրկվելու հնարավորություն ստանալ:
4. Երեխայի համար երբեմն բավական դժվար է արտահայտել այն հույզերը, որոնք նա ավելի հաճախ թաքցրել է, ճնշել (վախ, զայրույթ): Ուստի, այս հույզերի արտահայտմանն առնչվող խաղերը հնարավոր կլինի կազմակերպել միայն այն դեպքերում, երբ երեխան արդեն բավական վստահություն ունի մանկավարժի և իր ընկերների նկատմամբ:
5. Բարձր տագնապայնություն, վախեր ունեցող երեխաները հաճախ խուսափում են այնպիսի խաղերից, որոնց ժամանակ

աչքերը փակելու պահանջ է դրվում: Նման դեպքերում անհրաժեշտ է երեխային հնարավորություն տալ, որ ինքը որոշի այն պահը, երբ պատրաստ կլինի խաղի ընթացքում այս կամ այն չափով փակել աչքերը:

6. Հուզական ոլորտում իրականացվող աշխատանքը հաճախ վեր է հանում մի շարք թաքնված, ճնշված հույզեր, ինչը կարող է երեխայի համար լրացուցիչ լարվածության պատճառ դառնալ : Ուստի անհրաժեշտ է հատուկ ուշադրություն հատկացնել լիցքաթափող վարժություններին և խաղերին:
7. Հուզական ոլորտի խաղերի ընթացքում կարևոր է գերծ մնալ հույզերին տրվող գնահատականներից, այս կամ այն իրավիճակներում երեխայի կողմից ապրվող կամ արտահայտվող հույզերի կանխատեսումներից կամ ուղղորդումներից:



Ինչ-որ մեկը վախենում է

Նպատակ.

- Նպաստել վախերի արդիականացմանը:
- Նպաստել դրանց արտահայտմանը, խոսքայնացմանը:

Անհրաժեշտ նյութեր. նկարներ, որտեղ պատկերված են ինչ-որ բանից վախեցած երեխաներ:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխային դիտել մի քանի նկար, որտեղ պատկերված են փոքրիկներ, ովքեր ինչ-որ բանից վախեցել են: Երեխան սկզբում փորձում է դիմախաղով և մարմնի լեզվով ցուցադրել կոնկրետ նկարում պատկերվածի վարքը, ինչից հետո որոշում է, թե, իր կարծիքով, ինչից է վախենում երեխան և ինչպես կարելի է օգնել նրան:





Ի՞նչ է պատահել

Նպատակ. նպաստել վախի դիմախաղային դրսևորումների մասին պատկերացման ձևավորմանը և զարգացմանը, վախերի արդիականացմանը, ապրումակցման զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր: Խաղի համար նախատեսված խաղատախտակ, որն իրենից ներկայացնում է հինգ տարբեր իրավիճակներում հայտնված և հինգ տարբեր հույզեր արտահայտող տղաների նկարներով փայտե տախտակ, որի վրա շարժական շրջանակներով առանձնացվում են պատկերների գլխի և աջ ձեռքի հատվածները:

Ընթացք

Երեխային առաջարկվում է որոշել, թե ինչ իրավիճակներում է հայտնվել տղաներից յուրաքանչյուրը, այնուհետև՝ երեխան հոգեբանի օգնությամբ կրկնում է հերոսի դեմքի արտահայտությունը և փորձում կռահել/որոշել, թե ինչ հույզ է ապրում: Հատուկ ուշադրություն է հատկացվում այն իրավիճակներին, որոնք երեխան բնորոշում է որպես վախեցնող:

183



Ի՞նչ է թաքնված

Նպատակ. նպաստել վախի առարկայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխմանը, պատկերացում ձևավորել այն մասին, որ մթության մեջ մեզ ծանոթ առարկաները այլ կերպ են ներկայանում՝ իրականում մնալով նույնը, նպաստել մթության վախի հաղթահարմանը:

Անհրաժեշտ նյութեր. որոշակի ձայն հանող որևէ առարկա (դափ, զնգզնգան և այլն), պոլիէթիլենե թաղանթ և այլն:

Ընթացք

Սեղանի վրա դրվում է մի քանի շերտ պոլիէթիլենով փաթաթված ձայն հանող առարկա, ու երեխային առաջարկվում է կռահել, թե ինչ է դա: Քանի որ առարկան ամբողջությամբ ծածկված է պոլիէթիլենով, երեխան, բնականաբար, չի կարող անմիջապես կռահել: Մանկավարժն առաջարկում է առարկայի վրայից հեռացնել պոլիէթիլենի առաջին

շերտն ու կրկին հարցնում, թե ինչ առարկա է թաքնված փաթեթի մեջ, և այդպես՝ յուրաքանչյուր շերտը հեռացնելիս:

Ցուցումներ

Երեխան երբեմն կարող է խուսափել ձեռք տալ իրեն անձանոթ առարկային, խուսափել փաթեթն իր ձեռքում պահելուց և այլն: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կարևոր է երեխայի հետ խոսել այն մասին, որ երբ չգիտենք, թե ինչ առարկայի հետ գործ ունենք, հաճախ լարվում ու վախենում ենք, սակայն, փաթեթի շերտերը հանելուց հետո կհասկանանք, որ այնտեղ թաքնված առարկան շատ լավ ծանոթ է մեզ:



Ես և կենդանին

Նպատակ. զարգացնել հուզական արտահայտչականությունը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր կենդանիների և տարբեր հույզեր արտահայտող դիմախաղով դեմքերի նկարներ:

Ընթացք

Երեխաներին առաջարկվում է պատկերացնել, որ նրանց կողքին դաստիարակի ասած կենդանին է, և հուզական արձագանք տալ նրան: Դա կարող են լինել կատու, շուն, օձ, արջ, ոզնի, առնետ, գերմանամուկ և այլն: Մանկավարժը երեխային ասում է, օրինակ՝ «Դու ի՞նչ կզգաս, եթե հանկարծ քո կողքին ոզնի հայտնվի. կզարմանա՞ս, կուրախանա՞ս, թե՛ կվախենա: Ցույց տուր, թե ինչպես կզարմանաս» և այլն:

Ցուցումներ

Բոլոր այն դեպքերում, երբ երեխան խոսքային զարգացման խնդիրներ ունի, խոսքի ընկալման հետ կապված դժվարություններ՝ խոսքային հրահանգը կարող է ուղեկցվել համապատասխան կենդանու նկարի ցուցադրմամբ: Երեխան էլ՝ հույզի վերաբերյալ իր պատասխանը կարող է արտահայտել համապատասխան դիմախաղով նկարի ցուցադրմամբ:



Փոքրիկ փիսիկ

Նպատակ. նպաստել հույզերի արտահայտմանը, հուզական լարվածության լիցքաթափմանը, ապրումակցման զարգացմանը:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին հարցնում է՝ «Ո՞վ է ուզում, որ իրեն փիսիկ նվիրեն: Ո՞վ տանը փիսիկ ունի»: Այնուհետև առաջարկում է պատկերացնել, որ մայրիկը տուն է բերել փոքրիկ փիսիկ: Նա վախեցած է, քանի որ առաջին անգամ է անձանոթ տանը: «Ո՞վ կարող է ցույց տալ, թե ինչպես է շարժվում այդ փիսիկը: Մենք հիմա կբաժանվենք զույգերի, այդ զույգերից մեկը կխաղա փիսիկի դերը: Փխոներ, դուրս եկեք կենտրոն, ցույց տվեք, թե ինչքան եք վախեցած նոր տանը»: Երբ խաղն սկսվում է, երեխաներից յուրաքանչյուրը ծանոթանում է իր փիսիկի հետ, փորձում է հանգստացնել, շոյել, որ նա դադարի վախենալ, և համոզում է քնել գորգին: Այնուհետև երեխաները փոխվում են դերերով:



Ես սարսափելի բաներից չեմ վախենում

Նպատակ. նպաստել հոգեհուզական լարվածության լիցքաթափմանը: Ընձեռել խաղային կերպարի վրա վախի տեղափոխման հնարավորություն: Բարձրացնել սեփական ուժերի հանդեպ վստահությունը:

Ընթացք

Երեխաները քայլում են շրջանաձև՝ ձեռք-ձեռքի տված խմբով արտասանում հետևյալ բառերը.

«Ես սարսափելի բաներից չեմ վախենում, ով ասես կդառնամ»: Վարողը կենտրոնում է: Այդ խոսքերից հետո նա տալիս է որևէ սարսափելի կերպարի անուն: Երեխաները պիտի դառնան այդ կերպարը և տեղում քարանան: Վարողը ընտրում է «ամենավախենալու» կերպարը, և նա դառնում է վարող:



Ձնագնդի

Նպատակ. նպաստել հուզական լարվածության լիցքաթափմանը, կուտակված զայրույթն ընդունելի եղանակներով արտահայտելու պատերազմումների ձևավորմանը:

Անհրաժեշտ նյութեր. A4 ֆորմատի թղթեր, գունավոր մատիտներ:

Ընթացք

Երեխային առաջարկվում է մտածել այն մասին, թե ինչը կարող է զայրացնել իրեն, ինչպիսին է զայրույթը, ինչ գույն, ձև ունի, իսկ հետո՝ նկարել այն: Նկարելուց հետո երեխային առաջարկվում է խոսել իր զայրույթի հետ. «Արդյո՞ք դու ինձ պետք ես, զայրույթ», «Ուզո՞ւմ եմ, արդյոք, ես լինել այսքան զայրացած և չարացած», «Դու ինձ օգնո՞ւմ ես, թե՛ խանգարում»: Երբ երեխան որոշում է, որ զայրույթն իրեն պետք չէ, կարելի է նրան առաջարկել այն ճմրթել, դարձնել փոքր գնդիկ, օրինակ՝ «ուրախ ձնագնդի», իսկ հետո «ձնագնդի» խաղալ այլ երեխաների հետ:



Վագրիկները որսի ժամանակ

Նպատակ. նպաստել տագնապայնության նվազեցմանը, ինքնակառավարման կարողությունների զարգացմանը:

Ընթացք

Վարողը (մանկավարժը) պատմում է երեխաներին, թե ինչ է սովորեցնում իր ձագերին մայր վագրը. «Համարձակ դառնալու համար պետք է լինել զգույշ և ուշադիր, կարողանալ կատարել մայր վագրի հրահանգները և կրկնել նրա շարժումները. առաջ չցատկել, հետ չմնալ, չշեղվել ճանապարհից, լինել ճարպիկ և աշխույժ»: Այնուհետև մայր վագրը (վարողը) իր վրա է հրավիրում երեխաների ուշադրությունը, մի ոտքը կամաց առաջ է տանում, հետո թաթը, հետո առաջ է բերում երկրորդ ոտքը, ընդունում է համապատասխան կեցվածք և մոտենում որսին (մայր վագրը կարող է զայրացած լինել և մոնչալ ձագերի վրա, եթե նրանք իրեն չեն ենթարկվում): Հետո կատարելով նման մի քանի

քայլեր՝ վագրը կենտրոնանում է, ծալում ծնկները և կտրուկ ցատկում առաջ՝ բարձր մոնչալով: Ձագերը կրկնում են մոր բոլոր շարժումները:

Ցուցումներ

Սկզբում մայր վագրի դերը կատարում է մանկավարժը, հետո ընտրվում է երեխաներից մեկը: Եթե այս կամ այն պատճառով հնարավոր չէ, որ բոլոր երեխաները հերթով հանդես գան մայր վագրի դերում, ապա այդ դերում լինելու հնարավորությունն առաջին հերթին ստանում են այն երեխաները, ովքեր անվստահություն են զգում, անհամարձակ են կամ տագնապային:



Հեռացի՛ր, գայրույթ

Նպատակ. նպաստել մկանային, հուզական լարվածության լիցքաթափմանը, կուտակված ագրեսիայի արտահայտմանը:

Ընթացք

Երեխաները պառկում են գորգին՝ կազմելով շրջան, նրանց միջև բարձեր են դրվում: Փակելով աչքերը՝ երեխաները մանկավարժի հրահանգով սկսում են ոտքերով ուժգնորեն խփել հատակին, իսկ ձեռքերով՝ բարձերին՝ բարձր բղավելով՝ «Հեռացիր, գայրույթ, հեռացիր»:

Վարժությունը տևում է 2-3 րոպե, այնուհետև, մանկավարժի հրահանգով, հանգիստ պառկում են՝ տարածելով ձեռքերը և ոտքերը, և 2-3 րոպե մեղմ, լիցքաթափող երաժշտություն են լսում::



Մարզում ենք հույզերը

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ընդարձակմանը, դիմախաղի հարստացմանը:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխաներին/երեխային ուշադիր հետևել իր հրահանգներին, այնուհետև խնդրում է.

- Մոայլվել, ինչպես աշնանային ամպը,
ինչպես գայրացած մարդը,

ինչպես չար կախարդուհին:

- Ժպտալ, ինչպես արևը,
ինչպես խորամանկ աղվեսը,
ինչպես ուրախ մարդը,
ինչպես մարդ, ով հրաշք է տեսել:
- Զայրանալ, ինչպես երեխա, ումից խլել են պաղպաղակը,
ինչպես երկու ոչխար կամրջի վրա,
ինչպես մարդ, որին հարվածել են:
- Վախենալ, ինչպես անտառում կորած երեխան,
ինչպես գայլ տեսած նապաստակը,
ինչպես փիսիկը, որի վրա շուն է հաչում:
- Հոգնել, ինչպես սար բարձրացող մարդը,
ինչպես մարդ, որը մեծ բեռ է բարձրացրել,
ինչպես մրջյունը, որը մեծ ճանճ է քարշ տվել-բերել:
- Հանգստանալ, ինչպես ճամփորդը, որը հանել է ծանր
ուսապարկը,
ինչպես երեխան, որը շատ է չարչարվել, բայց օգնել է մայրիկին,
ինչպես հոգնած զինվորը հաղթանակից հետո:



Նկարում ենք տրամադրությունը

Նպատակ. նպաստել սեփական հույզերի արտահայտմանը, հուզական ռեֆլեքսիայի զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. ներկեր, մատիտներ, ֆլումաստերներ, գրիչներ, թուղթ:

Ընթացք

Երեխային առաջարկում ենք նկարել իր կամ որևէ այլ կերպարի, հեքիաթի հերոսի տրամադրությունը: Կարելի է նրան առաջարկել նաև տարբեր իրավիճակներ ու խնդրել, որ նկարի այն, ինչ ինքն է զգում այդ իրավիճակում: Նկարը կարող է լինել ինչպես սյուժետային, այնպես էլ՝ վերացական:

Ցուցումներ

Բոլոր այն դեպքերում, երբ երեխան չունի բավարար գրաֆիկական հմտություններ՝ այուժետային կամ նկարներ նկարելու համար, նրան կարող ենք առաջարկել իր տրամադրությունն ու հույզերն արտահայտել տարբեր գույների ու գծերի միջոցով:



Ցույց տուր հույզը լեզվով

Նպատակ. նպաստել հուզական ռեֆլեքսիայի զարգացմանը, հուզական լարվածության լիցքաթափմանը:

Ընթացք

Երեխաները նստում են շրջանով, մանկավարժն առաջարկում է նրանց դուրս հանել լեզուներն ու ցույց տալ, թե ինչպես է լեզուն բարկանում, ուրախանում, վախենում, զարմանում, տխրում (Хыхлаева, տարեթիվ):



Ցույց տուր հույզը ձեռքերով

Նպատակ. նպաստել հուզական ռեֆլեքսիայի զարգացմանը, հուզական լարվածության լիցքաթափմանը:

Ընթացք

Երեխաները նստում են շրջանով, մանկավարժն առաջարկում է նրանց պատկերացնել, որ իրենց ձեռքերը «կենդանացել են» և նույնպես կարող են տարբեր հույզեր, տրամադրություն ունենալ: Այնուհետև իր ձեռքերի շարժումներով ցուցադրում է տարբեր հույզեր.

- ✓ ձեռքերն ուրախանում են (թափահարում է ձեռքերը, մատներով թռչկոտում սեղանի վրա),
- ✓ ձեռքերը բարկանում են (ձեռքերը հրում են միմյանց, փորձում բռնել),
- ✓ ձեռքերը վախենում են (ձեռքերը բռունցք են դարձել ու դողում են), իսկ երեխաները հետևում են շարժումներին և փորձում կրկնել (Хыхлаева):



Հայելի

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ընդարձակմանը, դիմախաղի հարստացմանը, հույզերի ճանաչմանը:

Ընթացք

Մանկավարժը դիմախաղով ցույց է տալիս որևէ հույզ, իսկ երեխան պիտի այն կրկնի և գուշակի: Օրինակ՝ զարմանք. բերանը մի փոքր բաց է, հոնքերի ծայրերը քիչ բարձրացված, աչքերը լայն բաց են: Հնարավոր է խաղի այլ տարբերակ. վարողը ցույց է տալիս հույզ, իսկ երեխան պիտի ցույց տա հակառակ հույզը, օրինակ՝ ուրախություն-տխրություն:

Ցուցումներ

Եթե երեխան ունի մտավոր զարգացման կամ տեսողական կոնտակտի հաստատման հետ կապված խնդիրներ, ապա, սեփական դիմախաղով տվյալ հույզը ցուցադրելիս, ցանկալի է օգտագործել նաև համապատասխան դիմախաղով նկարներ:



Գուշակիր հույզը

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ընդարձակմանը, դիմախաղի հարստացմանը, հույզերի ճանաչմանը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր հույզերի դիմախաղային դրսևորումներով դեմքերի նկարներ:

Ընթացք

Երեխային առաջարկվում է երեսնիվայր դրված նկարներից ընտրել որևէ մեկը, փորձել ճանաչել հույզը, տրամադրությունը ցույց տալ իր դիմախաղի օգնությամբ:

Ցուցումներ

Խաղը մի քանի երեխայի հետ անցկացնելու դեպքում, մյուս երեխաները սկզբում կրկնում են դիմախաղը, այնուհետև՝ փորձում են գուշակել հույզը: Խոսքային զարգացման կամ հաղորդակցման

դժվարություններով երեխաները հույզն անվանելու փոխարեն կարող են նկարների շարքից գտնել և ցուցադրել իրենց գուշակած հույզը:



Տարբեր հույզեր, տարբեր քայլվածք

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ընդարձակմանը, ապրումակցման զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. համապատասխան դիմախաղով դեմքերի և կենդանիների նկարներ:

Ընթացք

Մանկավարժը երեխային առաջարկում է ցույց տալ մարդկանց և կենդանիների քայլվածքն այն պահին, երբ նրանք այս կամ այն հույզը կամ տրամադրությունն ունեն: Օրինակ՝ քայլել, ինչպես ուրախ փխիկը, բարկացած նապաստակը, վախեցած առյուծը և այլն: Քայլվածքի տարբերակները երեխաները կարող են նաև իրենք առաջարկել: Քայլվածքը կարող է ցուցադրել երեխաներից մեկը, իսկ մյուսները՝ կրկնեն: Խումբը կարող է նաև միասին ցույց տալ քայլվածքը: Խաղը կարելի է կիրառել նաև այլ տարբերակով. երեխաներից մեկն ստանում է առաջադրանքը և կատարում այն, իսկ մյուսները փորձում են գուշակել, թե ինչ հույզ էր ապրում տվյալ քայլվածքով քայլող կենդանին կամ մարդը:



Գտի՛ր գույգ

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ընդարձակմանը, դիմախաղի հարստացմանը, հույզերի ճանաչմանը:

Անհրաժեշտ նյութեր. դեմքի տարբեր արտահայտություններով կենդանիների նկարներ կամ հույզերի սխեմատիկ պատկերով նկարներ:

Ընթացք

Մանկավարժը ցույց է տալիս երեխաներին սխեմատիկ նկարներ (կամ

ինքն է հույզեր ցույց տալիս): Երեխաներն իրենց քարտերի մեջ աշխատում են գտնել նույն հույզով կենդանու նկար:



Ինչ ես դու զգում

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ընդարձակմանը, դիմախաղի հարստացմանը, հույզերի ճանաչմանը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր իրավիճակների նկարներ և տարբեր հույզեր արտահայտող դիմախաղերով նկարներ:

Ընթացք

Մանկավարժը երեխային ցույց է տալիս որևէ իրավիճակի նկար, իսկ երեխան դիմախաղերի նկարների իր հավաքածուից ընտրում է այն հույզն արտահայտող դիմախաղը, որն ինքը կարող է զգալ նման իրավիճակում:



Նկարի դիտում

Նպատակ. նպաստել հույզերի արտաքին դրսևորումների մասին պատկերացումների ձևավորմանը, հուզական ռեֆլեքսիայի, ապրումնակցման զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր տրամադրությունների պատկերներով սյուժետային նկարներ կամ համապատասխան կարճ պատմվածքներ:

Ընթացք

Մանկավարժը երեխային պատմում է կարճ պատմվածքը և առաջարկում դերասանի նման ցույց տալ այն հույզերը, որոնք զգում էր պատմվածքի այս կամ այն հերոսը: Սյուժեները կարող են լինել ինչպես երեխային ծանոթ հեքիաթներից և պատմություններից, այնպես էլ՝ «ինքնաբուխ» հորինված: Մանկավարժը տարբեր հարցադրումների միջոցով օգնում է երեխաներին կրկնել այն հույզերի արտաքին դրսևորումները, որոնց մասին խոսվում է պատմվածքում (ինչպե՞ս բարկացած վազեց, ինչպե՞ս զայրացավ և այլն): Կից ներկայացված պատմություններն ընդամենը օրինակներ են:

Ցուցումներ

Մտավոր, խոսքային զարգացման, հաղորդակցման խնդիրներով երեխաների հետ աշխատելիս, պատմվածքը պատմելուն զուգահեռ՝ անհրաժեշտ է նրանց ցուցադրել նաև համապատասխան նկարներ:



Կախարդը

Նպատակ. «զայրույթ» հույզի ճանաչումն ու արտահայտումը:

Կախարդը բռնում է տղային (աղջկան), հրամայում է նրան վառել վառարանում, որ հետո ուտի, իսկ ինքը քնում է: Արթնանում է, իսկ տղան (աղջիկը) չկա՝ փախել է: Զայրանում է, որ մնաց առանց ընթրիքի: Վազում է խրճիթում, ոտքերը խփում հատակին, բռունցքները թափահարում:



Աճպարարը

Նպատակ. նպաստել «զարմանք» հույզի ճանաչմանը և արտահայտմանը:

«Տղան շատ զարմացավ. նա տեսավ, թե ինչպես աճպարարը դատարկ ճամպրուկի մեջ դրեց փխսիկին և փակեց այն, իսկ երբ նորից բացեց՝ փխսիկը չկար: Ճամպրուկից աղավնի թռավ»:



Աղվեսն ականջ է դնում

Նպատակ. նպաստել «հետաքրքրություն» հույզի ճանաչմանը և արտահայտմանը:

«Աղվեսը կանգնած է այն խրճիթի պատուհանի մոտ, որում ապրում են կատուն և աքաղաղը, և ականջ է դնում»:



Քշիր զայրույթին

Նպատակ. նպաստել զայրույթի արտահայտմանը՝ ընդունելի տարբերակով: Նպաստել զայրույթի հետևանքով առաջացած լարվածության լիցքաթափմանը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր թղթեր կամ թերթեր՝ ճմրթելու համար:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին առաջարկում է վերցնել մեկական թուղթ և պատկերացնել կամ հիշել, թե ինչպես են իրենք ինչ-որ մեկի վրա բարկանում: Կարճ դադար տալուց հետո առաջարկում է երեխաներին ճմրթել թուղթը և նետել աղբարկղի մեջ: Անհրաժեշտ է օգնել երեխաներին, որ գայրույթի արտահայտումը հնարավորինս բնական լինի՝ համապատասխան դիմախաղի մասնակցությամբ:

Վարողը.

-Իսկ հիմա կսովորեցնեմ մի քանի ձևեր, որոնք կօգնեն վանել ձեր գայրույթը: Վերցրեք մեկական թերթ և պատկերացրեք, որ ինչ-որ մեկի վրա շատ եք գայրանում (դադար է տալիս): Իսկ հիմա ճմրթեք թերթը և նետեք մի կողմ: Երեխաները կատարում են հանձնարարությունը, իսկ մանկավարժը հետևում է, որ նրանք թերթը ճմրթելիս հնարավորինս բնական ներկայացնեն իրենց գայրույթը: Այդ խաղն ագրեսիվ երեխաներին հետագայում կօգնի հանել լարվածությունը:




Վարքի կարգավորմանը միտված խաղեր և վարժություններ

Որոշել, թե որ վարքն է երեխայի համար թույլատրելի, իսկ որը՝ ոչ. բավականին բարդ խնդիր է, նույնիսկ, ամենաբարենպաստ հանգամանքներում: Իրավիճակն առավել բարդանում է, երբ երեխայի զարգացման տարբեր ժամանակահատվածներում առկա խնդիրները առավել բարդ ու անհասկանալի են դարձնում երեխայի վարքը և թույլ չեն տալիս հասկանալ այդպիսի վարքի առաջացման իրական պատճառները: Նման դեպքերում առավել բարդ է գտնել ծայրահեղ խստության և բարձիթողության միջև գտնվող ոսկե միջինը:

Երեխայի անցանկալի վարքը միշտ ունի իր հիմնավոր պատճառները: Այդ իսկ պատճառով, երեխայի վարքը կարգավորելուն միտված աշխատանքներն սկսելուց առաջ, ճիշտ կլինեն պարզել, թե ինչ է նշանակում երեխայի համար նման վարքը: Ցանկացած երեխայի համար վատ պահելաձևը առաջին հերթին հաղորդակցման ձև է: Որոշ

դեպքերում այն կարող է երեխայի համար դառնալ իր վրա ուշադրություն գրավելու և իր կարիքների մասին հայտնելու գրեթե միակ և, հնարավոր է, առավել արդյունավետ միջոցը (օրինակ՝ ԿԱՊԿ ունեցող երեխայի համար): Այդ իսկ պատճառով, եթե երեխան իրեն «վատ» է պահում, անհրաժեշտ է փորձել հասկանալ, թե նա ինչ է ուզում «ասել» դրանով: Երեխայի պահելաձևը վերլուծելիս կարող ենք առաջնորդվել հետևյալ սխեմայով.



1. Ի՞նչն է հանգեցրել նման վարքի:
2. Ի՞նչ է անում երեխան, ինչպիսի՞ վարք է դրսևորում:
3. Ի՞նչ է ստանում երեխան իր վարքի արդյունքում:

«Վատ» պահելաձևը հաճախ կարող է նշանակել՝ «Զգիտեմ ինչպես վարվել այս իրավիճակում», «Ինձ պետք է քո ուշադրությունը», «Դա ինձ համար չափազանց դժվար է», «Այլևս ի վիճակի չեմ դիմանալ այս աղմուկին», «Ուրիշ բանով եմ ուզում զբաղվել», «Ես հոգնել եմ» և այլն:

Երեխաները հաճախ լիարժեքորեն չեն գիտակցում իրենց խնդրահարույց վարքի առաջացման պատճառները: Այն հարցին, թե ինչու է այդպես վարվել, նա կարող է պատասխանել, որ չգիտի կամ անհիմն պատճառաբանություն ու բացատրություն տալ: ԿԱՊԿ ունեցող երեխաների դեպքում սեփական վարքի տարբեր դրսևորումները մեկնաբանելու կամ բացատրելու դժվարությունները պայմանավորված են նրանց մտավոր և խոսքային զարգացման մի շարք առանձնահատկություններով:

Վարքի կարգավորման դժվարություններ ունեցող երեխան, անկախ ամեն ինչից, աջակցության կարիք ունի: Ու այդ աջակցությունը նա, նախ և առաջ, ակնկալում է այն մեծահասակներից, ում վստահում է, ում հետ համագործակցում է, այդ թվում՝ նաև մանկավարժներից: Իսկ ի՞նչ իրավիճակներում և գործունեության որ տեսակներում

մանկավարժները կարող են հաղթահարել երեխայի վարքում ծագող խնդիրները, օգնել նրան կարգավորել վարքը: Իհարկե՝ խաղային իրավիճակներում և խաղերի միջոցով:

Ստորև ներկայացվող խաղերն ու վարժություններն ընդամենը օրինակներ են, ինքնատիպ հուշումներ այն մասին, թե ինչպես կարելի է կիրառել խաղն ու խաղային իրավիճակները՝ երեխայի վարքը կարգավորելու նպատակով: Դրանք կարող են օգնել երեխային ընդունելի կերպով ազատվել կուտակված հուզական և մկանային լավաճությունից, բացասական տրամադրությունից, տագնապներից, զայրույթից, որոնք կարող էին վարքում բազմաբնույթ խնդիրների առաջացման պատճառ դառնալ, հաղթահարել խոսքային և/կամ ոչ խոսքային ագրեսիան, աջակցել մյուս երեխաներին, ապրումակցել նրանց, համագործակցել և գտնել արդյունավետ հաղորդակցման ուղիներ:

Մեթոդական ցուցումներ մանկավարժներին՝ վարքի խանգարումով երեխաների խաղային գործունեության կազմակերպման վերաբերյալ

- Վարքային խանգարումով երեխաները հաճախ ունենում են նաև ուշադրության կենտրոնացման, իմպուլսիվության, սեփական վարքի կարգավորման, ինչպես նաև՝ խմբային կանոնների ընդունման և երկար ժամանակահատվածում դրանց ենթարկվելու հետ կապված մի շարք դժվարություններ: Վերոնշյալ դժվարությունները արտացոլվում են նաև երեխայի խաղային գործունեության մեջ: Խաղի ընթացքում նրանք հաճախ դժվարանում են սպասել իրենց հերթին, հաշվի նստել ուրիշների կարիքների և ցանկությունների հետ, այդ իսկ պատճառով՝ խմբային խաղերում նրանց ներգրավումը անհրաժեշտ է կազմակերպել աստիճանաբար:

- Վարքային խանգարումով երեխաները հրահանգները լսելու և դրանք կատարելու, ուշադրությունը մանրուքների վրա կենտրոնացնելու հետ կապված՝ լրացուցիչ աջակցության կարիք կարող են զգալ այս կամ այն խաղը խաղալիս: Ուստի, անհրաժեշտ է, ժամանակ առ ժամանակ կրկնել խաղի սկզբում տրված հիմնական հրահանգները կամ նպատակները և հիշեցնել նախապես սահմանված կանոնները:
- Վարքային խանգարումով երեխաների հետ խաղալիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն հատկացնել այն հանգամանքին, որ այդ խաղերը ունենան հստակ կանոններ:
- Ագրեսիայի լիցքաթափմանը, հույզերի դրսևորմանը միտված խաղեր խաղալիս երեխաները հաճախ լրացուցիչ աջակցության կարիք կարող են զգալ սեփական գործողությունները սոցիալապես ընդունելի սահմաններում կազմակերպելու հարցում:
- Վարքային խանգարումով երեխաների խաղային գործունեությունը կազմակերպելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ինքնաբերական շարժողական ակտիվության վերահսկմանը:



Հրմշտոցներ

Նպատակ. նպաստել շարժողական ակտիվությունը վերահսկելու հմտությունների զարգացմանը, ագրեսիայի լիցքաթափմանը, մկանային լարվածության լիցքաթափմանը:

Ընթացք

Երեխաները բաժանվում են զույգերի, կանգնում են միմյանցից որոշակի հեռավորության վրա, բարձրացնում են ձեռքերը մինչև ուսերը և ավերով հենվում իրենց ընկերոջ ավերին:

Վարողի (մանկավարժի) ազդանշանով երեխաներն սկսում են հրել միմյանց՝ աշխատելով ընկերոջը շարժել տեղից: Երեխաներին նախապես տրվում են համապատասխան ցուցումներ՝ «Եթե ձեզ

տեղից շարժեն, վերադարձեք ելման դիրք: Մի ոտքը ետ դրեք և ձեզ ավելի կայուն կզգաք: Նա, ով կհոգնի, կարող է ասել «ստոպ»: Ժամանակ առ ժամանակ կարելի է մտցնել խաղի նոր տարբերակներ. հրել միմյանց՝ խաչելով ձեռքերը, հրել ընկերոջը միայն ձախ ձեռքով, մեջք-մեջքի հրել միմյանց և այլն:

Ցուցումներ

Անհրաժեշտ է հետևել, որ երեխաները միմյանց ցավ չպատճառեն և կարողանան արագ արձագանքել, երբ ընկերը խախտում է խաղի կանոնները: Ցանկալի է, որ երեխաներն ունենան նաև կարմիր քարտեր կամ որևէ այլ միջոց, որով կկարողանան դադար վերցնել, եթե այս կամ այն պատճառով «ստոպ» ասելու հնարավորություն չունեն (Ֆոպել, 1998):



Ծաղրածուները վիճում են

Նպատակ. նպաստել խոսքային ագրեսիայի լիցքաթափմանը և նվազեցմանը:

Ընթացք: Երեխաները դառնում են ծաղրածուներ, որոնք վիճում են՝ անվանելով միմյանց մրգերի և բանջարեղենի անուններով:

Օրինակ՝ «Դու,-ասում է ծաղրածուն,-կաղամբ ես»: Երեխաները կարող են ընտրել, փոխել խաղընկերներին, «կովել» իրար հետ կամ հերթով պարսավել բոլոր երեխաներին:

Մանկավարժը ղեկավարում է խաղը, կանգնեցնում այն, եթե օգտագործվում են անթույլատրելի բառեր կամ՝ ֆիզիկական ագրեսիա կիրառելու փորձ է արվում: Այնուհետև խաղը շարունակվում է՝ փոխելով երեխաների հուզական տրամադրվածությունը: Երեխաներին ասվում է, որ ծաղրածուները հիմա միմյանց անվանում են ծաղիկների անուններով. օրինակ՝ «Դու վարդ ես», «Դու զանգակ ես» և այլն: Մանկավարժը ուշադրություն է դարձնում, որպեսզի խոսքի հուզական հնչերանգը ևս փոխվի: Երեխաները նորից բաժանվում են զույգերի և անվանում միմյանց ծաղիկների անուններով:

Ցուցումներ

Խոսքային հաղորդակցման դժվարություններով երեխաներին անհրաժեշտ է տրամադրել համապատասխան նկարներով քարտեր (Данилина, Зедгенидзе, Стёпина, 2007):



Ոսկե ձկնիկ

Նպատակ. նպաստել ագրեսիվության հաղթահարմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Ընթացք

Երեխաները շրջան են կազմում՝ ամուր հպվելով միմյանց ուսերով, կոնքերով, ոտքերով, ձեռք-ձեռքի տված, ու դառնում են ձկնորսական ցանց: Երեխաներից մեկը, ով վարողն է, դառնում է ոսկե ձկնիկն ու կանգնում շրջանի մեջ: Նրա խնդիրը շրջանից դուրս գալն է, իսկ մյուսներինը՝ չթողնելը: Եթե ձկնիկը երկար ժամանակ չի կարողանում դուրս գալ, ապա մանկավարժը կարող է խնդրել երեխաներին օգնել ձկնիկին:



Փայտ ենք կոտրում

Նպատակ. նպաստել կուտակված բացասական հույզերի և ագրեսիայի լիցքաթափմանը: Հնարավորություն տալ խաղի միջոցով ելք տալու կուտակված ագրեսիային:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին հարցնում է՝ «Ձեզնից ո՞վ է գոնե մեկ անգամ փայտ կոտրել կամ տեսել, թե ինչպես են դա անում մեծերը: Ցույց տվեք, թե ինչպե՞ս պետք է բռնել կացինը: Ի՞նչ դիրքում պետք է լինեն ձեռքերը և ոտքերը: Կանգնե՛ք այնպես, որ ձեր շուրջը մի քիչ ազատ տարածք մնա: Պետք է փայտ կոտրենք: Գերանը դրեք գերանի վրա, բարձրացրեք կացինը և ամբողջ ուժով իջեցրեք այն: Կարող եք նույնիսկ գոռալ «հոպա»:

Խաղը անցկացնելու համար կարելի է բաժանվել զույգերի և որոշակի ռիթմով կոտրել մի-մի գերան (Фопель, 1998):



Տաշեղները լողում են գետում

Նպատակ. նպաստել ապրումակցման զարգացմանը, ագրեսիվության հաղթահարմանը, ոչ խոսքային հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. հանգիստ երաժշտություն:

Ընթացք

Երեխաները կանգնում են երկու շարքով՝ միմյանցից ձեռքի հեռավորության վրա. նրանք ավեր են: Երեխաներից մեկը «դառնում է տաշեղ»: Նա դանդաղ «լողում է» «ավերի» միջով: «Ավերը» մեղմ հպումներով օգնում են «տաշեղին»: Նրան մեղմ բառեր են ասում, դիմում անունով: «Տաշեղը» ինքն է ընտրում, թե ինչ արագությամբ շարժվի: Վարժությունը կարելի է անցկացնել բաց և փակ աչքերով:

Ցուցումներ

Գերզգայուն, հպումներից խուսափող, փակ տարածություններից վախ ունեցող երեխաների հետ խաղալիս անհրաժեշտ է ավելի մեծ հեռավորություն պահել ավերի միջև՝ չխախտելով երեխայի ապահովության գոտին:



Բուխ-տիբի-դուխ (Фопель К., 1998)

Նպատակ. նպաստել տրամադրության բացասական ֆոնի, ագրեսիվ ազդակների հաղթահարմանը:

Ընթացք

Մանկավարժը դիմում է երեխաներին հետևյալ խոսքերով՝ «Ես ձեզ գաղտնի հատուկ մի բառ կասեմ: Դա կախարդանք է վատ տրամադրության, վիրավորանքների և հիասթափությունների դեմ: Որպեսզի այն իրականում գործի, անհրաժեշտ է լուռ քայլել սենյակում՝ ոչ մեկի հետ չխոսելով: Հենց ցանկանաք զրուցել, կանգ առեք մասնակիցներից մեկի դիմաց, նայեք նրա աչքերի մեջ և երեք անգամ շատ զայրացած կրկնեք կախարդական բառը՝ «Բուխ-տիբի-դուխ»: Հետո շարունակեք քայլել սենյակում: Ժամանակ առ ժամանակ կանգ առեք մեկի դիմաց և նորից զայրացած ասեք կախարդական բառը:

Որպեսզի բառն ազդի, պետք է այն ասել դիմացինի աչքերի մեջ նայելով»:

Ցուցումներ

Խոսքային հաղորդակցման դժվարություններով երեխաների հետ աշխատելիս, «կախարդական խոսքերը» կարելի է գուգակցել «կախարդական շարժումներով», օրինակ՝ ոտքերը գետնին դոփել «բուխ-տիբի-դուխ» արտահայտության ռիթմով:



Սա ես եմ, ճանաչի՛ր ինձ

Նպատակ. նպաստել ապրումակցման զարգացմանը, ագրեսիայի հաղթահարմանը:

Ընթացք

Վարողը (խաղի սկզբում դա մանկավարժն է) կանգնում է մեջքով դեպի երեխաները և առաջարկում նրանցից մեկին մոտենալ ու հպվել իր մեջքին, շոյել ու ասել՝ «ես եմ»: Վարողը փորձում է գուշակել՝ ով իրեն շոյեց, գուշակված երեխան դառնում է վարող:



Քնքուշ թաթիկներ

Նպատակ. նպաստել ագրեսիվության հետևանքով կուտակված լարվածության լիցքաթափմանը, մկանային լարվածության լիցքաթափմանը, ագրեսիայի հաղթահարմանը:

Անհրաժեշտ նյութեր. մորթու կտոր, վրձին, ապակե սրվակ, ուլունքներ, բամբակ և այլ մանր առարկաներ:

Ընթացք

Մանկավարժն ընտրում է վեց-յոթ մանր առարկա: Այդ ամենը դրվում է սեղանին: Երեխային առաջարկվում է ձեռքը մինչև արմունկը բացել. դաստիարակը բացատրում է, որ ձեռքի վրայով քայլելու է «կենդանի» և դիպչելու է քնքուշ թաթիկներով, իսկ երեխան փորձելու է փակ աչքերով գուշակել, թե ինչ «կենդանի» է դիպել ձեռքին: Հայումները պետք է լինեն շոյող, հաճելի: Խաղը կարելի է զարգացնել՝ ասելով երեխային այն մասին, որ «կենդանին» հպվելու է այտին, ծնկին, ձեռքի ափին:

Ցուցումներ

Մթության վախ ունեցող երեխաները կարող են հրաժարվել փակել աչքերը: Նման դեպքերում կարող ենք երեխային առաջարկել ձեռքը պահել մեջքի ետևում և խաղալ բաց աչքերով:

Գերզգայուն երեխաները կարող են շատ կարճ ժամանակ հանդուրժել հպումները կամ չցանկանալ մերկացնել ձեռքը դաստակից վեր: Նման դեպքերում հպումներն անհրաժեշտ է սկսել երեխայի կողմից ընդունելի համարվող հատվածներից:

Խոսքային հաղորդակցման դժվարություններով երեխաները կարող են ոչ թե անվանել գուշակված առարկան, այլ, պարզապես՝ ցույց տան:



Թղթե գայրույթ

Նպատակ. նպաստել ֆիզիկական մակարդակում ագրեսիայի լիցքաթափմանը:

Անհրաժեշտ նյութեր. մեծ քանակությամբ թերթեր, թղթեր:

Ընթացք

Երեխաները բաժանվում են երկու խմբի և գծով շարվում: Մանկավարժը երեխաներին առաջարկում է իրավիճակ հիշել, երբ ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան իրենց խիստ գայրացրել է, այնուհետև վերցնել թերթը, գայրույթը փոխանցել թերթին (ճմրթել այնպես, որ դառնա պինդ գնդակ):

Մանկավարժի ազդանշանով երեխաները սկսում են գնդակներ նետել հակառակորդի ուղղությամբ: Ազդանշանը տրվում է խոսքային և ոչ խոսքային միջոցներով («պատրաստ, ուշադրություն, սկսեցինք» և դափի հարված կամ ծափ):

Երկու խմբերի խաղացողները ձգտում են իրենց կողմում հայտնված թղթե գնդակները որքան հնարավոր է արագ նետել հակառակորդի կողմը: Լսելով «Վերջ» կամ «Դադար» հրամանը՝ երեխաները պետք է դադարեն նետել գնդակները: Հաղթում է այն թիմը, որի տարածքում ավելի քիչ գնդակ կլինի:

Երկու խոյ

Նպատակ. նպաստել ոչ խոսքային ագրեսիայի լիցքաթափմանը:

Երեխային ընձեռել կուտակված զայրույթը և ագրեսիան ընդունելի կերպով արտահայտելու հնարավորություն:

Ընթացք

Մանկավարժը բաժանում է երեխաներին զույգերի և կարդում է տեքստը՝ «Մի անգամ երկու խոյ հանդիպեցին կամրջի վրա»: Խաղի մասնակիցները, ոտքերը լայն բացելով, առաջ բերելով մարմինը, հենվում են իրար ավերով և ճակատներով:

Խնդիրը՝

Դիմադրել միմյանց՝ տեղից չշարժվելով որքան հնարավոր է երկար: Կարելի է ասել նաև «բեեեե»: Անհրաժեշտ է հետևել «անվտանգության կանոններին», զգուշանալ, որ «խոյերը» ճակատները չվնասեն (Кряжева, Данилина, Зедгенидзе, Стёпина 2007; 1997):



Խնդրի խաղալիքը (խոսքային տարբերակ)

(Люткова, Мони́на, 2005)

Նպատակ. նպաստել վարքի ինքնակարգավորման հմտությունների ձևավորմանը, արդյունավետ հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր առարկաներ, խաղալիքներ:

Ընթացք

Խումբը բաժանվում է զույգերի, խաղընկերներից մեկը ձեռքն է վերցնում որևէ առարկա, օրինակ՝ խաղալիք, տետր, մատիտ և այլն: Մյուս խաղընկերը պիտի խնդրի այդ առարկան: Մանկավարժն առաջին մասնակցին տալիս է հետևյալ հրահանգը՝ «Դու ձեռքումդ պահում ես խաղալիքը (տետր, մատիտ և այլն), որը քեզ շատ պետք է, բայց այն պետք է նաև քո ընկերոջը: Նա քեզնից կխնդրի այն: Աշխատի՛ր խաղալիքը քեզ մոտ պահել և տալ միայն այն դեպքում, եթե դու իրոք կցանկանաս տալ: Երկրորդ մասնակիցը ստանում է հետևյալ հրահանգը՝ «Ընտրելով անհրաժեշտ բառերը՝ աշխատի՛ր խնդրել

խաղալիքը այնպես, որ այն քեզ տան»: Այնուհետ՝ առաջին և երկրորդ մասնակիցները փոխվում են դերերով:

Ցուցումներ

Խոսքային հաղորդակցման դժվարություններով երեխաների հետ աշխատելիս ցանկալի է կիրառել նույն խաղի ոչ խոսքային տարբերակը:



Խնդիր խաղալիքը (ոչ խոսքային տարբերակը)

(Лютова, Мони́на, 2005)

Նպատակ. նպաստել վարքի ինքնակարգավորման հմտությունների ձևավորմանը, արդյունավետ հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Ընթացք

Խաղն անցկացվում է նախորդի նման, բայց հաղորդակցման ոչ խոսքային միջոցների օգտագործմամբ (դիմախաղի, ժեստերի, հայացքի հեռավորության և այլն):

Խաղի երկու տարբերակներն էլ անցկացնելուց հետո (*խոսքային և ոչ խոսքային*) կարելի է քննարկել վարժությունը: Երեխաները, ցանկության դեպքում, կարող են կիսվել իրենց տպավորություններով և պատասխանել հարցերին:

«Ե՞րբ էր ավելի հեշտ խնդրել խաղալիքը» (կամ այլ առարկա), «Ե՞րբ դու իրոք ցանկացար այն տալ», «Ի՞նչ բառեր պիտի ասվեր» և այլն:

Խաղը կարելի է կրկնել մի քանի անգամ (տարբեր օրերի): Այն օգտակար կլինի հատկապես այն երեխաներին, որոնք հաճախ են կոնֆլիկտ ունենում հասակակիցների հետ:



Վիշապ

Նպատակ. նպաստել սեփական գործողությունները վերահսկելու հմտության զարգացմանը: Նպաստել հաղորդակցման հմտությունների զարգացմանը, կուտակված լարվածության և ագրեսիվ ազդակների լիցքաթափմանը:

Ընթացք

Խաղացողները շարվում են գծով՝ բռնվելով միմյանց ուսերից: Առաջին մասնակիցը «գլուխն է», վերջինը՝ «պոչը»: «Գլուխը» պիտի ձգվի և հասնի «պոչին» և կպչի նրան: Վիշապի «մարմինը» անբաժան է: Հենց որ «գլուխը» բռնում է «պոչը», այն դառնում է «պոչ»: Խաղը շարունակվում է այնքան, մինչև բոլոր մասնակիցները կլինեն երկու դերերում:



Աչք -աչքի

Նպատակ. նպաստել ապրումակցման առաջացմանը, համերաշխության մթնոլորտի ձևավորմանը:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխաներին բռնել իր կողքին նստած երեխայի ձեռքերը, նայել միմյանց աչքերի մեջ և, զգալով ձեռքերը, փորձել լուր փոխանցել տարբեր վիճակներ. «Ես տխուր եմ», «Ես ուրախ եմ, արի խաղանք», «Ես զայրացած եմ», «Չեմ ուզում ոչ մեկի հետ խոսել» և այլն:

Խաղից հետո քննարկեք երեխաների հետ՝ ինչ վիճակներ էին փոխանցում, դրանցից որոնք էին հեշտ գուշակել, իսկ որոնք՝ դժվար:

Ցուցումներ

Բոլոր այն դեպքերում, երբ երեխան այս կամ այն պատճառով խուսափում է տեսողական կոնտակտից կամ չունի ակտիվ դիմախաղ, կարող ենք նրան տրամադրել տարբեր հույզեր և իրավիճակներ արտահայտող նկարներ, որոնք կօգնեն հաղորդակցվել ընկերոջ հետ:



Նապաստակներ

Նպատակ. նպաստում է ազատվել ագրեսիայի հետևանքով առաջացող մկանային լարվածությունից, ընդունելի տարբերակով ագրեսիայի լիցքաթափմանը, ռեֆլեքսիայի զարգացմանը:

Ընթացք

Մանկավարժը խնդրում է երեխաներին իրենց որպես ուրախ նապաստակներ պատկերացնել կրկեսում, որոնք նվագում են

երևակայական թմբուկների վրա: Նրանք նկարագրում են ֆիզիկական գործողությունների բնույթը՝ ուժը, տեմպը, սրությունը, և երեխաների ուշադրությունն ուղղվում է առաջացող մկանային և հուզական զգացումների գիտակցման և համեմատման վրա. «Օ՛, ինչքան ուժեղ են նապաստակները խփում թմբուկներին: Իսկ դուք զգո՞ւմ եք, ինչքան են լարված նրանց թաթիկները: Զգո՞ւմ եք՝ թաթիկները ի՞նչ պինդ են, չեն ձկվում, կարծես փայտիկներ լինեն: Զգո՞ւմ եք, թե ինչպես են լարվել ձեր ձեռքերի, ուսերի մկանները: Իսկ ահա դեմքը՝ ոչ: Այն ժպտում է՝ ազատ, թուլացած: Եվ փորիկն էլ է թուլացած, շնչում է: Իսկ բռունցքները լարված խփում են: Հիմա եկեք շատ ուժեղ ու արագ հարվածենք: Իսկ հիմա՝ ավելի դանդաղ ու հանգիստ: Ապրեք: Իսկ հիմա նապաստակները խորը շունչ են քաշում ու մի քիչ հանգստանում են»:



Փոքրիկ ուրվական

Նպատակ. նպաստել կուտակված ագրեսիայի լիցքաթափմանը ընդունելի եղանակներով: Նպաստել մկանային լարվածության լիցքաթափմանը:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխաներին փոքրիկ, բարի ուրվականների դեր խաղալ և մի քիչ չարաճծություններ անել. «Իմ ծափով դուք պիտի այսպիսի շարժում անեք *(մանկավարժը բարձրացնում է ձեռքերը՝ արմունկները ծալած և մատերը չոկած վիճակում)* և վախենալու ձայնով ասացե՛ք «ուուուու՛ւ»: Եթե ես թույլ ծափ տամ՝ ցածրաձայն կասեք «ուուուու՛ւ», եթե ուժգին ծափ տամ՝ բարձրաձայն կասեք: Բայց հիշեք, որ մենք բարի ուրվականներ ենք և ցանկանում ենք միայն թեթևակի կատակել:

Ուժգին և թույլ ծափերի մի քանի հերթագայումից հետո մանկավարժը ծափ է տալիս ու առաջարկում երեխաներին նորից կերպարանափոխվել ու դառնալ երեխաներ. «Դե ինչ, չարաճճի

ուրվականներ, կատակեցինք և բավական է: Հիմա եկեք նորից երեխաներ դառնանք, խորը շնչենք, դանդաղ արտաշնչենք: Ապրեք»:



Բղավուկներ-շնչուկներ-լուկներ

Նպատակ. նպաստել կամային որակների, վարքի ինքնավերահսկման, ըստ կանոնի գործելու կարողությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. երեք գույնի ստվարաթղթից (կարմիր, դեղին, կապույտ) պատրաստված ձեռքի փիի երեք շաբլոն:

Ընթացք

Մանկավարժը երեխաներին ներկայացնում է ձեռքի երեք շաբլոնների գունային նշանակությունը: Կարմիրը բղավուկն է: Երբ բարձրացվում է բղավուկը, երեխաները կարող են բղավել, վազվզել, աղմկել: Դեղինը շնչուկն է: Երբ բարձրացվում է դեղինը, երեխաները կարող են լուռ տեղաշարժվել, հանգիստ շրջել և քշփչալ, շուկով խոսել: Կապույտը լուկն է: Երբ այն բարձրացվում է, երեխաները պետք է կանգնեն իրենց տեղում կամ պառկեն գորգին ու քարանան՝ պահպանելով լուրջություն: Ձեռքերի շաբլոնների ներկայացման հաջորդականությունը կարելի է փոփոխել, սակայն, անհրաժեշտ է խաղն ավարտել ձեռքի կապույտ շաբլոնով («Լուկով») (Старорусская, Мальцева, Вьюгова., Долгорукова 2018):



Զրույց ձեռքերի հետ

Նպատակ. նպաստել սեփական վարքի վերահսկման կարողությունների զարգացմանը, ագրեսիվ վարքի հնարավոր հետևանքների գիտակցմանը:

Անհրաժեշտ նյութեր. A4 ֆորմատի թղթեր, գունավոր մատիտներ:

Ընթացք

Օգնեք երեխային թղթի վրա ուրվագծել իր ձեռքի փերը, այնուհետև կենդանացնել դրանք՝ աչքեր, քիթ, բերան նկարելով, մատները գունավորելով: Այնուհետև առաջարկեք մի քիչ զրուցել ձեռքերի հետ: Հարցրեք. «Ու՞մ ձեռքերն եք, ի՞նչ եք սիրում անել, ի՞նչ չեք սիրում,

ինչպիսի՞ն էք դուք»: Եթե երեխան չի միանում զրույցին, ապա ինքներդ վարեք այն: Կարևոր է նշել, որ ձեռքերը լավն են (բարի են, հոգատար և այլն), նրանք շատ բաներ են կարողանում անել (թվարկեք դրանք), բայց երբեմն չեն ենթարկում իրենց տիրոջը (թվարկեք դրանք): Խաղը պիտի ավարտվի ձեռքերի և դրանց տիրոջ միջև «պայմանագրի կնքմամբ»: Թող ձեռքերը խոստանան, որ սահմանված ժամկետի ընթացքում (ժամկետների սահմանումը կատարվում է անհատական կարգով՝ ելնելով կոնկրետ երեխայի կամ իրավիճակի առանձնահատկություններից) նրանք կաշխատեն միայն լավ, բարի գործեր անել. կառուցել, ողջունել, օգնել, խաղալ, շոյել, գրկել և այլն (կախված կոնկրետ իրավիճակից՝ նշվում են անցանկալի վարքի դրական այլընտրանքները):

Եթե երեխան համաձայնում է նման պայմաններին, սահմանված ժամկետներում ևս մեկ անգամ խաղում եք խաղը, երկարացնում «պայմանագրի» ժամկետը՝ գովելով և խրախուսելով հնազանդ ձեռքերին և նրանց տիրոջը:

Ցուցումներ

Խաղը կիրառելի է հատկապես այն դեպքերում, երբ երեխան որևէ մեկին նեղացրել է, հարվածել, ցավեցրել և այլն: Խոսքային հաղորդակցման դժվարություններով երեխաներին կարելի է առաջարկել նաև համապատասխան գործողությունների նկարներ, որոնց միջոցով նա կկարողանա «պատմել» ձեռքերի ընդունելի և անընդունելի արարքների մասին:



Մոծակների որս

Նպատակ. նպաստել մկանային լարվածության և ագրեսիայի լիցքաթափմանը, սեփական գործողությունները վերահսկելու հմտության զարգացմանը:

Ընթացք

Մանկավարժն առաջարկում է երեխաներին պատկերացնել, որ ամառ է, պատուհանի օդանցքը բաց է մնացել, և շատ մոծակներ են լցվել

սենյակ: Այնուհետև մանկավարժի «սկսեցինք» հրահանգով երեխաները սկսում են որսալ/բռնել մոծակներին: Մանկավարժը դանդաղ կամ միջին տեմպով օդում քառասային շարժումներ է կատարում՝ սեղմելով և թուլացնելով բռունցքները հերթականությամբ և միաժամանակ: Յուրաքանչյուր երեխա մոծակ է բռնում իր տեմպով և իր ռիթմով՝ չդիպչելով նրան, ով իր կողքին է նստած կամ կանգնած:

Ցուցումներ

Խաղը կարելի է անցկացնել ինչպես նստած, այնպես էլ կանգնած տարբերակներով: Խաղն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով կարող ենք առաջարկել վազվզել ու բռնել մոծակներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրան, որ երեխաները հարվածներ չհասցնեն միմյանց, չվնասեն և չվնասվեն:



Լսիր ծափերը

Նպատակ. նպաստել կուտակված բացասական էներգիայի լիցքաթափմանը, սեփական գործողությունները և շարժողական ակտիվությունը վերահսկելու կարողությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. դափ կամ սուլիչ:

Ընթացք

Երեխաները քայլում են շրջանով կամ շարժվում են սենյակում՝ ազատ ուղղությամբ: Երբ վարողը մեկ անգամ հարվածում է դափին, երեխաները պետք է կանգ առնեն և ընդունեն «արագիլի» դիրք (*կանգնել մեկ ոտքի վրա՝ ձեռքերը տարածած*) կամ մեկ այլ դիրք, որի մասին նախապես կտեղեկացվեն: Եթե վարողը երկու անգամ է հարվածում դափին (կամ սուլում), ապա երեխաները ընդունում են «գորտի» դիրք (կիսանստել, թաթերը միասին, թաթերի ծայրերը և ծնկները տարբեր կողմեր, ձեռքերը թաթերի միջև՝ հատակի վրա): Դափի երեք հարվածի դեպքում երեխաներն սկսում են նորից քայլել: Հարվածների հաջորդականությունը կարելի է փոփոխել՝ կախված երեխաների մասնակցությունից, ակտիվությունից և տեմպից:

Ցուցումներ

Խոսքային ընկալման, լսողության հետ կապված խնդիրներով երեխաների հետ աշխատելիս ցանկալի է ունենալ նաև համապատասխան կենդանիների նկարներով քարտեր և սկզբնական շրջանում օգտագործել դրանք՝ դափի հարվածներին զուգահեռ: Եթե խմբում կան շարժողական ոլորտի խանգարումներ ունեցող ԿԱՊԿ ունեցող երեխաներ, ապա ընտրում ենք այնպիսի կենդանիներ, որոնց բնորոշ շարժումները ցուցադրելիս՝ երեխաները սահմանափակված չլինեն իրենց գործողություններում:



Խոսի՛ր

Նպատակ. նպաստել ինքնաբուխ գործողությունները, սեփական վարքը վերահսկելու հմտությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. տարբեր առարկաների, կենդանիների նկարներ, «խոսի՛ր» հրահանգն արտացոլող նկար:

Մանկավարժը նախապես տեղեկացնում է երեխաներին այն մասին, որ ինքը հեշտ և դժվար հարցեր է տալու, սակայն երեխաները դրանց կարող են պատասխանել միայն այն ժամանակ, երբ կլսեն «խոսի՛ր» հրահանգը:

Ցուցումներ

Խոսքային ընկալման, լսողության խանգարումներ ունեցող ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատելիս «խոսի՛ր» հրահանգը, ինչպես նաև տրվող հարցերը զուգակցվում են համապատասխան նկարների ցուցադրմամբ: Խոսքային հաղորդակցման դժվարություններով երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է երեխաներին տրամադրել համապատասխան նկարների հավաքածու, որից նրանք կկատարեն իրենց ընտրությունն ու կցուցադրեն այն «խոսի՛ր» հրահանգից հետո:



Ճնճդուկակոիվ

Նպատակ. ֆիզիկական ազդեցիկայի, մկանային լարվածության լիցքաթափում:

Ընթացք

Երեխաները ընտրում են խաղընկեր և վերածվում կովարար «ճնճդուկների» (*կքանստում են՝ ձեռքերով գրկելով ծնկները*): «Ճնճդուկները» կողքով թռչկոտում են իրար մոտ, հրում իրար: Երեխաներից նա, ով ընկնի կամ ծնկներից վերցնի ձեռքերը՝ խաղից դուրս է գալիս: «Կռիվները» սկսում և ավարտվում են մանկավարժի ազդանշանով:



Խաղալիքը տալիս եմ նրան, ով...

Նպատակ. նպաստել վարքի ինքնաբուխ դրսևորումների, ակտիվության վերահսկման, վարքի ինքնակարգավորման հմտությունների զարգացմանը:

Անհրաժեշտ նյութեր. որևէ խաղալիք (արջուկ, տիկնիկ, նապաստակ):

Ընթացք

Խաղն առաջարկվում է այն դեպքերի համար, եթե երեխաների ակտիվությունը կամ վարքը վերահսկելու դժվարություններ կան: Մանկավարժը վերցնում է որևէ խաղալիք (օրինակ՝ արջուկ, տիկնիկ, նապաստակ) և ասում. «Ով հանգիստ իր տեղում կանգնի, նրան էլ կմոտենա արջուկը», «Ով արագ նստի իր տեղը», «Ով արագ հավաքի խաղալիքները» և այլն: Այնուհետև առանց շտապելու մոտենում է երեխաներին և ասում. «Դե՛, տեսնենք՝ ո՞վ է անշարժ պահում իր գլուխը, արջուկ՝ ջան» կամ «Ո՞ւմ ձեռքերն են հանգիստ դրված ծնկներին», «Ո՞վ չի խոսում» և այլն (կամ նկարագրում է տվյալ իրավիճակին համապատասխան այլ մանրամասներ): Այնուհետև տալիս է խաղալիքը այն երեխային, որը փորձում էր իրեն «հանգիստ» պահել: Եթե երեխաները մի քանիսն են, ապա նախքան խաղալիքը նրանցից մեկին տալը, մանկավարժն ասում է այն մասին, որ նա, ում կընտրի արջուկը, պետք է շարունակի խաղը:



Քամի են դառնում և սրբիչն այս ու այն կողմ թափահարում

Նպատակ. նպաստել ազդեսփություն, նյարդայնության, կոնֆլիկտայնության հաղթահարմանը, սեփական գործողությունները վերահսկելու հմտությունների զարգացմանը, նպաստել մկանային լարվածության լիցքաթափմանը:

Անհարժեշտ նյութեր. փափուկ կամ նուրբ որակի կտոր:

Ընթացք

Խաղն սկսում է մանկավարժը՝ երեխաներին նախապես ներկայացնելով խաղի կանոնները. «Ես չար քամի կլինեմ, իսկ դուք՝ մեղուներ: Ես կնստեմ աթոռին ու «կխայթեմ» ձեզ, իսկ դուք կվազվզեք և կփորձեք բարկացնել ինձ: Եթե ինձ հաջողվի ձեզնից որևէ մեկին «խայթել» (սրբիչով դիպչել), ապա նա, ում խայթեցի, կհաշվի մինչև 10-ը, և մենք դերերով կփոխվենք»:



Ցուցումներ

Եթե երեխաները դեռ չեն կարող հաշվել մինչև տասը, ապա մանկավարժը հաշվում է, իսկ երեխան հաշիվը ուղեկցում է ծափերով: Երեխաներին նախապես կարևոր է տեղեկացնել, որ այս խաղը խաղալիս քամին (վարդը) չպետք է դուրս գա շրջանից, իսկ մեղուները չեն կարող բարկացնել չար քամուն վիրավորական բառերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանուկյան Ա.Տ Նախադպրոցական տարիքի երեխաների վախերի հաղթահարման խաղեր և վարժություններ: Ուսումնամեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար /Ա.Տ.Մանուկյան. Եր. Հեղ. հրատ. 2019թ., 65 էջ:
2. Մանուկյան Ա.Տ, Սվաջյան Ա.Հ, Ինչպես կարգավորել երեխայի վարքը, չանտեսելով նրա առանձնահատկությունները: Մեթոդական ուղեցույց :-Եր., ՀՄԿ, 2020յ-43 էջ:
3. Бреслав Г.М. (2007). Эмоциональные особенности формирования личности в детстве. М., 2007, 144 с.
4. Данилина Т.А., Зедгенидзе В.Я., Стёпина Н.М. (2007). В мире детских эмоций. Пособие для практических работников ДОУ. – М.: Изд «АЙРИСпресс», 160 с.
5. Ежкова Н.С. (2010). Эмоциональное развитие детей дошкольного возраста. Пособие для педагогов дошкольных учреждений, Часть 1, ISBN: 978-5-691-01817-6, ВЛАДОС, 130 с.
6. Кряжева Н. Л. (1996). Развитие эмоционального мира детей. Популярное пособие для родителей и педагогов. Ярославль: Академия развития, 208 с.
7. Лютова Е.К., Моница Г.Б. (2005). Шпаргалка для взрослых: Психокоррекционная работа с гиперактивными, агрессивными, тревожными и аутичными детьми. М.: Генезис, 144с.
8. Молдабекова С. К., Коверчик К. В. (2012). Методический сборник занятий, игр и упражнений, направленных на развитие эмоционально-волевой сферы детей дошкольного возраста. Кокшетауский государственный университет имени Ш.Ш.Уалиханова, 26 с.
9. Панфилова М. А. (2006). Тревожность и её коррекция у детей // Школа здоровья. 67с.

10. Романов А.А. (2000)» Направленная игротерапия нарушений поведения и эмоциональных расстройств у детей (дошкольного и младшего школьного возраста). Набор диагностических и терапевтических методик. М., "Принт", 65 с.
11. Старорусская Е.С., Мальцева О.С., Вьюгова С.Ю., Долгорукова М.Л. З. (2018). Наши дети агрессия и тревога, что делать., г. Екатеринбург, 2-е издание пересмотренное, исправленное., 24 с.
12. Хухлаева О.В. Практические материалы для работы с детьми 3-9 лет.
13. Odom, S. L., & Diamond, K. E. (1998). Inclusion of young children with special needs in early childhood education: The research base. ECRQ, 13(1), 3-25

Վերջաբանի փոխարեն

Այսպիսով, նշված բազմաթիվ խաղերի ու վարժությունների կիրառումը չափազանց արժեքավոր կլինի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական կրթության իրականացման գործընթացում: Եթե խմբում լինեն լսողության, տեսողության, մտավոր/ինտելեկտուալ, շարժունակության, հոգեբանական կամ խոսքի հետ կապված տարբեր աստիճանների դժվարություններ ունեցող սաներ, ըստ ձեռնարկում ներկայացված բաժինների, մանկավարժները կարող են ընտրել համապատասխան խաղեր և կիրառել դրանք, որի շնորհիվ էլ առավել արդյունավետ կլինի ներառման գործընթացը, ինչպես նաև՝ դրանք բավականին կհեշտացնեն մանկավարժի աշխատանքը: Ձեռնարկի առաջին հատվածում ներկայացված են այնպիսի խաղեր և վարժություններ, որոնք միտված են խմբում ընդգրկված տարբեր ազգությունների, մշակույթների պատկանող սաների ներառմանը: Այս խաղերը երկուստեք նպաստավոր ուսուցողական և ճանաչողական արժեք ունեն, քանի որ երեխաները հենց մանկուց հնարավորություն կունենան ծանոթանալ այլ մշակույթներին, սովորույթներին, լեզվական միավորներին, որն էլ կնպաստի նրանց աշխարհայացքի ձևավորմանն ու ընդլայնմանը: Հարկ է նշել, որ հեղինակների կողմից ներկայացված բոլոր խաղերն ու վարժությունները նախապես գործնականում կիրառված և փորձարկված են: Միննույն ժամանակ մանկավարժները կարող են ազատ լինել՝ ըստ անհրաժեշտության փոփոխություններ և հարմարեցումներ կատարելու, ինչու չէ նաև՝ սեփական տարբերակները մշակելու և ստեղծագործելու գործընթացներում:

Մաղթում ենք արդյունավետ և հետաքրքիր աշխատանք: